



ԻՐԱՎ

ՊԱՇՏՈՆՎԱԹԵՐԹ
ԼԱՏԻՒՐՉՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՒ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ՕԲ-ՏԵՐԻ

Ա. Գ.

1978



Պօլու Շահաբեր
19-2 1995
Եղիշակ Խ

ՍԻՈՆ

ԾՐ. ՏԱՐԻ - ՆՈՐ ԾՐՁԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

1978 ՅՈՒՆՈՒՆ - Մարտ թիւ 1 - 3

1978 January - March No. 1 - 3

S I O N

VOL. 52

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐք ՅՈՐ ԺՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Բ Ե Թ Պ. Ե Հ Է Մ Ի Ս Ո Ւ Ր Բ Ա Ց Ր Ե Ն

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ Հ Ա Ց Ո Յ

ՈՐ ՑԵՐՈՒՍԱՂԵՄ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱԲՀ

Կը խօսիմ ձեզի թերդեհեմի մեր Տիրոջ Ծննդեան սրբա-
վայրեն, ուր մօտ երկու հազար տարիներ առաջ ծնաւ աշխարհի
Փրկիչը: Աստուածային մանուկը որ վերստին կը ծնի մեր հոգի-
ներուն մէջ, խորհուրդն ու մարմնառութիւնն է սիրոյ եւ խաղա-
ղուրեան, ինչպէս յայտնեցին հրեշտակները ծննդեան սրբազն
գիշերուան մէջ:

Սէրեն ու խաղաղութիւնը երկուորեակ զգացումներ եւ իրո-
ղութիւններ են, զիրար կանչող եւ ամրողացնող: Միրել, ազա-
տազրել է մարդը, վերածելու զայն հրեշտակի մը՝ որուն մէջ եր-
կիրն ու երկինքը հաշտուիլ կարենային: Անձնափրութիւնը, որ-
կրածէս ցանկութիւնները ազգերու, հասարակաց պարտութենէն
վերջ, հարիւրապատկած են առելութիւնը ժողովուրդներու մի-
ջեւ: Գժուութիւնը շարիք մըն է, պատերազմը՝ ոնիր, իբրեւ ամե-
նէն անզութ յայտնութիւնը ատելութեան: Երբ օր մը զոհերը կա-
րենան գրալ իբենց դահիններուն, այն առեն մեր բնուրեան եւ
լիշտնի ցաւագին աղջէն պիտի կրնայ բխիլ սիրոյ եւ խաղաղու-
թեան զարունը:

Այսօրուան բաղաբակիրը կոչուած աշխարհը նորէն կը
քննայ շառաչիւնովը փլատակներուն: Մարդիկ ատելութեան եւ
քոյներու գիտովութեան մէջ ինքզինքնին կ'սպառեն, որոշելու հա-
մար քէ ո՞վ պիտի ունենայ աւելի մեծ ածու մը եւ խոշոր քանկ մը:

Բանականութիւնը, մեր օրերու գիտութիւնը չկրցին կըշ-
տացնել հոգին: Համբեցինք աստղերը, կապեցինք աշխարհները
զաղափարներու մետափ թելերով, բայց իրերը յամաօրէն մինա-
ցին միշտ նոյն: Փորձեցինք արուեստը, բայց մեր կարողութիւն-
ները յուսահասութեան տարին մեզի, վասնզի բացարձակը, որուն
սեւեռուեցան մեր աչքերը, ձեւերու մէջ կարելի չէ ամփոփել:

Սիրել կը նշանակէ յաւերժութիւնը գրաւել եւ լիցնել զայն: Աստուած միայն կրնայ վերջացնել ինչ որ սէրը կ'սկսի: Այս անհա-
ռելի սիրոյն է որ կ'ակնարկէ առաքեալը, երբ կ'ըսէ. «Երէ մարդ-
կային բոլոր լեզուները խօսիմ և հրեշտակներու բարբառն ալ հաս-
կընամ, երէ սէր չունենամ» ոչինչ եմ»:

Մարդկութիւնը պէտք ունէր այս գիշեր մարմին առած սի-
րոյ իշխանին, աշխարհը տաքցնող Սուլը Հոգիին, որ կրակի պիտի
վերածէր մեր կաւը, պղտոր եւ գունատ մեր խորհուրդներուն

պարզեւելու ստեղծումին հրաշքը։ Հոգին որ չի գար մեզի այս աշխարհի ուժերէն, որ յաւերժական ժայրքն ու բխումն է լոյսի եւ սիրոյ, որ մեզի կը բերէ հաւաստիքը թէ մարդուն տրուած է այլեւս իր կեանքը այլակերպելու, պայծառակերպելու աստուածայինին մէջ եւ զայն տանելու յաւերժին։

Խոկ խաղաղութիւնը պատուղն է սիրոյ։ Աշխարհը միշտ սուրբի եւ հերոսի լուսապակներով պատուեր է խաղաղութեան առաքեալները։ Անոնք մեր օրերու բառով կոչուին բարեկարգիչ, եղբայրութեան ժարող կամ առաքինութեանց ասպետ, մարդեր են որոնք կը չանան մեղմեն մեր ներքին բոնկումները եւ կարելի հաւասարակշուութեան իջեցնել պատճառները՝ որոնք զմեզ իրարուդէմ կը զիմեն։ Այդպիսիներուն է որ կ'ակնարկէ մարդարէն, երբ կ'ըսէ. «Երբեւ զի գեղեցիկ են ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւուն խաղաղութեան»։


Գիտեմ թէ դուն կը հաւատաս, հաւատացած ես միշտ, ժողովուրդ Հայոց, արդարութեան, սիրոյ, խաղաղութեան եւ անոնց փրկարար փառքին։ Քու պատմութիւնդ արճազեղ եւ հսկայամարտ ժերթուածն է այդ խոյանքին։ Դուն կրցար ինքինքդ ըլլալ, ու յարասեւել, որովհետեւ հաւատացիր թերդեհեմի խորհուրդին եւ ամէն տարի մանկացեալ Աստուծոյ ենտ կրցար մայրացնել քու հոգիդ։

Ինչ փոյք զառանցանքը մարդերու, շառաչիւնը կործանումներու, պաշտամունքը ուժին եւ մամոնային։ Մենք կը հաւատանք որ իր տիեզերական սէրը, ցանուած մարդոց հոգիներուն մէջ, կ'անի ու կը մեծնայ ամէն օր, ըլլալու հսկայ ծառը եղբարութեան, իր հովանինին ներքեւ առնելու ամբողջ մարդկութիւնը՝ համաձայն իր պատգամին։

Խաղաղութեան իդաերու եւ ուազմաշունչ կիրքի խառնուրդ մըն է կեանքը, եւ ասոր համար թերեւս գեղեցիկ։ Բարիին ու չարին հսկամարտութեան հանդէսն է անիկա, ուր արդարութիւնը իր ուժը կը փորձէ ամէն ժայլափոխին, հակառակ իր առջեւ ցցուող արգելքներուն։ Յամբ բայց ամուր զնացքով մարդկութիւնը դէսի տնարին պատերազմ, այսինքն կենդանի խաղաղութեան կ'երթայ, ցից ու դերբուկ ուղիներով։

Ժողովուրդ Հայոց որ ի սփիւս աշխարհի, նուիրական այս գիշերով կեցած Սուրբ Ծննդեան վեհավայրին մէջ, ժեզի կը փոխանցեմ աւետիսը, որուն հաւատքը հասն դարերէ ի վեր կը լիցընէ եւ կը զօրացնէ մեր քրիստոնէական կեանքը։ Զայն ժեզի կը փոխանցեմ նոյնութեամբ, իրեւ Տիրոջ արիւնով թարախուած աշխարը։

Աղօրենք ի սրտէ, որ թերդեհեմի երկնելին վրայ յայտնրած աստղին լոյսովը լուսաւորուին աշխարհի դեկավարներուն միտքերը, տեսնելու համար խաղաղութեան իրական համբան, որպէսզի կարելի ըլլայ սէրն ու խաղաղութիւնը հաստատել այս երկրի վրայ, Աստուծոյ փառքին և մարդերու բարիքին համար։ Ամէն։



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ս. Էջմիածին, Ս. Դնունի 1978

Նորին Ամենապատութիւն

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտերանին

Պատրիարք Երուսաղէմի Հայոց

Ե Ր Ո Ւ Ա Պ Է Մ

«ՔՐԻՍՏՈՍ ԽՆԱԻ ԵՒ ՑԱՑՏՆԵՑԱԻ»

Սիրեցեալ Սրբազն Եղբայր,

Մայր Արռո Սուրբ Էջմիածնից Նոր Տարւոյ այս լուսարացին, երջանիկ ենք Ձերդ Ամենապատութեան վերստին բերելու ժաղցը աւետիսը աշխարհի Փրկչի Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծրննիդեան, Մեր սրտից բխած ամենաքարի մադրանիներով հանդերձ ուղղեալ Ձերդ Ամենապատութեան, Սուրբ Արռոիդ գինուրեալ Մեր միակներին:

Սուրբ Ծրննիդեան լոյսերով եւ շնորհներով, քող մի անգամ եւս լցուեն Ձեր աղօք-քի տները եւ հոգիները բոլոր հայ հաւատացեալների, յառաւել շինութիւն եւ պայծառացում մեր ազգի հոգեւոր ու մշակութային կեանքի:

Այսօր, համայն մարդկութեանը բաշխուող սիրոյ եւ խաղաղութեան երկնային պատգամը, քող առաւել ոգեշնչի աշխարհի մարդկային եւ Նոր Տարին քող առաւել ամրապնդի բարի համեցողութեան ու խաղաղ գործակցութեան յարաբերութիւնները պետութեանց եւ ժողովուրդների միջեւ:

Ի սրտ մադրում ենք Ձեզ տոկում առողջութիւն երևար արեւոս տարիներով ու հոգեշնճ փայլուն իրազործումներով ի փառս մեր Սուրբ Եկեղեցու:

Եղբայրական սիրով ի Փրկիչն մեր Քրիստոս Յիսուս՝

Վ. Ա. Զ. Գ. Է. Ա.

ԿԱԹՈԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Անքիլիս, 22 Դեկտ. 1977

Ամենապատիւ

S. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Պատրիարք Հայոց Երուսաղեմի

Ե Ր Ո Ւ Ս Ա Կ Ե Մ

Սրբազն Եղբայր,

Յառաջիկայ Ամանորի եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով Զերդ սիրելի Սրբազնութեան կը յայտնենք Մեր սրտակից մադրանքները բազառող կեանքի, երգանկալից գահակալութեան եւ բեղուն գործունեութեան:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ մարմնացեալն Փրկիչ որ իր խաղաղութեան լոյսը առատօրէն հեղու ամենայն աշխարհի վրայ, բոլոր ազգերու եւ մարդերու հոգիներուն մէջ, եւ մեր Հայ ժողովուրդին ու Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պարզեւէ պայծառութեան, բարգաւաճման նոր շրջան մը սիրոյ, միութեան եւ եղբայրութեան բարիքներով առլցուն:

Աղօթակից

Մնամք եղբայրական սիրոյ ողջունիւ,

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ

ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍ

Խ Ո Ր Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Lambeth Palace, SE1 7JU

CHRISTMAS 1977

Your Holiness,

Beloved Brother in Christ

"O come let us adore him, Christ the Lord"

These words form part of the chorus of one of the hymns most often sung by the faithful of the Church of England in the Christmas season. They echo the words of the shepherds to each other after the good news of the birth of Jesus Christ had been announced to them by an angel: "Let us now go even unto Bethlehem and see this thing which has come to pass". (St. Luke 2:15)

The Evangelist St. Luke goes on to describe how the shepherds hastened to Bethlehem and found there Mary and Joseph and the Child who had been born to them. St. Matthew in his narrative describes the visit of those who are traditionally called the "wise men from the east" who came to Jerusalem seeking their new King, for, as they said, "we have seen his star in the east and are come to worship him". (St. Matthew 2:2)

So it is that people poor and rich, old and young, throughout the Christian era have heard the news of the birth of their Saviour with delight, and have hurried to adore the Infant born for them in Bethlehem. Their desire to worship may lead them to make a long pilgrimage or they may join in adoration with other faithful believers nearer home. Wherever they may be, their joy is the same.

As the time of the celebration of the birth of the Christ-child arrives again, we greet you Your Holiness in the joy of celebration. We pray that this joy may not be ours and yours only as we kneel in adoration at the crib of Jesus, the Babe of Bethlehem, but may continue with us and the faithful of our Churches in the year which lies ahead. May this year be in a special way a year of the Prince of Peace and may His peace be seen throughout the world which He came to save.

With warmest greetings in His Name,

Your affectionate Brother in Christ,

DONALD CANTUAR

Archbishop of Canterbury

Primate of All England and Metropolitan

His Holiness Yeghishe Derderian,
Armenian Patriarch of Jerusalem,
P. O. Box 14001,
Jerusalem, Israel

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Կեդրոնական Վարչական Ժողով

Նիւ Եպք, Դեկտ. 12. 1977

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Ե Ր Ո Ւ Ս Ա Կ Ե Մ

Ամենապատիւ Մըրազան Հայք,

Անցնող տարուան բաղդաւորութիւններէն մէկն ալ Զերդ Մըրազնութեան օրինարեր այցն էր մեզի, որուն ընթացքին աւելի մօտէն իրազեկ գարձանք Երուսաղէմի մեր Պատրիարքութեան ներքին կեանքին եւ իրազորդումներուն:

Երբ կը պատրաստուինք Ձեզի յդելու տօնական օրերու մեր մաղթանքները՝ հորիզոնին վրայ կը պարզուին խաղաղութեան խոստմանալի հեռանկարներ, որոնց իրազործումով Քրիստոսական այդ վայրերը պիտի գտնեն իրենց անդորրը եւ շրջանի Հայութեան հետ մեր դարաւոր Պատրիարքութիւնը եւս պիտի կրնայ լծուի իր շինարար առաքելութեան՝ առանց պատերազմի վախին եւ առհաւիրքներուն:

Մեր սրտագին բաղձանքն է որ բացուող 1978 տարին ըլլայ գործունեութեան բեղուն եւ ստեղծագործ տարի մը Ձեզի եւ Զեր նուի հեալ միարանութեան համար:

Տիկին Մանուկեան կը միանայ մեզի՝ շնորհաւորելու համար Զեր Նոր Տարին եւ Արք. Շնունդը եւ մաղթելու երկար եւ արեւաշատ տարիներ:

Խորին յարգամօք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ

ԿՐՈՆԻՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՈՒՂԵՐՁԵԼ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՊԵՏԵՐՈՒՆ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱՆ
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱԼԱՏԻՆ ՄԵԶ, 1977 ԴԵԿԸԵՄԲԵՐ 29-ԻՆ

Պարոն Նախագահ,

Զերդ Ամենապատութիւն Պատրիարք Գենեսիքթոս,

Զերդ Ամենապատութիւն Պատրիարք Տէրտէրեան,

Քրիստոնեայ Համայնքներու պետեր,

Կրօնից Նախարարութեան ընդհանուր Տնօրիչն,

Յարդելի երեսփոխաններ, պետական անձնաւորութիւններ եւ

Սիրելի բարեկամներ .

Ուրախ եմ որ կը Հանգիպիմ Խորայէլի քրիստոնէական Համայնքներու պետերուն՝ Նախագահական պալատին մէջ, քրիստոնէական Նոր Տարուան ըսկիզբը, որ թերեւ միեւնոյն ատեն նախօրեակն է նոր դարաշրջանի մը ամբողջ Միջին Արևելքի Համար :

Այս առիթով կ'ուզեմ անզամ մը եւս Հաստատել Խորայէլի կառավարութեան յանձնառութիւնը՝ պաշտպանելու բոլոր Համայնքներու կրօնական ազգառութիւնը եւ զարգացներու ներողամտութեան եւ յարդանքի ողին երկրի տարրեր Համայնքներուն եւ Հաւատագիներուն մէջ: Status Quo-ի (ներկայ գոյացիհանկի) պահպանումը սրբատեղիներուն մէջ, որ իմ նախարարութեանու պատասխանութենէն կախուած է, այս յանձնառութեան ամենէն կարեւոր արտայալութիւններէն մէկն է :

Այս տարի եւս կառավարութիւնը պաշտպանեց եւ պահեց կրօնական Նախարարութեան միջոցաւ, յաւ յարաբերութիւնները որոնք մեզ կը միացնեն: Կրնանք յիշել, օրինակի Համար, Եկեղեցիներու ներկայացուցիչներու այցելութիւնը «Բարի Սահմանադրութեան»՝ Խորայէլի եւ Լիբանանի միջև, ուր անոնք կրցան անձնապէս տեղեակ ըլլալ մարդկայնական այն դորժունէութեան, որ տեղի կ'ունենայ այսուհեղ: Կամ այն այցելութիւնները որոնց Հրաւիրեցինք քրիստոնեայ դպրելվանքներու ուսանողները: Նախարարութիւնը կը շարունակէ նոյնպէս պահէլ եւ հոգալ սրբատեղիները: Եկեղեց Վերջին Ընթրիքի վերնաւան մէջ նդած նորոգութիւնները, եւ Ս. Յարութեան զանազան մասերուն մէջ նդած նորոգութիւնները: Այսպիսի յարաբերութիւններ եւ ծրագիրներ կրնան միայն օժանդակել վստահութեան եւ ներդաշնակութեան ընդհանուր մինչ լորտի մը:

Ուրախ եմ հաստատելու ձեր համայնքներու բազմաթիւ իրազործում՝ ները անցնող տարուան ընթացքին՝ կրօնական մարզին մէջ, ինչպէս նաև կրթական եւ մշակութային մարզերուն մէջ։ Անոնք կ'արտայալուն կենսունակութիւնը որ յատուկ է ծաղկող համայնքներուն։ Այսպէս եղաւ նաև գնահատութը և կենդեցական պետերու, որոնք խորայէլ այցելեցին եւ որոնց հանդիպելու առիթը ունեցանք։ Այն իրողութիւնը որ այս տարի աննախընթաց թիւ մը արձանագրուեցաւ հաւատացեալներու, որոնք ուժուի եկան սրբատեղիներուն, կը վկայէ նոյնպէս կրօնական եւ հոգեւոր կենսունակ եւ յարանուն կեանքի մը զոյլութեան։

իմ պաշտօնակիցներս եւ ես կը զնահատենք արդարացիօրէն Հոգեւոր եւ որդնական ծանր պատասխանատուութիւնները որոնք կը ծանրանոն Խորա-յէլի քրիստոնէական Համայնքներու պետերու ուսերուն. կ'ուղենք այստեղ ար-տայայտել մէր զնահատանքը այն նուիրումին եւ Հաւատարմութեան զոր զուք կը զնէք ձեր որդին մէջ, ձեր Համայնքներու եւ ամբողջ երկրի բարօրութեան յ. նապաս:

Խնդրելով որ բարեհաճիք փոխանցել Խորայէլի ձեր եղբայրներուն եւ ամբողջ աշխարհի ձեր հաւատացեալներուն մեր ամենէն անկեղծ բարեմաղթութիւնները, կը մաղթեմ որ 1978 տարին բերէ պատղարեր եւ ջերմ գործակցութիւն, որպէսզի միասին կարենանք վերբերէլ կրօնքի գերը մարդոց կեանքին այլ գործութիւնները:

Աղօթենք որ Նոր Տարին բերէ մեր բոլոր քաղաքացիներուն հետապնդի բոլոր ժողովուրդներուն եղբայրութեան և խաղաղութեան գերադոյն օրհնաւութիւնը : Այսպէս կ'ըսէ Հրէական աւանդական բարեմաղթութիւնը . «Թողի վերջանայ տարին» եւ իր չարիքները , եւ բացուի տարիի մը օրհնութիւններուց :



Այս Ծանօթ Յի ք Ողբութեալու Ե Կայու Խօհն.
Ե Պատկռոսկը Ե Կայուսկու Արևաշ Հայու
Ծանօթ Պատկռ Համազաւ Ամանշա Արուու Արարատա
Ակարեակա Մայ Եկեւահու Մրգա Կայունկ Ե Ծովածն

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕՐՃՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՈՒԿԻՈՑ ԿԱԲՈՂԱԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈ-
ՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱԶԱՆԱՑԵՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈ-
ԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹԵԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԿԻՑ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՑԵՆ ՀԱԿԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի՞նչքա՞ն միիթարական է ու սրտապնդիչ մեղի՝ այսօրուաններու
Համար, որ թերթելով մեր նախնեաց պատմութեան գիրքը, մեր զիտակցու-
թեան հորիզոնին վրայ լոյսեր կը բացուին, որոնք կը լուսաւորեն ոչ միայն
տուեալ ժամանակաշրջանը, այլ եւ լոյս կը բերեն նաեւ մեղի, մեր օրերուն,
մեր աշխատանքի ճամբուն, մեր երազանքներուն :

Հարուստ է մեր սուրբ եկեղեցւոյ ու ազգի պատմութիւնը անմար լոյ-
սերով, անկորնչելի յիշատակներով :

Փա՛ռք բարեաց պարգևեատու մեր Հայրերու Աստուծոյն :

Անկորնչելի են նաեւ՝ յիշատակն ու իրազործութեները կ. Պալսոյ Հա-
յոց Տ. Յովհաննէս Կոլոս պատրիարքին :

Մեր փոթորկալից պատմութենէն դիտենք, թէ մեր ազգի փառքի օրերուն յաջորդեցին դաժան ժամանակներ :

Հայոց աշխարհը, ծանր հարուածներու տակ խոնարհեցաւ; Եկեղեցի և ժողովուրդ մնացին անօգնական, ուղեկորոյս, գարեր շարունակ ոտնահարւած, հարստահարուած ու հալածուած :

Աղատ ու ինքնիշխան ապրելու ճամբաները ամէն, փակուած էին ծանր զիմներով, իսկ Հայոց երկինքն թափած՝ յոյսի աստղերը բոյր: Խաւարն ու սարսափը տիրած էին Հայ Հոգիներուն: Խաւարն ու սովոր ողիի պատած էին նաև անդաստանը Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ: Ամենուր՝ քայլայում, պատակում, ապականում: Հոգեւորականութիւնը մեծաւ մասամբ անձնատուր՝ տղիսութեան, ծուլութեան ու շահամոլութեան: Կը թուէր թէ երրեմնի չողափայլ ջահը Հայ Հոգեւորականութեան չի՞ած էր արդէն, իսկ աղային դիտակցութիւնը՝ մթազնած իսպա:

Եւ սակայն բարին Աստուած չէր մոռցած իր Հաւատարիմ Հօտը: Այսպէս է որ, անհասանելի բարձունքէն, իմանալի լոյսի ճառագայթ մը իջաւ Հայոց միջապատ աշխարհի վրա:

Տասնեւեօթերորդ դարու վերջերուն էր, որ Արեւմտեան Հայաստանի Ամրառու վանքէն ներս չողաց այդ ճառագայթը, «Տիեզերալոյս» վարդան Բաղդիշեցի «քաղցրաբարոս և Համեղարան» վարդապետի հիմնած «զասատունչէն», ուր դիտութիւն եւ Հոգեւոր սնունդ առին Յովհաննէս և Գրիգոր վարդապետները, ապակայ հրաշագործ՝ «Կոլոտ» ու «Եղիմայակիր» մականուանեալ պատրիարքներու Հայոց կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի, որոնք իւ վերուստ կոչուեցան փարատելու խաւարը Հայ Հոգիներուն եւ զալար պարտէզի վերածեյու անպատր Եկեղեցւոյ անդաստանին: Մատք եւ Հոգիի այդ հրաշալի գարթօնքի առարեալը Հանդիսացաւ մանաւանդ. Ամրառու վանական Յովհաննէս կուտոք: Լուրը Հոգին իր բոլոր չնորհները պարզեւեր էր անոր, որ կոչուած էր կործանումէ փրկելու նաւը մեր Մայր Եկեղեցին եւ առաջնորդելու զայն դէպի աղբիւրը յոյսին: Ներշնչուած սուրբ զգացումներով, լուսաւորուած դիտութեամբ, օժտուած բարոյական Հօգոր նկարագրով ու աշխատերու անսպատ եռանդով, անրասիր վարքով ու Հմայիչ խօսքով, Յովհաննէս վարդապետ երրի ուրաք դրաւ Կոստանդնուպոլիս, զրաւեց քարացած սրտերը բոլոր՝ երկնուաք հրեշտակի մը նման «վասն առաքինի վարուց եւ եւս անհամեմտու քարութեամբ», որ գրեթէ էր ազգիս մերոյ նոր Ռոկերերան եւ կրկին Աստուածարան, ինչպէս կը վկայէ ժամանակակից պատմիչը՝ Հաննէ վարդապետ:

Իր Հոգեւոր ու բարոյական բացառիկ չնորհներուն զուզաւեռ, Յովհաննէս կոլոտ էր նաև իմաստուն ու եռանդուն կազմակերպիչ, Եկեղեցաշէն դործիչ, Հայադաւան ուղղափառութեան կորովի պաշտպան եւ հմուտ քաղաքաւ, որ փրկարար դեր կատարեց ոչ միայն կ. Պոլսոյ Աթոռին, այլ եւ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան համար, Մայր Աթոռ սուրբ իջմիածնի ալ Հանդէպ Հաւատարիմ եւ Հոգմատար վերաբերում ցուցաբերելով:

Յովհաննէս պատրիարքի մեծազոյն փառքը սակայն Հանդիսացաւ իր

ծառալած հսկայ աշխատանքը՝ կրթական ու դրական շարժում ստեղծելու ուղղութեամբ։ Իր հիմնած՝ Ակիւտարի գլասատունքը նոր Ամբողջ գարձաւ, ուր իր չունչին տակ հասակ առին աւելի քան քաննեւհինդ գիտուն ու նուիրեալ վարդապեաներ, որոնք յետոյ շարունակեցին բարձր պահել իրենց պաշտելի չողեւոր հօր եւ դաստիարակի վառած ջահը։

Այսպէս է որ Յովհաննէս Կոլոտի պատրիարքութեան քաննեւից տարիներու չընանին, ուղղակի անոր առաջնորդութեան ու հսկողութեան ներքոյ, կ. Պոլսոյ մէջ հետզհետէ բացուեցան տասնեակ մը Հայ վարժարաններ, հիմնուեցան տպարաններ ու գրադարաններ, հրատարակուեցան աւելի քան Հարիւր կարեւոր գործեր մեր նախնեաց մատենադիրներէն։ Հայերէնի թարգմանուեցան օսար դասական հեղինակներու՝ կրօնական, փիլիսոփայական ու դրական երկեր։ Այս բոլորը, որպէսզի Հայ նոր սերունդները եւ ի մասնաւորի երիտասարդ հոգեւորականները՝ ներչչանք, հոգեւոր սնունդ եւ Հայ եկեղեցին ու ազգին ծառայելու դադարական մզում ստանան։

Յովհաննէս պատրիարքի անյոզնարեկ ճիգերով ծնունդ առած ու ծառայած այս կրթական-գրական շարժումը՝ «Կոլոտեան» դպրոցը, «Կղմանուրումը» եղաւ արեւմտահայ հոգեւոր ու ազգային մշակութային զարթօնքին եւ նախապայմանները ստեղծեց արեւմտահայ լեզուի յետագայ կազմաւորման։

Ողիի ու կենդանի գործի հերսոնական խոյանքով, Յովհաննէս Կոլոտ ստատուեց դարերու խաւարը Հայ հոգիներուն, լոյս աշխարհ բերաւ մոռցուած յիշատակները եւ արժէքները նախնեաց փառքի օրերու, վասնց կրակը Հայոց ազգային ինքնաճանաչման եւ հաւաքական շահերու դիտակցութեան։

Ցեղաշրջեց ճակատագիրը ամբողջ արեւմտահայ ժողովուրդին։

Անվարան կարելի է հաստատել, թէ արեւմտահայութեան ազգային վերածնունդի յուսաւոր հորիզոնի սեմին, կը բարձրանայ պայծառ անձնաւորութիւնը Յովհաննէս Կոլոտ մեծագործ պատրիարքին, իրեւ իր ժամանակի նոր յուսաւորիչ։

Ծնած 1678-ին, իր մահկանացուն կնքեց 1741 փրկչական տարին, մօտ երեք տասնամետկներ փառաւորելով կ. Պոլսոյ Հայոց պատմական Աթոռ։

Այսօր, իր ծննդեան երեք հարիւրամեակին, մեր սուրբ եկեղեցին և Համայն մեր ժողովուրդը արդար հիացումով ու Երախտագիտութեամբ պիտի ողեկոչին պահանջակի յիշատակը մեծ պատրիարքին ու պիտի աղօթեն որ տնոր հոգին յաւէտ անթառամ մնայ երկնից արքայութեան լոյսերուն մէջ ու Համադիսանայ նաեւ առաջնորդող ողի այստեղ, երկրի վրայ, մեր եկեղեցւոյ կետնաքէն ներս։

Սիրով ընդառաջելով Մեր ամենապատիւ եղբօր, կ. Պոլսոյ այժմու պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանի 30 Մայիս 1977 թուակիր խնդրանքին, յառաջիկայ 1978 տարին կը հաշակենք Համայն Հայաստան-եայց առաքելական եկեղեցւոյ համար յորելինական տարի, նուիրուած յուսակ Տ. Յովհաննէս Կոլոտ պատրիարքի իրազորդումներուն պահանջացման։

Կ'առաջաղբենք մեր եկեղեցւոյ նույիքապետական Աթոռներուն եւ կը հրահանգենք թեմական ու եկեղեցական կեղրոններուն, որ գալիք տարի իրենց համար յարմար թուականներու, մատուցմաք սուրբ պատարագներու, կատարեն Հանգիստուր ՀոգէՀանգստական արարողութիւններ ի լուսաւորումն Հոգւոյ երջանկայիշատակ Տ. Յովհաննես պատրիարքին :


Զերմանիս կը յանձնարարենք նաև որ հայ եկեղեցական ու մշակութային կազմակերպութիւնները, կենդանի խօսքով ու հայերէն եւ օտար յիգուներով զբուած յօցուածներով ու հրատարակութիւններով, ոգեկոչեն անժոռոաց յիշատակը և վաստակը Հոգեկոյ լորեյեար պատրիարքին:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի մէջ Հանգիստաւոր սուրբ պատարագը եւ Հոգեհանգստան պաշտօնը տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի Հոկտեմբերի 1-ին Մեր Պահակալութեան 23-րդ տարեղարձի առթիւ, իսկ Աթոռի պաշտօնաթերթ «Էջմիածնին» ամսագիրը 1978-ի Հոկտեմբերի թիւր պիտի նուի քիչ մէջ պատրիարքի կեանքին ու գործունեութեան:

«Ցիշեցէք զառաջնորդս մեր որ խօսեցան մեզ զբանն Ասունծոյ. հա-
յեցեալի յիս զմացից նոցա՝ նմանող եղերունք հաւատոցն» (Եպ. ԺՂ. 7):

డ. ఉ. గ. గ. కు. న.

ԵԱՀՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԻՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ



ՅՈՎՅԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ

Յետադարձ ակնարկով մը, ամէն անզամ որ մեր յիշողութիւնը կը նայի գէպի մեր Եկեղեցիի մեծ դէմքերը, սուրբ հայրապետներու երկնակամարին վերը կը տեսնէ Ս. Գրիգոր Լուսուորիչը եւ անոր երկու կողմերը՝ Մեծն Ներսէսը, Սահակ Պարքեւը, Մեսրոպ Մաշտոցը, Թարգմանիչ Վարդապետները եւ երկար շարքը անոնց, որոնք առաքելական շունչով, աւետարանական լոյսով եւ հայ գիրին հրաշեով լեցուցին մեր Եկեղեցին։ Մեր յիշողութիւնը կը փնտուէ զանոնի հին անցեալին մէջ, կարծէք ժամանակի ոսկեզօնումը անհրաժեշտ ըլլար որպէսզի նաև նայինք անոնց մէջ մեծութեան դրոշմը։ Կարծէք քէ Հայուն Աստուածը մեր ժողովուրդի ծուռէն յառուցած ըլլար մեծ առաջնորդներ ժամանակի եւ մեր պատրիքեան հեռաւոր անցեալին մէջ միայն։

Ընդհանուր-այս տպաւորութիւնը կը փոխուի սակայն, երբ զիտնանի իրենց արժանի բարձրութեան վրայ տեսնել մեր ժամանակներուն աւելի մօն մեծութիւններ, որոնց շառքը կ'երկարի մինչեւ այսօր։ Անոնցմէ մին է անտարակոյս Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը։

Կ'արծէ որ Հայութիւնը ամբողջ, արձագանգելով Կ. Պոլսոյ Շնորհ Պատրիարքի կոչին եւ Ամենայն Հայոց Հայրածնին հրաւերին, նաև նայ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքին մէջ, տասնըութերորդ դարու առաջին կէսի մեծ դէմքը եւ բացառիկ առաջնորդը եւ դասէ գայի մեր լուսաւորիչներու շարքին։ Եկած է առենոր հաւատանիք քէ նախախնամութեան Աջք երկարած է շարութան ու այ իր «փոքր հօտը» եւ քէ Լուսաւորչի տեսիլքը շարութակուած է

աչքին մէջ անոնց, որոնք վստահած են պատուածային խօսուուն մին. «Մի՛ երկնչիր՝ զի ընդ քեզ եմ. մի՛ խարիր՝ զի ես եմ Աստած քո, որ զօրացուցի զքեզ» (Եսայի ելլ. 10):

Ամէն անգամ որ տիրող օտար պետութեան նիշումը խեղդել ուղած է մեր ձայնը կամ տկարացուցած՝ մեր յոյսը, մեր Եկեղեցիի խորանը բարձրացած է տեսլիքի մարդ մը, ամրապնդելու համար մեր հաւատքը եւ վերականգնելու համար մ՛ր վստահութիւնը: Եւ մեր ժողովուրդը անմիջապէս նանչցած է հովիւր իր ձայնի հարազատութենէն ու հետեւած անոր:

Վանիք մը կրթար զալ այդ ձայնը, 1715-ին, որովհետեւ օսմանեան եւ պարսկական այդ մութ օրերուն, մերուպեան զեր ապաստան զած էր վանիքի խոնան պատերու ետին, Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան մասերուն մէջ, նմանապէս: Վանիքն էր դարդու ու համալսարանը, կեդրոնը գրչութեան և արուեստի, սետութեան եւ գրականութեան: Կոյուտ աշակերտն էր իր ժամանակի մեծ վարդապետին՝ Վարդան Բաղիշեցիի, որ համալսարանի աստիճանին բարձրացուցած էր Ամրտորու վանիքը, վերականգնելով այնուեղ ուսուցումը նաեւ «արտաֆին գրեանց», այսինքն հմաստասիրութեան: Ուրիշ վանիքի մը վերականգնումը եղաւ եկեղեցական կեանիքի իր անդրանիկ իրազորդումը: Ամուր կերառու հիմնաւ որուած հոգեւոր եւ մտաւոր իր գարզացումը առաջին իր պատուհները տուաւ Մշոյ Ս. Կարապետ վանիքին մէջ. ուրիշ եռու գար ան Պոլիս, ոչ թէ պատրիարքական փառքի տենչէն մղուած. այս կուսարքահաստատ Ս. Կարապետը վերանորոգելու համար անհրաժեշտ գումարներ հանգանակելու:

Երկու անգամ եկաւ Պոլիս. նախ Մշոյ Ս. Կարապետ վանիքին եւ երկրորդ՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանիքին համար: Երկու անգամ ալ՝ միակ մտահոգութեամբ մը. իր պերճախոս ձայնը բարձրացնելու որպէսզի զգաստութեան իրաւիրէ մեծատունները եւ անոնց օգնութեամբ վերահաստատէ Հայոց մեծ վանիքը իրենց փառքին եւ առաքելութեան մէջ:

Անտարակոյս որ Ս. Գրիգոր Լուսարքիչ նման, տեսած էր ան թէ ժողովուրդի մը գիտակցութիւնը կը մնայ պայծառ հոգեկան իր արժէ քնիրու տեւական հաղորդութեամբ եւ թէ հոգեկան զանձին ապաստանարաններուն՝ վանիքներուն զօրացումով եւ կառակերպութեամբ միայն կարելի պիտի ըլլայ դիմանալ. դիմանալ և ալածանին, ննջումին, տղիտութեան եւ օտար քարոզութիւններու գրոհին դիմաց: Եւ այս եղաւ իր հեղինակառոր կոչը եկեղեցիներու թմբերէն:

Իր գուրգուրանքին մեծ առարկան եղաւ Հայ Երուսաղէմը: Ենչպէս մեր Տէրը Երկրաւոր իր առաքելութեան ձեռնարկեց վտարելով վանառականները Առուուծոյ Տահարէն, այնպէս ալ Կոյուտ, իր առաքելութիւնը սկսաւ Երուսաղէմի մէջ, ուր «վէֆիլ»ներ եւ «պապա»ներ, եկած աշխարհական գործերու եւ վարչական փորձառութիւններու իրենց հաւակնուութիւններով, պարուժերու տակ խեղդած էին Պատրիարքական փառաւոր Արոռը: Կոյուտ փրկիչը եղաւ Հայ Երուսաղէմին, երբ Փշրեց «հասարակաց կնիք»ը, վտա-

թեց «վէֆիլ»ները, ապահովեց պարտքերուն վճարումը, եւ Երուսաղեմի Պատրիարքական Արռողին վրայ հասուատեց իր դասընկերը եւ գործակիցը՝ Գրիգոր «Աստուածաբան Վարդապետն», հրոշակաւոր իրեւ «Շղբայակիր» Պատրիարք:

Կոլոտ՝ Պոլսոյ եւ Շղբայակիր՝ Երուսաղեմի Արռողին վրայ, երկուքն ալ տակաւին շնչառած բառասուն տարեկանի, իրենց զլիսաւոր մտադրութիւնը կ'ընեն վերահաստատել Երուսաղեմը իր փառքին մէջ: «Եւ հիմա կանք ահաւասիկ ծառայութեան ուաշոնին մէջ Սուրբ Տունին գօրութեանն Տիրոջ, կապուած իրարու հոգիով եւ մարմանվ եւ եղանիք ողորմութեան արժանի փրկելու համար Ս. Արռողը»:

Ուրբ տարիներ Գրիգոր Պատրիարքի վզին ծանրացող շրդքան յաջողեցաւ կապել ազգին սիրուն ու հոգին վերածնած Հայ Երուսաղեմին, շնորհիւ Կոլոտ Պատրիարքի մեծ հովանաւորութեան եւ գուրգուրանին, որ չտկարացաւ ընաւ, երեսուն տարիներ շարունակ: Այնքան առաջնակարգ նկատուեցաւ Երուսաղեմը, որ Շղբայակիրն Գրիգոր, Խ1737-ին հրաժարեցաւ Ս. Էջմիածինի հարողիկոսութենէն, որուն կոչուեցաւ ազգին ընտրութեամբ իւշարունակեց ըլլալ Երուսաղեմի բարեկարգիչը եւ փրկիչը:

Կոլոտ չուզեց գրկել Մայր Արռող իր գլխաւոր գործակիցի տաղանդէն՝ նախրնարութեան մը հաշույն, ի նպաստ Երուսաղեմի. ան հոգաց նաև Ամենայն Հայոց Կաքողիկոսի ընտրութիւնը, զոր կատարեց Պոլսոյ մէջ: Պոլսոյ Մայր Եկեղեցիին մէջ օծուեցու Վեհափառ Հայրապետը՝ Կարապետ Կաքողիկոս եւ նոյն Եկեղեցիին մէջ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Կոլոտ Պատրիարքը. ոռ դաշտած էր Պատրիարքութիւնը տասներկու տարիներ՝ իրեւ Վարդապետ Եկեղեցւոյ:

Եպիսկոպոսութեան աստիճանը եւ արքութեան պատիք ոչինչ փոխեցին իր մեծութենէն որ իրագործած էր Վարդապետահան իր շնորհներով: Իր իրագործումները՝ վերականգնումը երկու Պատրիարքական Արռողներուն եւ հոգառարութիւնը Մայր Արռողին, պատուղը եղան Վարդապետական իր բարոգութեան. իոն խօսքին: Ոչինչ գրեց, բայց շարունակ խօսեցաւ, «Իրաբորրոն եւ աստուածաբան քարոզութեամբ նորին»: Աստուածաշունչ իր ուռերը վառեցին բոցը հայ ինքնազիտակցութեան եւ, հրաշառոծ հաւատքին ոյժով, մղեցին մեծատունն ու աղքատը վերականգնելոյ Հայ Եկեղեցիին փառքը, ամէն տեղ:

Իր հովանաւորութեամբ զարգացաւ բարգմանչական գրականութեան նոր տարածում մը, որ, Ռսկեղարու գրական ծաղկումին նման, հայ միտքին բերաւ զարքօնիք մը: Ինչպէս հիմունքորդ դարուն, Աստուածաշունչին հետ քարզմանուեցան Եկեղեցւոյ Հայրերու մեկնողական եւ աստուածաբանական գործերը լուսնարկենէ եւ ասորերէնէ, նոյնպէս, Կոլոտի նախաձեռնութեամբ լատիներէնէ քարզմանուեցան մեկնութիւններ եւ աստուածաբանական տեսութիւններ, որոնք արքնոցուցին թմրած հետաքրքրութիւնը իրեն ժամանակակից Եկեղեցական դասին: Տակաւին միամիտ հաւատքի այն դարն էր, երբ կարողիկ միսինարներ կ'ընդունուէին իրեւ քրիստոնէական հաւատքի քարզիչներ եւ Հայ-

Եկեղեցին քեմերը կը բարձրանային աւետարաննելու համար Քը-
րիստոսի պատգամը հաւատացեալ մեր ժողովուրդին։ Մեր Եկե-
ղեցին տեղ կու տար անոնց իր ծոցին մէջ՝ իբրև լուսաւորեալ ա-
խոյեաններ նոյն քրիստոնէական հաւատքին, որուն համար ապ-
րած եւ յանախ նահատակուած էր Հ այ Եկեղեցին։ Խոկ Կոլոտ
Պատրիարք անոնց քերած աստուածաբանական գործերու կարե-
ւորները քարզմանել կու տար հայերէնի, որպէսզի «քարզմանո-
րեամբ եւ ածանեցմամբ», կ'ըսէ ան, «այլոցն փարքամութեամբ
զազզն իմ եւ զիս բարքամեցուցից...»։

Երանելի օրեր, երբ «մարդորութեան» ախտը չէր դրսե-
ւորած իր տգեղ դիմագիծը, երբ տկար եւ հալածուած Եկեղեցի-
ներ կը նայէին դէպի Կարողիկ Եկեղեցին լոյսի եւ գիտութեան ի
խնդիր, առանց խորականութեան եւ այն վաստակութեամբ թէ Ա-
ռեւմուտքէն պիտի զար քրիստոնէութեան փրկութիւնը։ Թէեւ Կո-
լուտ Պատրիարք Սկորի «Աստուածաբանութեան» մասին զրեց թէ
«ի մէջ ծաղկանց զեղինն ունի բուսուցեալ», սակայն չկասկածե-
ցաւ բնաւ թէ միսիննարներու առաքելութեան արդիւնքը պիտի ու-
լար երկպառակութեան սերմեր ցանել Հայ Եկեղեցին անդաստա-
նէն ներս, ի վերջոյ տկարացնելու համար զայն։

Կոլոտ լայն տեսիլիքի մարդ էր։ Երեսուն տարի ան հոգաց
եւ նիւթեց, առանց շեղելու հիմնական իր նապատակէն։ ազգային
գիտակցութիւնը ուժեղացնել ուսման տարածումով եւ հաւատքի
լոյսով։ Ինչ փոյք երէ իր մեծ նպատակի իրազործման նամրուն
վրայ պէտք ըլլար հայ միտքի խմորը մակարդել լատինական գի-
տուրթեամբ։

Նոյն նպատակի նամրուն վրայ, Կոլոտի մեծ իրազործու-
մը եղաւ Սկիւտարի Ճեմարանը։ Ամրոռու համալսարանի մա-
կարդակով «դպրատուն» մը հաստառուեցաւ Երուսաղէմի «հոգե-
տուն»ին տեղը, ուսուցանելու համար աստուածաբանութիւն եւ ի-
մաստասիրութիւն, Ս. Գիրք եւ մեկնութիւն, հոգեւորական ծա-
ռայութեան եւ ուսուցչական ասպարեզին համար պատրաստուող
երիտասարդութեան։ «Նոր Ոսկերերան եւ կրկին աստուածաբան»,
Ճեմարանի հիմնադիրը, մինչեւ իր մահը, եղաւ ուսուցիչ, սկըզ-
բունք ունենալով «մի՛ երբեք վերջանալ յուսումնասիրութենէ եւ ի
դպասանդութենէ»։ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի շունչով եւ
լայն գիտութեամբ զարգացան խանինինց վարդապետներ, որոնց
շարունակեցին եւ տարածեցին իրենց Մեծ Վարդապետին սրբա-
զան առաքելութիւնը։

Կոլոտի ճեննարկներէն նոյնքան կարեւորութեամբ արժա-
նի է յիշատակութեան զրասէր Պատրիարքին հաստատած Մատե-
նադարանը։ Պատրիարքաներին կից, ինչպէս նաև Սկիւտարի Ճե-
մարանին մօս, ան հաւաքել տուաւ ինչ որ կրցաւ գտնել են երեսն
ճեռագիր եւ տպագիր մատենագրութենէն եւ օտար, գիտառա-
բար լատիններէն եւ իստակերէն գիրքերէն, կազմելու համար մու-
րանց մը անցեալի եւ իր ժամանակի ժամօրութիւններուն «աւետ
օգտակար եւ պիտանի բանափրաց»։

Յովհաննէս Կոլոտ եւ իր անմիջական գործակիցը՝ Գրիգոր
Շղայակիր, շինարարական աշխատանքով եւ նորանան ի-



բագործումներով զարքօնի մը ստեղծեցին մեր պատմութեան աւմենին դժուարին օրերուն: Ճնշումի եւ խաւարի, փաշայական կաւալատարութեան եւ հետզիետէ ծանրացող կեղեքումներու տարիներուն, անոնք քերին ապրելու եւ ստեղծագործելու մեր կամքին հրաշագործ վնականութիւնը եւ մեր յաւիտենական տեսիլքին յոյսը: Յարութեան շունչով մը լեցուցին Եկեղեցին եւ մեր ժողովուրդը: Արժան է որ աւելի մօտէն նաևնանք անոնց անձն ու վաստակը:

Մենք, մի քանի այս ընդգծումներով, ուզեցինք շեշտել կարեւորութիւնը յորելինական տարիին, «նուիրուած լուսաբնակ Տ. Յովհաննէս Կոլոս Պատրիարքի իրագործումներուն պանծացման»: Կը հաւատանք քէ Կոլոտով սկսած լուսաւորութեան շարժումն էր որ ազատագրեց Հայ հոգիի այն ոյժերը, որոնք պիտի ձգտէին ագային ազատութեան մեծ իտէալին: Անոր խօսքն էր որ շարժման մէջ դրաւ մեր ինքնանանաչումը իրեւ մշակոյթի ժողովուրդ եւ մեր ինքնազնահատումը իրեւ ինքնութիւն ունեցող Ազգ: Ան վերականգնեց մեր հպատութիւնը: Վաճեքերու եւ Եկեղեցիներու վերաշինութեամբ, ան անգամ մը եւս Միածինի խորհուրդով լեցուց կարուղիկէները եւ մեր խաչելութեան երկար նամքուն վերջը՝ մատնանշեց յարութեան յոյսը: Ազգային մեր զիտակցութիւնը նորէն բախեցուց իր իսկական աղքիւրէն, մեր հայրերու հաւատութէն:

Անգամ մը եւս ականչ տանիք Կոլոտին, թերեւս պատգամ մը ունի նաև մեզի, մեր օրերուն:

7.



ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՉԽԱՐԱՑԻՆ ԽՈՐՅՈՒՐԴԻ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ՝

ԳՐԿՈՒԱԾ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդ

Կեդրոնական Վարչութիւն

ՅՈՒՂԻՍ-ՕԳԽԱՍՏՈՒ 1977

Դ Ա Ի Ա Ն Ո Ղ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ը

ՆԱՄԱԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

«Եկեղեցու առնել զաշս սրտից, առ ի գիտելոյ մեզ
զի՞չ է յայս կռչման նորաք»:

«Եկեղեցու մեր սրտերու աչքերը, որպէսզի
զիտնամի ինչ է անոր կռչիմ յոյսք»

(Եփեսացոց II 18):

Եղբայրներ եւ քոյլեր ի Քրիստոս,

Կ'ողջունենք ձեզ բոլորդ Յիսուս Քրիստոսի անունով։ ՄԵՆՔ ձեր բա-
րեկամիներն ենք ի Քրիստոս, զրկուած բազմաթիւ երկրամասերու եկեղեցինե-
րէն, Հաւաքուելու այստեղ իրեւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի

ՆԱՌՈՒ. ԽՄԲ.— Անցեալ ամառ, Եկեղեցիներու Համաշխարհային
Խորհուրդի Կեդրոնական Վարչութիւնը, տարեկան իր ժողովը գումարեց Ժո-
նևի մէջ։ Փողովին մասնակցած Գերշ. Տահէ Արքեպիսկոպոս եւ Տ. Ար-
ևին Եպիսկոպոս, Մայր Արքուի կողմէ։

Նայրովիի մէջ գումարուած 1975-ի Ընդհանուր Փողովին ի վեր, Հա-
մաշխարհային Խորհուրդի անդամ Եկեղեցիներէն ներս զարգացան հիմնական
մասհոգուրին մը. գործակցութեան, համերաշխութեան եւ, ի վերօյ, միու-
թեան ողի մը զարգացնել տեղական համայնքներուն մէջ, որպէսզի սիրոյ ի-
րենց կեանքով ըլլան դաւանող Եկեղեցիները, իրենց շրջապատր լուսաւորող Ա-
ւետարանի հշմարանութեամբ։

Այս մտահոգուրինը մղեց Եկեղենական Վարչութեան անդամները
խմբագրելու նամակ մը, ուղղուած անդամ Եկեղեցիներուն, խրախուսելու հա-
մար տառապեալները, ներշնչելու՝ տկարացողները եւ բոլորին այ քերելու
ժոյը Եկեղեցիներու նոր խանդ՝ առաքելական իրենց զործին մէջ։

կեդրոնական վարչութիւն : Մենք կը պատկանինք տարրեր ցեղերու և մշտակոյթներու : Մենք երջանիկ ենք Աստուծոյ մեզի պարզեւած այս զանազանութեան համար , եւ սակայն մենք կը ներկայացնենք բաժանումները որոնք կը պատուն մեր աշխարհը : Մենք բխում առած ենք քրիստոնէական տարրեր աւանդութիւններէ : Մենք ուրախութիւնը ունինք այս հարստութեան , թէ եւ ոնինք նաեւ ցաւը պատկանելու բաժանուած եկեղեցիներու : Երբեմն պէտք է ծանրը պայքար տանինք , հասկնալու համար մէկը միւսին , եւ արտայայտելու համար հասարակաց մեր կոչումը : Մենք ուսումնասիրեցինք մեր նիւթը . «Դաւանող Համայնքը» , Եփեսացւոց Առաջին Գլուխի 15-23 Համարներու լորին տակ , եւ մեր , քրիստոնեաներուս , ապրած տարրեր կացութիւններու առնչութեամբ այսօրուան աշխարհն մէջ , նաեւ Հրատապ այն Հարցերու կապակցութեամբ , որոնց դէմ յանդիման գտնուեցանք մեր ժողովի ընթացքին :

Մենք մխիթարուած զգացինք լսելով Համայնքներու հաւատքի մասին , աշխարհի տարրեր մասերուն մէջ , որոնք կը գաւանին զՔրիստոս իրենց սրտով եւ բերնով , իրենց խօսքով եւ կեանքով : Այս վկայութիւնը միշտ զահողութիւն մը կը պահանջէ : ոմանց Համար նոյնիսկ անցնող տարուան ընթացքին ան պահանջած է մարտիրոսութիւն : Ոմանք Հալածուած են զաւանած ըլլալնուն Համար իրենց հաւատքը , ուրիշներ մէկ կոզմ նետուած են . ոմանք մերժուած են այն ընկերութիւններէն ուր կ'ապրին , ուրիշներ ստիպուած եղած են զիմաղրելու այն Հրապոյրներուն որ այդ ընկերութիւնները կը ներկայացնեն : Ոմանք իրենց դաւանանքը կ'արտայայտեն Հրապարակային վիճաբանութիւններու կրկէսին մէջ , ուրիշներ ամուր կը կենան իրենց հաւատքին մէջ՝ երբ Հրապարակային գիմաց խոչընդուներ կը դրուին :

Դաւանելով իրեւ քրիստոնէական Համայնքներ , մենք կը ցոյացնենք «Հաւատքի դեղեցիկ զաւանութիւնը» , կատարուած նոյնիքն մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսու կողմէ (Ա. Տիմոթէոս 213) : Ան կը բերէ մեզի յարութեան յոյսը , կրելով իր մարմինին վրայ իր շարչարանքներու վէրքերը : Ան կը կրէ աշխարհի մեղքերը : Ան բաժնեկից է մարդկութեան պայքարներուն : Ան կոչ կ'ընէ Եկեղեցիին որ վկայութիւնը բերէ իր յաղթանակին «իշխաններու եւ պետութիւններու» , եւ մեզի կու տայ պայքարելու ուժը՝ շարի բոլոր ուժերուն դէմ : Ան է միայն Տէրը , որմէ զուրս ուրիշ տէր չի կրնար զոյտութիւն ունենայ . անոր Համար Ան զատաստանի կ'ենթարկէ որեւէ ուրիշ պատկանելիութիւն՝ որ կը ճնշէ մեր կեանքերուն վրայ :

Սուրբ Հոգին կը լուսաւորէ մեր սրտերը եւ մեր Հոգիները , որպէսզի տեսնենք յարութիւնը Յիսուսի մէջ եւ ձանձնանք այս երկրի վրայ իր Եկեղեցիի կերպին մէջ իր մարմինի աստուածային փառքը : Անգամները այդ մարմինին , մենք մեր սնունդը կը ստանանք Տիրոջ սեղանէն եւ , սուրբերու ամրող Համայնքին Հետ , մենք կը Հրճուինք որբասացութեան եւ փառարանութեան ծիսակատարութեան մէջ : Յուսահատութեան ամենին մութ ժամերուն , մենք կը լունք Զատիկիի պատկամը . «Տէրը յարութիւն տաած է» : Եւ մենք կը պատասխանենք սրտով եւ բերնով . «Երապէս յարութիւն տաած է» : Հրաւէր կ'ուզգենք ձեզի , որ միասին երգենք յարութեան ուրախութիւնը , եւ փառք տանք Աստուծոյ այս բարի լուրի տըւչութեան Համար :

Սակայն ո՞վ ենք մենք որ երդենք յաղթանակի երդը : Իբրև քրիստոնէական համայնքներ մենք կը տօնախմբենք յաղթանակը, սակայն կը թուինք առպրի: պարտութեան մէջ: Մենք կը պաշտենք կենդանի Տէր մը, սակայն չենք կատարեր իր յանձնարարութիւնները: Կ'ըսենք թէ կ'ուզենք Հետեւիլ իրեն, սակայն կը վախճանք երթալու Հոն ուր Ինք կ'առաջնորդէ մեզի: Կը յաւակնինք ըլլալ Թագաւորութեան նշաններ, սակայն մենք պարզ կրկնութիւններն ենք յանափառ համայնքներու որոնք կը շրջապատեն մեզ: Կոչուած ենք մասնակցեաւ Քրիստոսի զործին՝ աշխարհի փոխելու, սակայն մենք կը համակերպինք, առանց խորութեան, մեր ընկերութիւններու կերպարներուն: Մենք առաքուած Ենք պատգամելու համար «քարի լուրը աղքատներուն», բայց կը մերժենք ըւեւ թէ ինչ կը նշանակէ այդ լուրը մեզի համար: Կը յայսարարենք «ազատութիւն նշանաձններու», բայց կը տատամանինք վճարելու դինք մեր գաշնակցութեան անոնց Հետ: Կը հաստատենք մեր պատասկումը ի Քրիստոս, բայց չարի ուռկաններուն մէջ բռնուած ենք: Կանչենք միասին .

Անմահ Հայր, ազատագրէ մեզ:

Կը հրաւիրենք ձեզ հարցնելու մէկը միւսին Հետեւեալ հարցումներէն մի քանին, կացութեան համաձայն ուր կը զտնուիք.

— Ինչպէս կը դաւանինք զՔրիստոս մեր խօսքերուն, մեր արարքներուն, մեր կեանքին եւ մեր առօրեայ զրագումներուն ընդմէջէն:

— Ինչպէս կը բաժնենք մեր Հաւատքը ուրիշներու Հետ, մեր ընտանիքներէն ներս, մեր շրջապատէն ներս եւ աշխարհին մէջ:

— Ինչպիսէ հակազրութիւններու կը հանդիպի մեր դաւանակը ի Քրիստոս:

— Ինչպիսէ փոփոխութիւններ պիտի յառաջանային մեր համայնքներու կեանքին մէջ, եթէ ըլլայինք ամբողջապէս Քրիստոսը դաւանող համայնքներ:

— Ինչպէս կրնանք օգնել իրարու, բանալու համար մեր կեանքը Քրիստոսի:

— Ինչպէս կրնանք օգնել մէկը միւսին, իրրեւ քրիստոնէայ պատասխանելու համար այն հակազրութիւններուն որոնք մեր առջեւ կը զտնուին մեր առօրեայ աշխատանքներու ընթացքին:

— Քրիստոնէութիւն դաւանիլը ինչո՞վ կը բաժնէ մեզ ուրիշներէն. ինչպէս կը միացնէ մեզ անոնց:

— Ո՞ւր կը հանդիպինք մենք կիներու եւ մարդերու՝ զրկուած իրենց արժանապատութենէն որ իրենց իրաւունքն է, եւ ի՞նչ կ'ընենք իրրեւ դաւանող համայնք այդ կացութիւնները զարմանելու:

Մենք յանձն կ'առնենք աղօթել մէկը միւսին Համար և մասնակցիլ Քրիստոսի բարեխօսութեան շուրջ առաքելութեան մէջ: Այդ բարեխօսութիւնը դաւանանքի համայնքը ուժեղացնելու միջոց մը չէ միայն, այլ անոր կենդանի աղրիւրն է: Կը հրաւիրենք ձեզ աղօթելու:

— Անոնց համար, որոնք նոր մուտք զործած են դաւանող համայնքներու, որպէսզի Հոգին բերէ իր պառուզները անոնց կեանքին ներս :

— Անոնց համար, որոնք հանգստորէն հաստատուած են իրենց Համարին մէջ, որպէսզի Հոգին արթնցնէ զանոնք նոր տեսիլքով:

— Անոնց համար, որոնք լքած են Եկեղեցին այն զդացումով որ ան ու ինչ ունի տալիք իրենց, որպէսզի Քրիստոս վերագոնէ զանոնք աղօթքին ծառադրութեան եւ իր Եկեղեցիին դաւանութեան միջոցաւ:

— Անոնց համար, որոնք Եկեղեցիին կու զան փնտութով իրենց ձամբան, որպէսզի ընդունուին անոնք իրապէս դաւանող համայնքի մը կողմէն, որ առաջնորդէ զանոնք Քրիստոսի:

— Անոնց համար, որոնք կը տառապին Աստուծոյ սիրոյն, որպէսզի ուրախանան յոյսով եւ վատահութեամբ թէ Տէրը իրենց հետ է:

— Անոնց համար, որոնք կը փնտուն հպատակութեան գիւրին ձամբան, որպէսզի սորպին շարկել խաչը եւ հետեւիլ Յիսուսի:

— Անոնց համար, որոնք զրաւուած են իրական պայքարով ազատութեան եւ արգարութեան, խաղաղութեան եւ Հաշուութեան, որպէսզի անոնց նեցուկ զանեն դաւանող համայնքի օգնութեամբ:

— Անոնց համար, որոնք կոյր են կամ անտարբեր աշխարհի պէտքեռուն նկատմամբ, որպէսզի սորպին ուրիշներու պէտքերը տեսնել Քրիստոսի աշքերով:

— Բոլոր համայնքներուն համար, որոնք կը զաւանին զՔրիստոս, որպէսզի արտայայտեն Անոր Մարմինին միութիւնը, ապաշխարհելով եւ զզջալով ամէն այն բաներէն՝ որոնք կը պահեն արդ միութիւնը աշխարհի աշքերէն:

— Բոլոր անոնց համար, որոնք կը զաւանին Քրիստոսը իրեւ Տէր, որպէսզի անոնց խօսքերը իրապէս հաշիւ տան իրենց արարքներուն, որպէսզի անոնց արարքները ամբողջովին արտայայտեն իրենց սէրը, որպէսզի իրենց սէրը հաւատարիմ ցոլքը ըլլայ Տիրոջ:

Տէր Աստուծ, կ'աղաչենք որ մեր սիրտերուն այքերը բանաս տեսիւթեամբ Հոգիովդ նորոգուած աշխարհի մը, որ բանաս մեր բերանները՝ որ կարգան անունը Յիսուսի, որ բանաս մեր կեանքերը Քրիստոսի, որպէսզի Քրիստոս դարձի ուժով՝ Մենք միասին կը տօնախմբենք յարութեամբ յաղթական Տէրը: Օդնէ մեզի որ դաւանինք եւ աշխատինք սպասումին մէջ վերջնական յաղթանակին, երբ Քրիստոս պիտի հաւաքէ ամէն բան իր փառքին մէջ եւ իրը պիտի ընէ աղդերը: «Զի քո է իշխանութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն»:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ Օ. Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱ

Երաքի տուած իր պաշտօնական այցելութենէն ետք, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը տաս օրուան անպաշտօն այցելութիւն մը կատարեց Փարիզ։ Պաշտօնական հոնքամանք չկրող այս այցելութիւնը եղաւ զարձեալ գեղեցիկ առիթ մը խմբիւ համար Եւրոպայի Հայութիւնը իր Կաթողիկոսին չուրջ։ Փարիզ ժամանելին և հիւրանոց իջևանիլին ետք, Վեհափառ Հայրապետը ընդունեց բազմաթիւ պատգամաւորութիւններ, եկած՝ ներկայացնելու իրեն իրենց որդիկան սէրը և անկեղծ յարդանքը։ Իսկ ամէն օր Առաջնորդարանի գանձիճին մէջ Նորին Սրբութիւնը ընդունեց բոլոր այն ողգայինները որոնք սրեւ հարցի մը համար փափաքեցան իր Աջը համբուրբէ և ականակցութեան մը առիթը ունենալ:

Փետրուար 12ի Կիբակի տաւած, Վեհափառ Հայրապետը Ա. Յովհաննէս Մկրտիչ Տաճարին մէջ ողջունեց իր ժողովուրդը պերճախօս քարոզպ մը, որ անգամ մը ևս թարմացուց հաւատացեալ ժողովուրդի սիրտին մէջ սէրը հայրենիքին և պաշտօնաւնքը Սուրբ Էջմիածնի Հայրենիքի կարօս մէր ժողովուրդի զաւակները լոեցին հրճուանքով և ուրախութեամբ բարի լուրերը և պատգամքը զար բերած էր Հայոց մեծ Հայրապետը։

Երկուշարթիէն մինչև Ուրբաթ գիշեր ամէն երեկոյ Նորին Սրբութիւնը ընթրեց Հայ ընտանիքի մը յարկին տակ, շրջապատուած Հայ ողգայիններով։ Իսկ Հինգշարթի երեկոյ, իր իսկ հիւրանոցին մէջ պատուոյ ճաշկերոյթ մը աւելին Նորին Սրբութեան Մարսիլիայէն յատկապէս եկած Հայեր, գլխաւորութեամբ Պարոն Մարտիրոս Շէլլէֆիանի և ներկայութեամբ Պարոն Նարաւէն Պիւլլիքիանի և Հոգ։ Տ. Վազգեն վրդ. Թաղոյիանի։

Այս կեսօրին, Վեհափառ Հայրապետը ձաշի հրաւիրուած էր յատկապէս Ժամանէն և Լիանէն եկած աղգայիններու խուօրի մը հետ, գլխաւորութեամբ Պարոն Մարտիրոս Շէլլէֆիանի և ներկայութեամբ Պարոն Նարաւէն Պիւլլիքիանի և Հոգ։ Տ. Վազգեն վրդ. Թաղոյիանի։

Ակնհամար Հայրապետը տեսնելու եկած էր նաև Անգլիայ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Ներօէս Եղա. Պօղապարեան, որ Վեհափառ Հայրապետին հետ մնաց մինչև անոր մեկնուամի օրը։

Երբ Նորին Սրբութիւնը Փարիզ հասաւ Փետրաւար 9ին, յաջորդ օրն իսկ հետաձյնավ խօսեցաւ Երուասքէմ Ամեն, Տ. Եղիշէ Պատրիարքին հետ, հրաւիրելու համար զի՞նք և Գերշ. Տ. Շահնէ Արքեպոս. Ամէմանը որ իրեն հանդիսիւու գայիքին Փարիզ Նորին Ամենապատութիւնը, ընկերակցութեամբ Տ. Շահնէ Արքեպիսկոպոսին, Փարիզ հասաւ Երկուշարթի գիշեր և Վեհափառ Հայրապետին ընկերացաւ ճաշկերոյթներուն և հաւաքայթներուն։ Այդ տաթիւ տնօնք խորհրդակցաւթիւն մը ունեցան Նորին Սրբութեան հետ Եպիսկոպոսական Ժաղավի գումարումի մասին, և մեր Եկեղեցւոյ կետնքին հետ կապսաւծ այլ հարցերու առնչութեամբ։

Ուրբաթ, Փետրաւար 17ի գիշերը, Փարիզի Կինթըրքոնթինենթու պանդոկի մեծ սրանին մէջ պաշտօնական ճաշկերոյթ մը կազմակերպուեցաւ ի պատիւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Փարիզի Հայութիւնը փութացած էր իր յարգանքի և սիրոյ զգացումները ներկայացնելու Նորին Սրբութեան։ Օրուան Առենապետութիւն էր Արքամեան Եւրոպայի

կաթողիկոսական Պատուիրակ Գերց. Տ. Աերովրէ Արքեպօս. Մանուկեսոն, որ հանդիսաւորապէս բացաւ երեկոյթը՝ ոզգոյնի գեղեցիկ խօսքով մը Եսրին Սրբութեան ուղղուած։ Փարիզի Եկեղեցւոյ Հագոբարձութեան Ատենապետ Տիմար Աեղբարկ Քարեան յաջորդեց Նորին Սրբազնութեան ճառով մը, ուր ուժգնօրէն պատկերացուց Տ. Տ. Վազգէն Վեհափառ նուաճումները և Կաթողիկոսական գահին վերածաղկումը վերջին քառներկու տարիներու ընթացքին։ Այսուհետեւ գլխաւոր խօսովը եղաւ Ամեն։ Տ. Եղիշէ Արքեպօս. Տէրտէրեան, Պատրիարքը Հայ Երուսաղէմի։ Պատկերաւոր, կուռ և բանաստեղծական թռիչքով մը որ յատուկ է իր ոճին, ան գծեց Վեհափառ Հայրապետի կեանքն ու գործունէութիւնը իրեն հովատապետ, իրեն շինարար, իրեն իմաստուն և հեռատես Հայրապետ, Վերջին խօսքը ներկաներուն ուղղեց Նորին Սրբութիւնը, նոխ յայտնելով իր շնորհակալութիւնը և յուղումը որ Փարիզ իր կտարած անպատճոն այցելութիւնը վերածուեցաւ տօնի մը և հանդիսութեան, շնորհիւ Հայ ժողովուրդի սիրայն և համակրանքին հայրենիքին և Մայր Աթոռ Ա. Էջմիածնին։ Ապա մտերօնիկ և զգայուն շնչառվ մը Նորին Սրբութիւնը խօսեցաւ իր ժողովուրդին հետ, հայկական գիտակցութեան և հայկական գիտութեան հետ կապուած զանազան հարցերով։ Զրոյցի ոճով մը ան իմաստնօրէն և բարձր զգայնութեամբ մանրամասնօրէն քննարկեց Հայ մնուլու և հայկական ինքնութիւնը հարազատօրէն պահելու գուշաբռութիւնները, մանաւանդ արտասահմանեան պայտմաններու մէջ, և կոչ ըրաւ արտասահման ծնած և օտար մշակոյթներու երկինքին տակ մեծցող Հայ երիտասարդութեան որ ոչինչ զիջին հայկական իրենց ինքնութիւններ՝ այսօրուան աշխարհը յաւզող հոսանքներուն ժեղք։

Այդ երեկոյթին Փարիզի Քաղաքապետը զրկած էր յատուկ նամակ մը իր ներկայացուցիչին միջոցաւ։ Ատորե կու տանք այդ նամակին գեղեցիկ բովանդակութիւնը։

LE MAIRE DE PARIS

Paris, le 17 Fevrier 1978

Sainteté,

C'est aujourd'hui seulement que j'ai appris que Votre Sainteté était de passage dans notre capitale et qu'Elle y achevait son séjour.

Les liens d'amitié séculaire tissés entre la France et les Arméniens, et la signification exceptionnelle que prend, de ce fait, la présence de Votre Sainteté au milieu des fidèles de son peuple venu en grand nombre trouver refuge au foyer de la nation française, me font regretter vivement d'avoir été informé si tardivement.

J'aurais eu à cœur, en effet, de recevoir comme il sied, Votre Sainteté en cet Hôtel de Ville pour lui addresser le salut déférant du peuple de Paris.

Mon collaborateur Bernard Billaud étant indisponible ce soir, j'ai chargé Monsieur Jacques Rigoult de me représenter auprès de Vous et de Vous faire tenir ce message d'estime et d'amitié.

Je prie Votre Sainteté de bien vouloir agréer l'hommage de mes sentiments les plus profondément dévoués.

Jacques Chirac

Sa Sainteté Vazken

Patriarche Suprême et

Catholicos de Tous les Arméniens

վերոյիշեալ ճաշկերոյթին ներկոյ էր նուև Պելմիքայի Հայ համայնքը ներկայացնող տաս անձնբէ բազկացոմծ պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Պելմիքայի Հայոց Գաղութային Վարչութեան նախագահ Տիար Եղուարդ ժախանի:

Նոյն Աւրաթ օրը, Կրեկոյեան ժամը 6ին, Վեհափառ Հայրապետը պաշտօնական այցելութիւն մը տաւաւ Ֆրանսայի Արտօքին Գործոց նախարար նորին վահմութիւն էնի Տը Կրենկոյի: Նորին Վեհափառութեան կ'ընկերանային Գերշ. Տ. Աւրովրէ Արքեպիսկոպոս, Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս և Գերշ. Տ. Ներսէս Եպիսկոպոս: Վեհափառ Հայրապետի կառքը հիւրանոցէն մինչև Քէ ա'Օրսէ տաւաջնորդուեցաւ յատուկ սոտիկան շաբախումրով և նորին Արրութիւնը Քէ ա'Օրսէյի մաւարդին ողջունուեցաւ Արտօքին Գործոց վահմ: Նախարարին կողմէ: Էկա ժամ տեսզ տեսակցութեան ընթացքին նորին Արրութիւնը հետաքրքրական խօսակցութիւն մը ունեցաւ Ն. Վահմութեան հետ, ընդհանրապէս Հայերու և Հայ Եկեղեցւոյ կացութեան մասին, բայց յատկապէս Ֆրանսա ապաստան գտնող թրքանոյ և Լիբանանահանայիրու մասին, որոնք գժուարութիւններու կը հանդիպէին վերջերս: Այդ առթիւ Արտօքին Գործոց նախարարը հետաքրքրուեցաւ Երուսողէմայ և Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսն ներկայացուն նորին վահմութեան այն հարցերը որոնք կոպունէին Երուսաղէմ ընակող քրիստոնէական համայնքներուն հետ: Խօսակցութեան վերջաւորութեան, Ն. Վահմութիւնը որոշեց յատուկ հազորդագրութիւն մը զրկել թերթերուն այս տեսակցութեան մասին: Մտորե կու առնք Փարիզի թերթերուն մէջ հրատարակուած այդ հազորդագրութիւնը: —

Mr. de Guiringaud, ministre des affaires étrangères, a reçu, vendredi 17 février, Sa Sainteté Vazken I^{er}, catholico de tous les Arméniens, qui était accompagné de Mgr. Adjemian, adjoint de l'archevêque de Jérusalem, et de Mgr. Manoukian, délégué du catholicos en Europe. Sa Sainteté Vazken I^{er} est patriarche d'Etchmiadzine en Union soviétique. Le ministre — indique le Quai d'Orsay — a souligné que les droits et priviléges historiques des communautés chrétiennes en Terre sainte devront être respectés dans le cadre d'un règlement au Proche-Orient. Il a rappelé la position de la France en faveur de la conservation et de la protection des Lieux saints des trois grandes religions monothéïstes, auxquels notamment une totale liberté d'accès doit être assurée.

Շաբաթ կէսօրին. Վեհափառ Հայրապետը սոտիկաններու շքախումրով մը առաջնորդուեցաւ օգտկայան, ուր փաւթացոմծ էին Երուսաղէմի Հայոց Պատրիարքը, Արքամեան Եւրոպայի կոթողիկոսական Պատուիրակը, Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս Աճէման, Գերշ. Տ. Ներսէս Եպիս. Պօղապալեան, Գերշ. Տ. Գիշտ Եպիս. Խոգհանչեան, վարդապետներ, քահանայ հայրեր և մեծ թիւով ազգայիններ: Պատույ սրահին մէջ ներկայ էր սաև Սովետական Դեսպանատան Առաջին Բարեկառ Պարուն Գիշորդեան: Վահափառ Հայրապետը մինչև օգտանու առաջնորդուեցաւ խումբ մը եկեղեցականներու և ազգայիններու կողմէ, և մեկնեցաւ գէպի Մասկուտ և Երևան, հրաժեշտ առնելէ հաք իր ընկերութեամբ, ուրախ և չողուն արածագրութեամբ:

ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ

ՄՈՎՍԵՍ ՔՅՆ. ԱՐՁԿԵՑԻ

(1440? — 1505?)

Մովսէս Արձկեցի որդին էր Դանիէլ Քահանայի և Հայիսաթունի : Ծր-նած է չուրջ 1440-ին : Իրրեւ զպիր յիշուած է 1460-ին : Հայրը յայտնի զրիչ մըն էր, ինքն ալ հետեւեցաւ հօրը արուեստին և զարձաւ «քաջ քարտուղար» : Ունէր երկու որդիներ՝ Միքայէլ և Անանիա :

Գրչագրական իր աշխատանքներէն կրնանք յիշել հետեւեալները .

1. — Գանձարան, օրինակած և ծաղկած է 1472-ին, Արձկէ քաղաքին մէջ, ի վայելումն իր որդուոյն Միքայէլի — Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, էջ 331-332, Լ. Ս. Խաչիկիան :

2. — Յայսմաւուրքի մը Երկրորդ Հատորը, օրինակած է 1481-ին, Արձկէի մէջ, Մկրտիչ կրօնաւորի խնդրանքով — Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 1:

3. — Շարական, օրինակած է 1482-ին, Թումայ կրօնաւորի համար .— Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 35:

4. — Ժողովածոյ—Տաղարան, օրինակած է 1485-ին, Ամիթի մէջ, «ի վայելումն համշիրաք եղաօր տէք Յովանիսին», «առ ի յիշողութիւն անկեղծ սիրոյն» — Զեռ. Երուսաղէմի, թիւ 1647:

5. — Ճառընտիր, օրինակած է 1491-ին, Արձկէի մէջ, զործակառութեամբ Յակոբ զրչի, տանուտէր Խալիֆի խնդրանքով — Զեռ. Երեւանի, թիւ 4822 :

6. — Մեկնութիւն Կաթողիկեայց Թղթոց՝ Սարգսի Շնորհայոյ, օրինակած է 1493-ին, Արձկէի մէջ, Խաթայ Վարդան Եպիսկոպոսին համար .— Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 258:

7. — Աւետարան, օրինակած է, Արձկէի մէջ, 1501? թուին, երբ «իմախոսական արարին բատէք թախթին զԱլուանթին» .— Յուցակ Զեռագրաց Մուշ Քաղաքի, թիւ 21 :

Մովսէս Արձկեցի զրած է նաև տաղաչափեալ մանր տարեգրութիւն մը, 1473-ին, պատմական հարուստ բովանդակութեամբ (1467-1473) .— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, էջ 333-337 :

Զեռագիր Տաղարաններու մէջ կը զտնուի տաղ մը իր անունով, «Մարդասէր Հայր . . .» սկզբնաւորութեամբ, և «Մովսէսի է Երգ» ծայրանով .— Զեռ. Ս. Յ. Յիւ 135, ձեզ. թիւ 1521, ձեզ. թիւ 1249, ձեզ :

Սառըեւ կը ներկայացնենք այդ տաղը :

Մարդուսէր Հայր զըմթութեան
 ինեամել զամենայն,
 որ զմրդիդ քո սիրական
 ետուր մեղ փրկան:
 Որ ստեղծուածն նախնական
 զգերին դիւական,
 Հաներ ի փառս զերակայն
 յանկելոցն կայան:
 Վանիչ սանդարամետեան
 Որդիդ կուսական,
 զծընունդ բոլոր ադամեան
 վերածեր ի կեանս:
 Արբարար Հոգւոց մարդկան
 սրբեա եւ ի ժաման,
 զնընչեցեալ այս անարժան
 ըստ մերոյ Հայցման:
 Էնդ Աստուած սաստիկ Հնչմամբ
 մաքրող վերնատանն,
 մաքրեա զհոգիսն ամենայն
 որ ի քեզ ննջեան:
 Արբող զջուրսըն նախնական
 եւ այժմ զաւագան,
 զհոգիսն որ ի քէն ծընան
 միշտ պահեա անվան:
 ի սամարը քաւարան

Ժողովեալքալքան Համայն,
 ընդ ննջեցելոյս փրկութեան
 Հայցեմք միամայն:
 փասն եղօրըս մեր ննջման
 լըսել զփողոյն ձայն:
 Երկնից արքայիդ տեսլեան
 լինել սմա արժան,
 խառնիւ ի դասն անդրանկեան
 յօրն աներենկեան:
 Բամից զուարթնոցն որ կան
 քեզ Տէր փառարան,
 պարակցի եւ առ նոցայն
 ի փառս անգախճան:
 Գրեալ մեղք սորա լըման
 ընաւ ջնջի Համայն,
 լըսէ զքաղցըր լուրըն զայն
 մուտ յուրախութեան:
 Արբովրէից փառատրութեան
 կըցորդի սորայն,
 փառս երդել միշտ յաւիտեան
 Սուրբ Երբորդութեան:
 ի . ԱՐՔ . ԾՈՎԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԺԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

առաջ բարեկար նման
մասնակութ պատճենաւայ ունի
համար ունենալով զայտ
մամանու ունացոյ ընթեռն
ունացն առաջ առաջ ունացն
մամանու ունացոյ ընթեռն

La Version Arménienne est, selon moi, la Reine de toutes les Versions du Nouveau Testament ...

On peut rétablir le Texte des Septante en une infinité d'endroits par les moyens de cette Version ...

M. V. La Croze

Ա. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԿԱՆՈՆԸ

Համաշխարհային դրականութեան գլուխք-գործոցներից մէկն է Աստածուունչ մատեանը, որի բարգմաթիւ հին թարգմանութիւնների շարքում հայկականը բանասիրական համբաւ է վայելում որպէս «Թաղուհի թարգմանութեանց»՝ սկսած ԺԷ դարից։ Հայկական թարգմանութիւնը, որը կատարուել է եւ դարում, մեսրոպեան տառերով գրի առնուած առաջին երկն է եւ հանդիսանուեմ է հայ գրաւոր մշակոյթի հնագոյն յուշարձանը։

Աստուածաշունչ մատեանի հայերէն թարգմանութեան մասին մանրամասն աեզեկութիւններ են հազորդում պատմական աղբիւրներ՝ և դարի մատեագիրներ կորիւնը, Ղազար Փարացին եւ Արմեն Խորենացին, իսկ մեր ժամանակների բանասիրական դրականութեան մէջ թարգմանութեան պատմական հանգամանքների, նրա լեզուական, բնագրական եւ այլ հարցերի հետագոտութեանն են նույիրուած բարգմաթիւ ուսումնասիրութիւններ։

Աստուածաշունչ մատեանի հայկական թարգմանութիւնն ունիցել է որոշակիօրէն երկու տարրեր հանդրուաններ, կամ, ինչպէս ընդունուած է տաել, եղել են երկու թարգմանութիւններ։ Դրանցից առաջինը, որը մասամբ ասորերէն եւ մասամբ յունարէն սկզբնագրերից կատարուած թարգմանութիւն էր, պատկանում է հայկական տառերի գիւտից (405/406 թ.)¹ մինչեւ Եփեսոսի տիեզերական ժողովն (431 թ.) ընկած ըլջանին։ իսկ երկրորդը, որ նախորդի վերանայումն ու սրբազրումն էր Քիւզանդիսնից ձեռք բերուած յունարէն ըրնագրերի հետեւողութեամբ, պատկանում է Եփեսոսի ժողովին անմիջականորէն յաջորդող տարիներին։

Առաջին շրջանում՝ Մեսրոպ Մաշտոցը Եղեսիայում տառերի գիւտն անելուց յետոյ՝ անցնելով Սատուսատ, որպէսզի այնտեղ Յոյն գեղագիր Հռովանոսի ձեռքով այդ տառերը գծագրական ձեւաւորման ենթարկի, այսուղի էլ իր աշակերտներից Յովհան Եկեղեցացու եւ Յովակի Պաղնացու Հետ միասին կատարեց Աստուածաշնչի գրաւոր թարգմանութեան առաջին փորձը՝ սկսելով Առակաց գրքից, ինչպէս պատմում է նրա կենսագիր Կորիւնը. «Եւ եղեա, ըսկիդրն թարգմանելոյ գդիրս նախ յԱռակացն Սոլոմոնի, որ ի սկզբանն իսկ ծո-

¹ Երաւանի Տէր-Միմասեան, «Հայոց գրեգի գիւտի թուականի եւ այլ յարակից ինդիբների մասին», Բամբեր Մատեանալարանի, թ. 7, Երևան, 1904, էջ 25-48։

նօթս իմաստութեանն ընծայեցաւցանէ լինել, ասելով՝ եթէ Շանաշէլ դիմու-
տութիւն եւ զիրատ, իմանալ զբանս հանձարօյ՝ որ եւ զբեցաւ ձեռամբն այնո-
րիէ զբչիչ²:

Այնուհետև Մեռպապը վերագանուեք է Հայաստանի ժայրաքաղաք
Վաղարշապատ, սկիզբ է գրւում Հայաստանի լուսաւորութեան մեծ զործին ո՛չ
միայն դպրոցների հիմնարժմաքր եւ նորագիւտ տառերի ուսուցմամբ, այլիւ
թարգմանական հանձուն զործունէութեամբ։ Առակաց զրբից յետոյ՝ Սահակ
Պարթեա, Մեհրապ Մաշտոցի եւ նրանց աշակերտների աշխատանքով Հայաց-
ուամ հետ Մովսէսի Հնկամատեանը, մարգարէական դրբերը, Պօղոսի եւ առաքե-
լական ուրիշ թղթեր, ինչպէս եւ աւետարանները։ Այդ մասին է զրուտ զործ-
եալ կորինը. «Յայն ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց ան-
պարման սպանչելի լինէք. յորում յանկարծ ուրիմն Օթէնսուսոյց Մովսէս՝ մար-
դարէական դասուն, եւ յառաջադէմն Պօղոս՝ բավանդակ առաքելական դնդո-
վրն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարաննաւն Քրիստոսի միանդամայն եկեայ
հասեալ ի ճենն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք դտան»³։

Սակայն Կորինի վերոյիշեալ տուեաներն այս շրջանում թարգման-
ւած զրբերի մասին ամբողջական պատկերացուեք չեն տալիս։ Այդ մասին լրա-
ցուցիչ տեղեկութիւնը մենք կտուում ենք Մովսէս Խորենացու մօս, որի համա-
ձան Բարդմանութեան զործը Առակաց զրբից յետոյ շարունակուել էր՝ «բո-
վանդակելով զբան եւ զերկու յայտնիսն եւ զնոր կտակազ»։ Այս տեղեկութեան
հիման վրայ մենք պիտի ընդունենք, որ Խորենացին այսուղ 22 «յայտնի» դրբ-
երը⁴ ասիլիս նկատի ունի Հին Կտակարանի կանոնը՝ բայ երայականի Երրո-
յական կանոնի համաձայն, ինչպէս բացատրուած է Հերոնիմոս Սորիդոնացու
կողմից լատինական Վույդատայի առաջարանում (Prologus galeatus)։ Հին Կր-

2 Հետրին. Վարք Մաշտոցի (Հրատ. Մ. Արեգեանի), Երեւան, 1941, էջ 50։

Կորինի բնագրի այս եւ յարակից մասիր վերաբերեալ կարեւոր դիմուգութիւններ
առեան՝ Մ. Արեգեան, «Հայոց Հին զբանաւոթեան պատմութիւն», զիրք Ա, Երեւան, 1944,
էջ 87-89 («Առաջին Թարգմանութիւններ» եւ Թարգմանութիւններ), 575-588 («Մաշտոցի զործն Ե-
ղափառացում» եւ Ամֆոսացում)։

3 Հետրին. Վարք Մաշտոցի, էջ 56։

4 Ալովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց (Հրատ. Մ. Արեգեանի եւ Ա. Յա-
րութիւնների), Թիֆլիս, 1913, էջ 327։

5 Եթեր մատենագրական ազրիւթերում յայտնի եւ զարտնի կամ ծածուկ տեղմին-
ներով են հշտում Աստուածածերի կանոնական (վաւերական) եւ անկանոն կամ պարականն
(անվակար) կոչուած զրբերը։ Այդ մասին մենք արդէն խօսել ենք ուրիշ առթիւ, տե՛ս Յ. Ա.
Անառեան, «Հայեական մատենագրաւոթիւն Ե-թիւ գդ.», Հայ. Ա., Երեւան, 1959, էջ X եւ
898-910։

Այս առթիւ նշենք, որ անկանոն կամ պարականն զրբեր հասկացողութիւնը երկու
տորբեր տուումներ ունի։ Բաղադրականները կանոնական Ընդունելով միայն երբայական կանոնի
ընդդրկած զրբերը՝ մեացածներն առհասարակ պարականոն եւ համարում եւ անուանում։ Մինչ
պատմական հումբին ունեցող եկեղեցիները՝ Յունականը, Հայեականը եւ Լատինականը, եր-
բայական կանոնում եղածները՝ Համարելով նախականն զրբեր եւ երկրորդականն զրբերի շարբից դւրս
մեացածները։ Հաշուի առնելով այս իրողութիւնը՝ Հայեական Աստուածաշնչի մասին խօսելիս
պէտք է զբոյլ լինել պարականն ակրժինի զործածութեան ժամանակ, թիւրիմացութիւնների
ռեկի շատը համար։

սամկարանն ամփոփւում էր 22 զրքերի մէջ, ըստ որում Դատաւորաց զիրքը եւ Հռուր-ը՝ կաղմում էին 1 միաւոր, Թագաւորութեանց Ա եւ Բ զրքերը՝ 1, Թաւ- գաւորութեանց Գ եւ Դ զրքերը՝ 1, Երեմիայի մարդարէութիւնն ու Ռդը-ը՝ 1, Երկուտասամ մարդարէից զրքերը՝ 1, Մանացրդաց Ա եւ Բ զրքերը՝ 1, Եզրի Բ եւ Գ (Նէեմի) զրքերը՝ 1. Իսկ հետեւեալ զրքերը կաղմում էին 1-ական միա- տրներ. Ծնունդ, Ելք, Աւտականք, Թիւք, Երկրորդ օրէնք, Յեսու Խաւեայ, Խայայի, Եգիլիկլ, Յոր, Սաղմանք, Առակի, Ժառովող, Երգ Երգոց, Դամիել և Եսրեր⁶, որոնց գումարն անում էր 22: Մրանք, զատ-զատ հաջուելով, այն 39 զրքերն են, որոնք մեր այժմեան կանոնում անուանում են Նախականն զրքեր: Միայն պիտի նկատի ունենալ, որ Դամիելի Գ զիսի 24-90 համարները եւ ԺԴ ու ԺԴ դուստներն ամբողջութեամբ, ինչպէս նաև Եսթերի Ժ զիսի 4 հա- մարից մինչև ԺԶ զիսի 24 համարը երբայական կանոնում չկան, այսինքն նա- խականն չեն. այդ հատուածները պատկանում են այսպէս կոչուած Երկրոր- դականն զրքերի շարքին:

Վերոզրեալ՝ 22 զրքերից բաղկացած կանոնի ծագումը Հայաստա- նում՝ անչուշտ առորական Պէշիտատոյից էր⁷, որը պարսկական գերիշխանու- թեան սահմաններում Հեղինակութիւն էր վայելում Առորական Եկեղեցու ու- նեցած քաղաքականապէս արտօնեալ դիրքի չնորհիւ: Բայտ Երեւոյթին՝ այս- պիսի կանոնի որդեգրման հետեւանքով է, որ անհրաժեշտ էր դարձել նաև Հե- րոնիմոս Սորբիդոնացու Առաջարանի թարգմանումը, որը, ինչպէս կարծւում է, տեղի ունեցած պէտք է ինի Ե դարում յունարէնից⁸:

Ինչ վերաբերում է Նոր Կտակարանին՝ նրա կազմի մասին Խորենացու առուած տեղեկութիւնը որոշակի չէ: Կորիւնի վերոյիշեալ տեղեկութիւնն այդ մասին թէւ առելի որոշ է, բայց թէրի է: Կորիւնից, ինչպէս նշեցինք վերե- ւում, միայն յայտնի է, որ թարգմանուել էին Աւետարանները, Պողոսի թըղ- թերը եւ առաքելական միւս թղթերը. բայց թէ առաքելական թղթերից որո՞նք էին բնգունելի համարում այդ ժամանակ, եւ Նոր Կտակարանի միւս զրքերը եւս թարգմանուել էին թէ ոչ, անյայտ է մեռում:

Այս մասին մենք պիտի առաջնորդուենք նորից Խորենացու թելազ- րած ուղիով, ըստ որում եթէ Նոր Կտակարանի կանոնն էլ հարկ է որոնել Ա- ռորական Եկեղեցու աղղեցութեան սահմաններում, ինչպէս Հին Կտակարանի- նը, ապա պիտի նչել, որ մեսորապեան տառերի զիւտի ժամանակաշրջանում Ա- ռորիների մօտ դույութիւն ունէր չորս Աւետարանների մի հին թարգմանութիւն, որը Բ զարի յունարէն անտիռքեան բնադիրն էր ներկայացնում եւ որն այժմ բանասիրութեան մէջ յայտնի է Խամզիլին դա-Մեհիարքիշէ անունով: Առ- բուլաց, որ Եղեսիայի եպիսկոպոս եղաւ 411-435 թթ., այդ թարգմանութիւ- նը վերանայեց ու մօտեցրեց յունական անտիռքեան այն բնադրին, որն օպտա-

6 Հմմատ. Հերոնիմոս Սորբիդոնացու Վաւան ի քան եւ յերկուս զիրոս եւլու, Համ- դես Ամսօրեայ, 1920, էջ 411-428: Հերոնիմոսի ցուցակը լիովին Համապատասխան է Երբայր- էան կանոնին. Հմմատ. “La Sainte Bible qui comprend l’Ancien et le Nouveau Testament traduits sur les textes originaux hébreu et grec par Louis Segond”, nouv. éd.. Paris, 1937.

7 Երբայրէան կանոնի հման՝ համապատասխան Պէշիտատ եւս չունէր Եսթանասնից րը- հոգրի պարանուկած երբայրդականուն զրքերը. Rubens Duval, “La littérature syriaque”, 3e éd. Paris, 1907, p. 30.

8 Տե՛ս Հ. Արիստ. Վարդանեան, «Եերոնիմէնյ վասն ի քան եւ յերկուս զիրոս առ- ի Հերբայեցուց զարաւրութիւնն առժանալոյց», Համզէս Ամսօրեայ, 1920, էջ 385-428: Հ. Դ. Ալիմինան, «Դամական Հայերէնը և Վիեննական Միթրարեան դրացը», Վիեննա, 1932, էջ 38:

գործման մէջ էր և դարի սկիզբներին թարուլասի կողմէց վերանայուած այս թարգմանութիւնը հիմք հանդիսացաւ նոր Կտակարանի ասորական այն խրժ- թարգմանութեանը, որը յայտնի է Պեշիտոս անունով և որի կազմը համայրուեց և դարի ընթացքում: Անկախ այն խնդրից, թէ հայերէն թարգմանութիւնները ո՞ր լիզուից էին կատարուել —ասորերէնից, թէ յունարէնից, — կանոնի հար- ցում անկասկած ենթարկուած էին ասորականին, որի ներկայացուցիչը Պեշիտոսն էր: Նախնական Պեշիտոսն, չորս Աւետարաններից բացի, բովանդակում էր նաև Գործք առավելոցը, որին կցուած էին կաթողիկեայ թղթերից երեքը՝ Պետրոս Ա-ը, Յովհաննու Ա-ը և Յակոպի թուղթը. և Հովսի Ա-ժի թղթերը: Նրա կազմում չկային առաքելական միւս թղթերը և Յայտնուրինիք: բացակայում էին նաև Ղուկասու Աւետարանի ԺԲ գլխի 17-18 տները և Յով- հաննու Աւետարանի Ը գլխի 1-11 տները⁹:

Ապահովաբար այս պատկերն ունէր նոր Կտակարանի կանոնը նաև Հայաստանում:

Այսպիսով՝ Հին եւ նոր Կտակարանների հիմնական մասերը հայոց- ւել էին հարկական թարգմանութիւնների այս առաջին շրջանում, և դա է, որ օգտագործման մէջ էր Հայաստանում մինչեւ Եփեսոսի տիեզերական ժողովը:

Թարգմանութեան երկրորդ շրջանն ընկնում է, ինչոքս նշեցինք, և փեսոսի ժողովին յաջորդող տարիներին:

Այս շրջանի գործունէութիւնը կայանում էր նախկինում կատարուած թարգմանութիւնները վերանայելու և պականները լրացնելու մէջ:

Նախկին թարգմանութիւնները, մեր աղքիւրների հաղորդման համա- ձայն, համարւում էին «փութանակի»՝ շտապ կատարուած անբաւաբար թարգ- մանութիւններ: Սահակ Պարթեիի եւ Մեսրոպ Մաշտոցի աշակերտները Բի- գանդիոնից բերում են Հին եւ նոր Կտակարանների գաւերական օրինակներ, ո- րոնց հիման վրայ ճեռնարկուում է նոր աշխատանքի կազմակերպմանը: Խոսե- լով այդ մասին՝ Կորինն ասում է, որ «երանելույն Սահակայ... առեալ հան- գերձ եղնակաւ զյառաջազոյն զյանկարծագիւտ զիութանակի զթարգմանու- թիւն»՝ հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք¹⁰. իսկ Խորենացին ասում է, որ վաւերական օրինակներն ստանայուց յետոյ՝ «առեալ մէծին Սահակայ եւ Մեսրոպայ՝ գարձեալ թարգմանեցին զմի անզամ թարգմանեան փութանակի, հանդիբ նորոք վերոտին յօրինեալ նորոգմածը»¹¹: Ի հարկէ՝ հասկանալի է, որ այդ աշխատանքին մասնակցուում են մի խումբ թարգմանիներ:

Բիւզանդիոնից բերուած յունարէն ընադրերը, Կորիւնի եւ Խորենացու օգտագործած տերմիններով, հանդիսանում էին հաստատուն, նշմարիս եւ բա- տոյզ օրինակներ: Այս օրինակների որդեգրումը Հայաստանում՝ անհրաժեշտու- րէն առաջ էր բերում երկու նոր պահանջներ. նախ՝ վերանայումը նախկին թարգմանութեան ինպերէրի, երկրորդ՝ թարգմանումն այն զրքերի, որոնք նախկին թարգմանութեան ժամանակ դուրս էին մնացել Հին եւ նոր Կտակա- րանների մինչեւ այդ բնդունուած կանոնից:

Նախկին թարգմանութեան վերանայման ինդիբը կազ ունի բնադրա- կան հարցերի հետ: Այդ ինդիբն կ'անդրադառնանք յետոյ: Ինչ վերաբերում է Աստուածաշնչի այն դրքերին, որոնք նոր են թարգմանուել այս շրջանում, ապա այդ մասին՝ պիտի նկատի ունենալ Հետեւեալը:

⁹ Նոր Կտակարանի ասորական խմբագրութիւնների եւ յատկապէս Պեշիտոսի մո- րին տե՛ս՝ Rubens Duval, "La littérature syriaque", p. 37-42.

¹⁰ Քերպին. Վագր Մաշտոցի, էջ 70:

¹¹ «ԵՄՊԱՏԻՍ Խորենացու Պատմութիւն Հայոց», էջ 343:

Հին կոտակարանի հիստորում, Ցինօթիտ և նոյն օրինակներն ուրիշ բան չէին, և ի՞չ ոչ յունական աշխարհում բնուունուած Խօրանասմից բնադրիք, որի կանոնը, բացի այն 39 նախականն զրքերից, որոնք առորական Պեշիանոյի կանոնն էին կաղուում, ընդգրկում էր նույն մայություն կոչուած երկրորդականոն գրքերը՝ Եզրի Ա, Յուդիփ, Տովիփիր, Մակարայեցւոց Ա-Դ, Խմանուրին Սուդումնի, Խմանուրին Ենուալյ որդույ Սիրակայ և Բարուք. ինչպէս նույն Դամիլելի և Եսրեր-ի գրքերի այն ժի քանի Հատուածները, որոնք բացուկայում էին Պեշիանոյի կանոնում¹²; ինչպէս նշեցինք վերեւում: Եօթանասնից կանոնի այս դրգերն էին, որ նոր Թարգմանուեցին Հայերէնի¹³, ըստ Երեւոյթին՝ բացուութեամբ Մակարայեցւոց Դ գրքի, որի Թարգմանութեան Հետքոյ չեն նկատուած. Հայ, Մատենագրութեան մէջ¹⁴: Գրանց մեծ մասը և զարի Հայ Հեղինակներ, երկերում օգտագործուել եւ կամ յիշատակուել են արդէն¹⁵ և միայն մի քանիքն են, որ չեն յիշատակուել՝ Յուդիփ, Մակարայեցւոց Դ և Բարուք. բայց այս կամ այն գրքի ինչպէս յիշատակումը, այնպէս և յիշատակուած չենք: Օրմանութեան մէջ՝ անչույտ յոկ պատահականութիւն է: Անուհանդ հրձ՝ այդ իւնուրի մրոյ կտրելի է որու յոյն սփուել կանոնական որոշումների օջուութեամբ, այն որոշումների, որոնք միշտ էլ ընդունուած են Եղել քրիստոնէական Եկեղեցիների կողմից թէ՛ Արեւելում, թէ՛ Արեւմուռում. մեզ մօտ՝ Եփեսոսի ժողովից յիսոյ, երբ նրանք բերուցին Հայատան: Մենք նրկատի ունենք նախ քեանուք կողմանուց՝ կամ յամանաք եւ կանոնք ուուրբ առաքելոց՝ ի ձեռն կզեմայ, առաքեալ Հեթանոսաց» կոչուածը և ապա այն, որը յայտնի է Համանք Լաւդիկեայ անունով: Այս երկու կանոնախօների վերջին յօդուածները նույրուած են Աստուածանչի կանոնի ճշտմանը, կղեմեան խրժումը Զե յօդուածը, իսկ Լաւդիկի ինքրում՝ և յօդուածը (ըստ յունարքէն բազարէն գուգահամարարար:

12. Հմատ. „The Old Testament in Greek according to the Septuagint; edited... by Henry Barclay Swete”, vol. I - III. Cambridge: University Press, 1887 - 1894.

Այս Հրամատակութիւնը Հետազանւմ կը նենք. “Տեր.” մեւով:

13. Արդէն բացուութիւն՝ Դամիլէի գրքի թէ՛ նախկինում Թարգմանուած մասերի վերանայումը և թէ՛ նոր մասերի Թարգմանումը եղել է ոչ թէ յաւնարէն Եօթանասնից Թարգմանութեան հիման վրայ, այլ Թէկոնութիւնի յաւնարէն Թարգմանութեան, որովհետեւ այդ գրքի Եօթանասնից յաւնարէնը քրիստոնէական աշխարհում անշատապակ Համարում էր չամ թերի. ամ' և Հայկականի հետ հմատ. Եօթանասնից և Թէկոնութիւնը բնագրերը գուգահամարար.”

„The Old Testament in Greek according to the Septuagint”, vol. III, p. 498 - 593.

14. Մակարայեցւոց Դ գիրքը երբեք կանոնական չի Համարուել յայն, Հայ եւ լուսին Եկեղեցիների կողմից: Այդ գիրքը յիշատակում է և զարութ Անսեմի Շիրակացու կազմած ցուցակում (Շիրեց որչափութեան տանց Հին Կոնֆարանաց), ամ' Համիլէն Ամեօրեայ, 1908. Էջ 21: Եթանականում է նաև թթ զարութ Յովհաննէս Սարկաւագի կողմից կարգաւորուած գրքերից ցուցակում (Հինրզադրութիւնը գրոց որբոց սուուգարանեցան ի Սարկաւագ վարդապետէնց), ամ' և Հետեւել երկում. «Միսիթարայ Այրիկանեցւոյ Պատմութիւն Ժամանակականներ» (Հրատ. Ք. Պատմանականի), Պատմերուր, 1867, Էջ 35: Սակայն Միսիթար Այրիկանեցին իր յայտնի Ճարշնուրում, Աստուածանչի գրքերն ընդօրինակելիս, Մակարայեցւոց Պատմագիտան ցուցակից իրեն յայտնի եղան այդ գրքին չի պատահել:

15. Հմատ. Մեսրոպ Տեր-Մօվսեսյան, „История перевода Библии на армянский язык”, Петербург, 1902, стр. 191 - 192. Ի Հարկէ չի բացաւում, որ նրանցից մի քանիսկ օգտաւած լինեն Հին Փութանակի Թարգմանութիւնից:

նագրերի)։ Մենք ունենք այս կանոնախմբերի հայերէն հին թարգմանութիւնները, որոնք եւ զարից են, բայց ստիպուած ենք դիմել նրանց յունարէն բնադրերին, որովհետեւ հայերէն թարգմանութիւններն այս մասում այլայլուած են և չեն օգնում դործին։

Կղեմեան ԶԵ յօդուածն¹⁶ իր բնդհանուր բնոյթով արդէն Եօթանասնից կանոնն է արտայայտում։ Այստեղ որպէս կանոնական յիշատակուում է նախ Յուդիթ-ը՝ «Յուդիթայ» 1 գիրք։ բայց նաև ուրիշ կողմից յայտնի է, որ Նիկիոյ ժողովի գործերում այդ գիրը յիշատակութեան է արժանացել կանոնական դրբի հանդամանքով¹⁷։ Այսուհետեւ Կղեմեան յօդուածում յիշատակուում են նաև Մակարայեցոց գրքերը՝ «Մակարայեցոց» 3 գիրք։ նշանակում է՝ Ա. եւ Բ. գրքերի հետ միասին Գ. գիրքը եւս կանոնական էր համարում նաև Հայաստանում։ Եւ մեր կարծիքով դրա ապացոյցներից մէկն էլ այն է, որ Լաւոդիկեան յօդուածում (յունարէն) թէեւ Մակարայեցոց գրքերից ոչ մէկի մասին յիշատակութիւն չկայ։ —Եւ չէր էլ կարող լինել, որովհետեւ Լաւոդիկեան յօդուածը երրայական կանոնն է արտայայտում, այսինքն՝ նախականոն դրբերն է միայն թուարկուում։ բայց նրա հայերէն բնադրում թարգմանի. ք ժուծում է կատարել «Մակարայեցիք» անորոշ ձեւով¹⁸, անշուշտ նկատի ունենալով միաժամանակ երեք գրքերը եւ զգալ տալով, որ գրանք եւս բնդունելի են Հայերի համար։ Լաւոդիկեան է յօդուածից Հայերը գիտէին, որ կանոնական է նաև Բարուֆ-ը¹⁹։ Սրանք էին Հին Կտակարանի նոր թարգմանուած դրբերն այս չը ջանուած²⁰։

¹⁶ Յունարէն բնագիրը տե՛ս՝ Ch.-J. Hézéle, "Histoire des Conciles d'après les documents originaux," t. I, Paris, 1869, p. 643-644 (ԶԵ յօդուածը)։

Կղեմեան կանոնախմբերի հայերէն թարգմանութեամբ տե՛ս Հետանշաղիք Հայոց (Հրատ. Վազգէն Յակովեան), Համ. Ա., Երևան, 1964, էջ 67-100, բայց խնդրոյ առարկայ յօդուածը բացակայում է այստեղ։ Ընկերով իր տեղից՝ այդ յօդուածը անցել է «Հարած հետեւոցաց» կանոնախմբին եւ կցուել է նրա վերջին ինչ յօդուածին, տե՛ս՝ անդ, էջ 112-113։ Նոյն յօդուածը պատահարար կցուած ենց զանում նաև Պարտակի ժողովի որոշումների վերջին՝ ինչ յօդուածին, տե՛ս՝ Հետանշաղ Պարտակի ազգային ժողովի (Հրատ. Ա. Ղաւճեանի), Վազգարշապատ, 1905, էջ 28։ Այս ժաման տե՛ս՝ Շովական (Նորայր Արք. Պաղարան), «Պարտակի ժողովին կանոններուն վերջին յօդուածը», Ալմ. 1944, էջ 26-27։ Թիւրիմցութեան մէջ են եղել այն ուսումնասիրողները, որոնք, Ասուտածաշնչի կանոնական հարցերի ժամանի խոսելիս, յիշեալ չօգուածը համարել են Պարտակի ժողովի որոշում։

¹⁷ Ch.-J. Hézéle, "Histoire des Conciles...," t. I, p. 361-362.

¹⁸ Լաւոդիկեի ժողովի է յօդուածի յունարէն բնագիրը տե՛ս՝ Ch.-J. Hézéle, "Histoire des Conciles...," t. II, Paris, 1869, p. 165-166.

Այս յօդուածը Լաւոդիկեի ժողովի կանոնների հայերէն թարգմանութեան մէջ, ուր զարձել է ՄԵ յօդուած, ազաւազուել է եւ կորցրել իր գէմքը, տե՛ս՝ Հետանշաղիք Հայոց։ Համ. Ա., էջ 241։

¹⁹ Հին Կտակարանի Լաւոդիկեան կանոնը, լիովին համապատասխան երրայականին, որի ժաման մէնք խօսեցնե վերեւում, ընդգրկում էր 22 գիրք՝ միայն մի փոքրիկ շեղումով։ այստեղ երեխայի ժարգարէութեանը կցորդուած է ոչ միայն երեխայի Ազրը, ինչպէս պահանջում էր երրայականը, այլ նաև Բարուֆն ու նրեմիայի Թուղթը («Քուղթ» առ զերեւլուն)։ Լաւոդիկեան այս չեղումն անշուշտ արդիւնք էր այդ ժամանակներում Հին Կտակարանի գրքերի կանոնականութեան շուրջ եղած տարածայնութիւնների։

²⁰ Նոր թարգմանուած այդ երկրորդականոն գրքերի հարցում վշիպում զոյութիւններ Բարզէն վրդ. Թօփէնանի մէջ յօդուածում՝ «Հայերէն Հին Կտակարանի պարտականոն գըրշերը», Ալմ. 1966, էջ 273-276։ Օգտագործելով մի քանի բողոքական եւ սուր ուսումնասիր

իսկ որո՞նք էին Նոր Կտակարանի այն գրքերը, որոնք նոր թարգմանակցին : Այստեղ խնդիրը վերաբերում է միայն կաթողիկեայ թղթերին, որովհետեւ Յարտնութեան զիրքն այս շրջանում դեռ ճանաչում չուներ ինչպէս Ասուրական Եկեղեցու, այնպէս եւ բիզոնդականի պաշտօնական կանոնում : Պետքառոյի կանոնով Հայերը զիրէին, ինչպէս նշեցինք, կաթողիկեայ թղթերից միայն երեքը, մնացած չորսը երկրայիշի զրքերի շարքին էին դառւում եւ այժմ է, այսուհետեւ են երկրորդականոն գրքեր անունով . գրանք էին՝ Պետրոսի Բ-ը, Յովհաննու Բ եւ Գ թղթերը, ինչպէս եւ Յուլյայի թուղթը : Արդ՝ այս երկրորդականոնները թարգմանուելու էին այս շրջանում : Ժամանակակից հեղինակներից եղինիկ կողացու մօս վկայակոչումներ կան Պետրոսի Բ եւ Յուլյայի թրդթերից²¹ : Այս փաստը ցոյց է տալիս, որ Հայերը Նոր Կտակարանի Պետքառոյի սահմանից դուրս էին եկել՝ ընդորեկելով նաև երկրորդականոն գրքերը, որոնց թուում, ի հարկէ, նաև Յովհաննու Բ եւ Գ թղթերը²² : Արդէն հնարաւոր է, չէր, որ վերջիններս բացառութիւն կազմէին, եթէ նկատի ունենանք, որ Նոր Կտակարանի այն հաստատուն, նշմարիտ եւ ստոյգ օրինակները, որոնք կատարուող աշխատանքների հիմքն էին կազմում, ուրիշ բան չէին, բայց եթէ պաշտօնագիս վատերական ճանաչուած այն բնագրերը, որ Դ գարում Եւսերիոս կեսարացին պատրաստել էր Բիզոնդական Եկեղեցու օգտագործման համար, իսկ Եւսերիոս կեսարացու կանոնը լրիւ բովանդակում էր կոթողիկեայ եօթ թուղթերը²³ : Դեռ չենք խօսում այն մասին : որ Կղեմեան եւ Լաւողիկեան յօդածները նոյնակու կանոնական էին Համարում այդ թղթերը²⁴ :

Կորիւնը, որն իր երկը գրի է առել 413-451 թուականների միջեւ, ա-

րութիւններ, որոնց մօտեցումը կանոնականութեան հարցերում խօսուր է Համեմատուում Հայ րանսականիթեան գնահատումների հետ, յօդուածագիրը պարականն է անուանում Հայոց երկրորդականն զրքերը : Դրա հետ միասին՝ նույն մեր, նորա Ա-ն անուանում է նորան Բ : իսկ պարականն նորան Գ անուանածը Հաւանարար նորան Դ կութողիկեայ կոչուածն է, եթէ նկատի ունենանք, որ միայն առ է Հայկական կանոնից զույր մնացած նորանը : մեզ մօս նորան Գ է անուանուում նեկիլի-հ : Բացի այդ՝ յօդուածագիրը թերթմացարար Հայկական կանոնից դուրս մնացած է Համարում Եւսերիսիրերը : Նորեր Բ, Ավուգանն (ուղղել՝ Շուշան), նոր երից սրբոց մանիկան է : Պատմութիւն նիւյա եւ Վիշապի : Արանք բոլորն էլ կան Հայկական կանոնում՝ որպէս երկրորդականոն մասեր համացից տուղթներ մեր Եսթերի գրքի մ գլուխ 4-13 մեեր, և մեռմահ գլուխներն է կազմում : Երկրորդը՝ Դամիէլի գրքի մ-ի զլուխն է կազմում : Երրորդը՝ Դամիէլի Գ զլուխ 24-90 մեերն է կազմում : չորրորդը՝ Դամիէլի մ-ի զլուխն է կազմում : Պատմութիւն ու առաջ ինձնել պատրաստակութիւնների Հիման վրայ Հայկական կանոնի մասին եղանակութիւններ անելիք :

²¹ Մ. Տեր-Մօվսեսյան, “Իշտ. պեր. Եալիլի և արմ. յազ.”, ստ. 192.

²² Յօվհաննու Բ եւ Գ թղթերի մասին պէտք է նաև նկատի ունենալ, որ նրանք չք հնաւու առ Համարում իրեն յաւելուած յարեալ լինէին յԱռաջին թուղթն, առեւ Համեմատ Հրատարակ Մինչը : «Յայտնութիւն Յօվհաննու, Հին Հայ թարգմանութիւն, զառաջինն ած ի լոյս : Ձերէտէրի Մուրատ», Երուսաղէմ, 1905-1911, Ներածութիւն, Էջ Մկդի : Առաջի Եւ առաջ արթնակ չէ : որ նրանք մեր ազգի բներութիւններում մասնածին չեն յիշաւակուել, մանաւանդ որ ծաւուալք չէ շատ փաքը են :

²³ ՏԵՌ Ֆր. Մուրատի Ներածութիւնը, անդ, Էջ Մժլ-Միկ:

²⁴ Ch.-J. Héfél, “Histoire des Conciles ...”, t. I, p. 643-644; t. II, p. 165-166.

Կղեմեան յօդուածի այն մասը, որը Նոր Կտակարանին է վերաբերում, անհամ կուրած է Հայկական թարգմանութեան մէջ : իսկ Լաւողիկեան յօդուածի այդ մասը Հարազատարէն զաւուած է, առեւ զկանոնագիրը Հայոց, Հայ. Ա, Էջ 241:

ռաքեալների «Քաջութիւնները» (առաքինութիւնները) դրուատելիս գրում է Հետեւեալ տողերը. «Տեսանել զոմանց [գքաջութիւնս] ի սուրբ Աւետարանին եւ զոմանց ի Գործս Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագրեալ. և իցեն որ ի Կարութիկէս Առաքելոցն առաւելազոյն ճանաչին. այլ սրբոյն Պատղոսի չորբեամանեռումք քըրովկ պատմէ զիւր առաքելակիցս եւ նիգակալիցս»²⁵:

Այս տողերն արտայայտում են Նոր Կտակարանի կանոնական համարւած գրքերի առկայութիւնն ու դասաւորութիւնը Հայաստանում՝ նոյնինքն թարգմանիչների օրով: Այսուեղ ընդողիկուած գրքերի գումարը Համապատասխանում է նաև Նոր Կտակարանի հայկական այժմեան կանոնին, բացառւթեամբ Յայտնութեան գրքի, որը Հետագայում է միայն աւելացել կանոնի վրայ:

Այսպիսով տեսնում ենք, որ Հին եւ Նոր Կտակարանների հայերէն թարգմանութիւնները, թէ՛ նախնինսոսեան եւ թէ՛ յետեփեսոսեան չըջանում, հիմնուած էին պաշտօնական կանոնների վրայ: Ասուուածաշունչ մատեանը, ինչոքս ամէն տեղ, այնպէս եւ Հայաստանում, չէր պատկերացւում առանց կանոնի. այդ պատճառով էլ Ղաղար Փարագեցին իր յայտնի թղթում, իր ժամանակի տղէտներին մեղադրելիս, նշում էր, որ նրանք Ասուուածաշունչի գրքերի անուններն ու թիւն անզամ կարգին չղիտեն: «Բայ այժմ յոյովք ի լիրը ժախողաց՝ եւ զանուանս անզամ եւ կամ զքանօնութիւնս կանոննեալ եկեղեցական գրենոյ Հաղիւ կարեն զիտել»²⁶:

Այս բոլորից երեւում է, որ Ե զարի առաջին կէսում մենք ունէինք երկրորդ՝ վերանայուած ու լրացուած թարգմանութեամբ, կանոննեալ Ասուուածաշունչ մատեանը, որի բնագիրը հասել է մինչեւ մեր օրերը եւ հանդիպանում է Հայկական Ասուուածաշունչի ընկալեալ բնագիրը:

Բ. ԱՐԱՋԱԽԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԲՆԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ

Ընկալեալ բնագրի օգնութեամբ կատարուած բանասիրական Հետազոտութիւնների արդիւնքով այսօր կարելի է զաղափար կազմել Ե զարի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնների չութեան մասին: Այլ խօսքով՝ այսօր արդէն փաստական նիւթերի հիման վրայ կարելի է տեսնել երկու թարգմանութիւնների որոշակի զանազանութիւնը: Ուսումնասիրութիւնները Հնարաւորութիւն են տուել մի կողմից թարգմանական որոշ բնագրերի մէջ Հաստատելու թարգմանութիւնների առաջին չըջանութ օգտագործուած ասորերէն եւ յունարէն սկզբանագրերի առկայութիւնը, իսկ միւս կողմից որոնելու Հայկական բնագրերի առնչութիւններն իրենց սկզբանագրերի հետ:

Վաղուց էր Նկատուել Ասուուածաշունչի որոշ գրքերի տարրեր թարգմանութիւնների դոյութեան փաստը:

Դեռևս Թ զարում Թուիժմա Արծրունին Խութեցինների մասին դրում էր, թէ նրանք «դիման զաղմասոսն զէին թարգմանեալոն վարդապետացն Հայոց, զոր Հանապատ ի բերան ունին»²⁷: Ի Հարկէ՝ Հնարաւոր չէ Հաստատօրէն ասէ:

25 «Կորին. Վարք Մաշտոցի», էջ 32:

26 «Ղաղարայ Փարագեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (Հրատ. Գ. Տէր Մկրտչեանի եւ Ստ. Մալխանեանի), Թիֆլիս, 1904, էջ 201:

27 «Թուիժմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն առն Արծրունեցց», Պետքը, 1887, էջ 121:

թէ ի՞նչ էր հասկանում պատմադիբը «Հին թարգմանեալ» ասելով, բայց հաւառնական է, որ խօսքը նախնիեսոսեան շրջանի թարգմանութեան մասին է:

Մեր օրերում բանասիրութիւնը զգալի նուածումներ է կատարել նման շարցերի բնագաւառում:

Հին կտակարանի կապակցութեամբ՝ Հ. Յովհաննէս Զօհրապետնը 1805 թ. իր հրատարակած Աստուածաշնչի առաջարանում նշում էր, որ ձեռագրերում նկատելի են Առակաց, Փողովողի եւ Երգ երգոցի այլեւայլ թարգմանութիւններ²⁸:

Յենուելով բնագրական ցուցումների վրայ՝ Ժողովողի գրքի կրկին ուրինակների գոյութեան փաստի մասին ուշադրութիւնն են հրաւիրել նաև Նորայր Բիւզանդացին²⁹ եւ Հ. Ն. Ալիքնեանը³⁰: Վերջինիս կարծիքով Ժողովողի գրքի ինչոքէս սրբագրուած (երկրորդ թարգմանութեան) օրինակը, այնպէս եւ սկզբնական (առաջին թարգմանութեան) օրինակը յունարէն բնագիր է ցոյց տալիս:

Մովականը (Նորայր Արք. Պողարեան) Ժողովողի բնագրի մասին համեմատութիւններ է կատարել Ուկան Երեւանցու եւ Հ. Յ. Զօհրապետնի հրատարակած բնագրերի միջեւ, որից եւ յանդել է այն համոզման, թէ «մեր առջեւ ունինք Ժողովողի երկու հին եւ ուրոյն թարգմանութիւններ»³¹: Թէ ուստիմասիրողը այդ երկու թարգմանութիւններից ո՞րն է համարում նախնական՝ այդ մասին ոչինչ չի տառւմ:

Հ. Հ. Ուկեանը Երգ երգոցի սովորական բնագրի հետ միասին լուս է բնձայի մի նոր օրինակ, որը համարւում է առաջին շրջանի թարգմանութիւններից: Հրատարակչի գնահատութեամբ՝ «այս նորագիւտ բնագիրը ուղղակի յունարէնի վրայէն եղած թարգմանութիւնն մըն է եւ այն՝ նախնական թարգմանութիւններց»³²:

1890-ական թուականներին Գրիգոր Խալաթեանցի Հրատարակութեամբ դիտական աշխարհին յայտնի դարձան Մնացորդաց Ա. եւ Բ. գրքերի այնպիսի օրինակներ, որոնք տարրերւում են սովորական բնագրից եւ ընդունուեցին որպէս սոսրերէնից կատարուած հին թարգմանութեան մնացորդներ³³:

Այսօր յայտնի է, որ Միքայէլ եւս գոյութիւն ունի Հնագոյն երկու

Ֆ. Կոնիբերի կարծում է, որ այս վկայութիւնը վերաբերում է նախամեսորոշման: «Ճանինի պատկանող մի անգիր թարգմանութեան, անուշ՝ „The Key of Truth; a manual of the Paulician Church of Armenia”, (Հրատ. F. C. Conybeare-ի), Oxford, 1898, p. LXV. Բայց Հիմք չկայ այսպիսի կարծիքի յանդելու:

28 «Աստուածուածունց մատեան Հին եւ Նոր կտակարանաց» (միշտարեակ), Վենեսուալի, 1805, էջ 6:

29 Նորայր Բիւզանդացի, «Կորիւն վարգապետ եւ նորին թարգմանութիւնը», Թիֆլիս, 1900, էջ 384, ծան.:

30 Հ. Ն. Ալիքնեան, «Սուրբ գրքի հայերէն թարգմանութիւնը», Հանդէս Ամսօրեայ, 1895, էջ 560-561:

31 Մովական, «Ժողովողի հին հայ թարգմանութիւնները», Սինէ, 1936, էջ 45-48:

32 Հ. Ա. Ուկեան, «Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը». Ուսումնասիրութիւն եւ բնագիրը, Վենեսուալ, 1924:

33 Գր. Խալաթեանց, «Մի կարեւոր գիւտ Ս. Էջմիածնի Մատենագարանում». Ա. եւ Բ. Մնացորդաց գրքերի սոսրերէնից հայ թարգմանութիւնը, Արարատ, 1896, էջ 311-317: Նոյն, «Գիրք Մնացորդաց ըստ Հնագոյն հայ թարգմանութեանց», Մակուտ, 1899:

Թարգմանութիւններով . դրանցից մէկը Զօհրապեանի Հրատարակութիւնն է³⁴ , իսկ միւսը՝ Հ. Ա. Բաղրատունու³⁵ : Բաղրատունին ինքը՝ այս երկու բնագրերը համարել է Սահակ-Մեսրոպեան շրջանի առաջին եւ երկրորդ թարգմանութիւններ³⁶ : Ակինեանը եւս , Սիրաքը համարելով այն գրքերից , որոնք «հասած են մէզի թէ՛ փութանակի թարգմանութիւնը եւ թէ՛ անոր սրբագրեալ օրինակուր» , առել է , որ փութանակի թարգմանութիւնը Զօհրապեանի Հրատարակածն է , իսկ սրբագրուած օրինակը՝ Բաղրատունու հրատարակածը³⁷ : Մէնք , բնագունելով , որ այստեղ իրօք զործ ունենք Սահակ-Մեսրոպեան շրջանի երկու տարրեր թարգմանութիւնների հետ , կը փափաքէինք մէ ճշում անել : Այնքանով , որքան յարոնի է , որ նախնինուսունեան թարգմանութիւնների շարքը , ինչպէս տեսանք վերեւում , միայն նախականն գրքերն էր բնդդրկում՝ բատ Պեշիտոսյի կանոնի , ապա նրանց մէջ չէր կարող զանուել Սիրաքը . սակայն բազուուած չէ , որ մէր թարգմանիչներն արտականոն որոշ գրքեր եւս թարգմանած ինեն , այդ թւում նաև Սիրաքը : Այդպիսի փաստեր մէնք ունենք նաև նոր Կոտակարանի թարգմանութիւններից , օրինակ՝ Կորնթացոյ Գ թուղթը եւ չոս պատաժանը , որոնք Պ. Ֆետուերի կողմից համարուել են ասորերէնից կառուրուուած թարգմանութիւններ նախնինուսունեան շրջանում³⁸ :

Անցնենք Նոր Կոտակարանին :

Նոր Կոտակարանի այժմիան՝ ընկալեալ բնագրում եւս բանասիրութիւնը նշել է ասորերէնի բազմաթիւ հետքեր :

Յ. Կ. Կոնիքիրը ասորերէնից կատարուած հին թարգմանութիւնների մի բնիոր է Համարում Մարկոսի Աւետարանի վերջի 9-20 տները , այն Հատուածը , որը կրում է Արիստոն երիցու անունը³⁹ :

Յ. Մակերը Աւետարանի եօթ ձեռագիր օրինակների օդտագործմամբ մի քանի Հատուածներ Համեմատելով յունական եւ ասորական բնագրերի հետ , յանդում է այն կարծիքին , թէ թարգմանութիւնը յունարէնից է կատարուել , յուր եւ դիմուի է տայի ասորականի հետ մօտիկութեան կամ Համաձայնութեան կէտեր՝ դրանք համարելով ասորերէնից կատարուած հնագոյն թարգմանութեան մնացորդներ :

Ա. Մ. Մէրկը Հայերէն Աւետարանների մէջ մատնացոյց է արել ասորանութիւններ , որոնք , նրա կարծիքով , կարող են յինել ասորերէնից կատարուած մի նախնին թարգմանութեան մնացորդները , եթէ չենթագրենք , որ

34 «Աւետարաններ մատեմ» (միհատորեակ) , Վենետիկ , 1805 . յաւելուածի էլ 2-12 :

35 Հրատարակել է նախ առանձին՝ «Խմաստութիւն Եկուուայ որդույ Սիրաքայ եւ Քուղթ Երեմիայ ժարգարէի առ գերեալս ի Բարիլոն» , Վենետիկ , 1823 . էջ 11-153 . եւ ապա՝ Աւետարաններ կազմում՝ «Գիրք Աւետարաններ Հիմնացութեան կամ Վենետիկաց» , Վենետիկ , 1800 . էջ 681-704 :

36 Տե՛ս վերոյիշեալ «Խմաստութիւն Եկուուայ որդույ Սիրաքայ» , էջ 6-8 :

37 Հ. Ն. Ակիմեան , «Անուբար գրքի Հայերէն թարգմանութիւնը» , էջ 559 եւ 561 :

38 «Հայկական ուսումնականութիւնը Հայոցէտ Պ. Ֆէբէրէի , ի մէ ամփոփուած և թարգմանուած» (Հրատ. Հ. Ա. Տաշեանի) , Վենետիկ , 1895 . էջ 142-193 :

39 F. C. Conybeare , "Ariston, the author of the last of the twelve verses of Mark" , *The Expositor* , 4th series , vol. VIII , 1893 , p. 241-254 . Idem , "The authorship of the last verses of Mark" , *The Expositor* , 4th series , vol. X , 1894 , p. 219 - 232 . Idem , "On the last twelve verses of St. Mark's Gospel" , *The Expositor* , 5th series , vol. II , 1895 , p. 401 - 421 .

40 F. Macler , "Le texte arménien de l'Évangile d'après Matthieu et Marc" , Paris , 1919 .

յունարէն բնագրից թարգմանողը ձեռքի տակ ունեցել է նաև մի ասորերէն բնագրի՝ որոշ համեմատութիւնների համար⁴¹:

Այս խնդրում օժանդակ նիւթեր է տալիս նաև Աստուածաշնչի վրացերէն հնագոյն թարգմանութիւնների բնագրական հետազոտութիւնը: Յայտնի արեւելագէտների ուսումնասիրութիւններով (Ն. Մառ, Հ. Գուսեն, Թ. Կուզէ, Ռ. Բլեյկ, Կ. Լեյկ, Ս. Նիու, Ս. Լիոնէ, Ժ. Գարիս, Լ. Լըլուար, Ժ. Կիւանդէ) ապացուցուած է, որ վրացերէն Աստուածաշնչը սկզբնարար Հայերէն բնագրից է թարգմանուել: Եւ ոչ միայն Աստուածաշնչը, այլև վարքագրական եւ այլ կարգի երկեր: Բայց է դարից սկսած, երբ Վրացական Եկեղեցին սրաշտօնակս բաժանուել է Հայկականից եւ, անցնելով բիւզանդական քաղկեդոնականութեան գիրքերին, պայքար է սկսվել Հայկականից անցեցնելի քարտուղարութիւնը: Այս կերպով նաև Աստուածաշնչի վրացերէն թարգմանութիւնը, որը հայերէնից էր կատարուել, որրադրութեան է ենթարկուել յունական բնագրերի հիման վրայ: Այսուհետեւ բանասիրութիւնն այսօր յայտնաբերում է Հայկական սկզբնադրի հետքերը:

Ն. Մառը անցեալ դարի վերջերին վրացերէն Հին եւ Նոր Կտակարանների հնագոյն օրինակների ուսումնասիրութեամբ եկել էր այն եղբակացութեան, որ նրանց հիմքում ակներեւոքէն առկայ են ասորական ծագում ունեցող Հայերէն բնագրերէ⁴²: Ռ. Բլեյկը եւս, Մարկոսի Աւետարանի ուսումնասիրութեամբ, դանում էր, որ վրացերէնը զալիս է ասորերէնից առաջացած մի Հայերէն բնագրից⁴³: Նմանակս Ժ. Գարիսի ուսումնասիրութեան համաձայն, դոյութիւն ունեն Գործք առաքելոցի վրացերէն օրինակներ, որոնք կազ ունեն ասորական մի բնագրից թարգմանուած Հայերէնից հետ⁴⁴:

Վրացական թարգմանութիւնների հետ կապուած նման փասուեր դեռ շատ կան, նրանց թւում նաև այսպիսիններ, որոնք մատնացոյց են անում ոչ միայն ասորերէնից թարգմանուած Հայերէն բնագրեր, այլև յունականից թարգմանուած Հայերէն բնագրեր, որոնք պատկանում են Հայկական թարգմանութիւնների նախկինուսեան շրջանին:

Այս բոլորը վերաբերում են Հայկական թարգմանութիւնների առաջին եւ երկրորդ շրջաններին պատկանող բնագրերի զանազանութեան Հարցին:

Կարելի է զեռ նաև յիշել, որ Մարգիս Հաճնեցի Մալեանը 1773 թ. երուսաղէմում կազմել է «Համեմատութիւն օրինակաց Աստուածաշնչի» աշխատութիւնը, որի Համար, Հիմք ընդունելով Աստուածաշնչի վենետիկեան 1733 թ. Հրատարակութիւնը, օգտագործել է Ս. Յակոբի վանքում եւ այլ վայրերում գտնուող ձեռագրեր, Հին Կոտակարան՝ 15 օրինակ, Նոր Կոտակարան՝ 23 օրինակ, Եպայիի մարգարէութիւն՝ 20 օրինակ: Տես վիեննայի Միսի. Մատան. № 244 եւ Վիեննայի Կայս. Մատ. (K. K. Hofbibliothek zu Wien) Հայերէն ձեռ. № 4:

⁴¹ Aug. Merk, "Die armenischen Evangelien und ihre Vorlagen", *Biblica* VII, 1926, S. 40-72.

⁴² Н. Я. Марр, "Из поездки на Афон", Журнал Министерства Народного Просвещения, ч. CCCXXII, 1899, № 3, отд. 2, стр. 12-15.

⁴³ R. P. Blake, "The old Georgian version of the Gospel of Mark", *Patrologia Orientalis*, vol. XX, 1928, p. 439-574.

⁴⁴ G. Garitte, "L'ancienne version géorgienne des Actes des Apôtres d'après deux manuscrits du Sinaï" (Bibliothèque du Muséon 38), Louvain, 1955.

Այստեղ եւս շօշափւում է կրինակի թարգմանութիւնների հարցը : Մարդիս Մալեանը նկատել է, որ որոշ օրինակների միջնու զոյտոթիւն ունեն թարգմանութեան արտակարգ տարրերութիւններ ։ Նա, օրինակ, գրում է :

«Վեցերորդ գլուխն Բարուքայ թղթոյն ի մի օրինակում միայն զատնեցաւ, եւ այն եւս ոչ էր յարմար ընդ տպագրեցելոյն, վասն որոյ ոչ եղեւ համեմատել . կարծէի թէ Ուկան վարգապետն ոչ տեսաննելով ի մէջ Հայոց՝ ինքն նորոգ թարգմանեալ է . զայս ասացի վասն անհամեմատութեանն եւ ոչ հաւաստի կարծեօք», «Հնդկասան Աստուածաշնչից երեքտառանքն համաձայնք էին միմեանց ի զիրս Յայտնութեան, եւ վեւ եւ մեն զրով նշանագրեալ Աստուածաշնչից միմեանց համեմատք . եւ վեւ զրով նշանագրեալ Աստուածաշնչի Առաջին եւ Երկրորդ Մնացորդաց դիրքն յամենից տարածայն զտանեցան, զտեղիս տեղիս թէսկտ նայեցայ, սակայն կարի հեռի ի տպագրեցելոյն» :

Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԳՐԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ

ՀԵՏՔԵՐԻՆ ԱՅԺՄԵԱՆ ԲՆԱԳՐՈՒՄ

Հայկական թարգմանութիւններին հիմք ծառայած սկզբնագրերի հարցում հիմնական դերը կատարել են Հին եւ Նոր Կոտակարանների յունական զանազան խմբագրութիւնները⁴⁵; որոնցից մի քանիսը, ինչպէս Անտիոքեանը և Կեսարեանը, տարածուած էին նաև ասորական աշխարհում՝ ասորեքն թարգմանութեամբ :

Այդ խմբագրութիւնների շարքում առաջին տեղը զրաւում էր այսպէս կուտած Որոգինեան բնագիրը, որը կազմուել էր Գ գարում եւ վերաբերում էր Հին Կոտակարանի Եօթանասնից թարգմանութեան վերանայմանը: Հաշուի առնելով, որ Եօթանասնից թարգմանութեան բնագիրն իր զոյտոթեան աւելի քան Հինդ գարերի ընթացքում այլայլութեան ու զզալի աղաւազութեար էր կրել, Ուրողինէս Աղեքսանդրացին այն վերանայեց իր ժամանակի երրայական բնագրի Հիմնա մրոյ, այդ նոյատակի Համար օգտագործելով Բ գարում Ակիւզասի, Սիմաքոսի եւ Թէոդոսիոնի ձեռքով երրայերէնից կատարուած յունարէն նոր թարգմանութիւնները: Որոգինէսի աշխատութիւնը բնագրերի մի Համագրութիւն էր՝ ամփոփուած վեց սինակներում: 1. Երրայական բնագիրը՝ երրայական տառերով: 2. Նոյն բնագիրը՝ յունական տառագործութեամբ: 3. Ակիւզասի թարգմանութիւնը: 4. Սիմաքոսի թարգմանութիւնը: 5. Եօթանասնից բնագիրը՝ վերանայուած Որոգինէսի կողմէից: 6. Թէոդոսիոնի թարգմանութիւնը, որը հրուած: Այս աշխատութիւնը կոչւած էր Վեցիշեան՝ Վեցսինակեան՝ Վեցածալ (Hexapla). կար նաև՝ այստեղից առաջին երկու սինակների վերացմամբ կազմուած մի օրինակ, որը յայտնի էր Քառիշեան՝ Քառասխնի՝ Չորեկիշեան՝ Չորեխսինակեան՝ Չորեկինի (Tetrapla) անունով: Աւրեմն Եօթանասնից թարգմանութեան Որոգինեան վերանայուած բնագիրն այս աշխատութեան վերջընթեան սինակները սինակն էր, որի վրայ Ակիւզասի, Սիմաքոսի եւ Թէոդոսիոնի թարգմանութիւններից աւելացուած էին երրայական բնագրի այն Հատուածները, ու

⁴⁵ Երանց ժամին տե՛ս՝ The Encyclopaedia Britannica, 9th ed., vol. XXI, Edinburgh, 1886 p. 668-669. F. G. Kenyon, "Our Bible and the Ancient Manuscripts", London, Eyre and Spottiswoode, 1965, p. 103-109. Հ. Զարթանալեան, «Մատենագորան Հայկական թարգմանութեան նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 96-97.

բռնք պակասում էին Եօթանասնից Հին բնագրում եւ այդ աւելացումները նշանակուած էին աստղանշերով . իսկ Եօթանասնից բնագրի այն հատուածները , որոնք չկային երրայական բնագրում , նշանակուած էին բրդաձեւ նշաններով : Բացի այդ՝ Եօթանասնից թարգմանութիւնը նաև որոշ ուղղումների էր ներկուած միւս թարգմանութիւնների հիման վրայ :

Որոգինէսից յետոյ , Դ զարում , Հանդէս են եկել Հին եւ Նոր Կոտակարանների յունարէն բնագրերի ուղղագրուած այլ խմբագրութիւններ : Դրանց շարքում ամէնից յայտնին՝ Կեսարիան կամ Պատմիւլեան բնագիրն էր , որը կոչւում էր նաև Պատեստինեան կամ Երուսաղէմեան . զա կարդաւորուեւ ու կազմուել էր Պաղեստինեան Կեսարիայում Պամփիւլոս Բերիւտացու եւ Եւսերիս Կեսարացու ձեռքով եւ տարածուել . Պաղեստինում ու Փոքր Ասիայում : Այսուհետեւ յայտնի էր այսպէս կոչուած Անտիոքեան կամ Լուկիանեան բնագիրը , որ կազմել էր Լուկիանոս Անտիոքացին եւ որը տարածուած էր Անտիոքից մինչեւ Կ . Պոլիս . այս բնագիրն է , որ օգտագործել են Յովհան Ասկերեանը եւ թէոգորեան Անտիոքացի պատմագիրը : Յայտնի էր նաև Աղեքսանիրեան կոչուած օրինակը , որ կազմել էր Հեսոփքիոս Եղիպտացի երեցն Աղեքսանդրիամ եւ տարածուել էր Եղիպտոսում ու շրջակայ երկրներում :

Արդ՝ մեր առաջին թարգմանութեան սկզբնագրերի հարցին մի որոշ նպաստ ըերբում են զարձեալ վրացական Աստուածաշնչի ուսումնասիրութիւնները : Ա . Բեյկի եւ ընկերների բնագրական հետազոտութիւնները պարզեցին , որ վրացերէն Մարկոսի Աւետարանը , որն անտարակուուելիօրէն Հայերէնից է թարգմանուել , ներկայացնում է Կեսարեան բնագրի յատկանշեր , սակայն նրանք ենթադրում են , որ վրացականի մէջ պահուած Հայերէն այս Հին թարգմանութիւնը աւելի շուռ ասորերէն լեզուով սկզբնագիր պիտի ունեցած լինի , առաջ յունարէն⁴⁶ :

Ա . Լիոնէն վրացական եւ Հայեկական բնագրերի հարցում նոր ապացուցներով միանում է այս կարծիքին , այն տարբերութեամբ , որ Կեսարեան բնագրի խնդրում որոշակիօրէն հակում է յունարէն սկզբնագրի զաղափարին⁴⁷ , իր տող տեսակէտը միաժամանակ տարածելով Հայերէն Հին եւ Նոր Կոտակարանների վրայ առհասարական⁴⁸ :

Լ . Լըտուարը եւս գտնում է , որ Հնագոյն շրջանում Հայերէնից թարգմանուած վրացերէն Աւետարանները Կեսարեան խմբագրութիւն են ներկայացնում⁴⁹ :

Ժ . Գարբիոր նշել է , որ Գործք Առաքելոցի Հայերէն այն բնագիրը , որից թարգմանուել է վրացականը , ցոյց է տայիս ասորական մի այնպիսի բընդիր , որը տարբերում էր Պեշտառոյից⁵⁰ : Խնդիրն այսուղ վերտարերում է , անշուշտ , ասորական նախապէշտառոյին բնագրին , որն ընդհանրապէս ուշադ-

⁴⁶ K. Lake , R. P. Blake and S. New , "The Caesarean Text of the Gospel of Mark" , *The Harvard Theological Review* , 1928 , No. 4 , p. 207-404 . [R. P. Blake , "The old Georgian version of the Gospel of Mark" , *Patrologia Orientalis* , vol. XX , 1928 , p. 439-574 .

⁴⁷ St. Lyonnet , "Un important témoin du texte césaréen de Saint Marc : La version arménienne" , Beyrouth , 1935 .

⁴⁸ St. Lyonnet , "Aux origines de l'Eglise Arménienne . La traduction de la Bible et le témoignage des historiens arméniens" , *Recherches de Science Religieuse* , 1935 . p. 170-187 . Idem , "Les versions arménienne et géorgienne du Nouveau Testament" , Paris , 1935 .

⁴⁹ L. Leloir , "La version géorgienne de la Bible" , Բագրատիա . 1938 . Էջ 197-203 :

⁵⁰ G. Gariotte , "L'ancienne version géorgienne des Actes des Apôtres ..." .

բութիւնն է գրաւել նաև թ. կ. Կոնիրիրի: Վերջինս նկատել է, որ նոր Կտակարանի Հայերէն այժմեան բնագրի մէջ կան առաջին թարգմանութիւնից զեռ յայտնի կերպով մնացած շատ ընթերցուածներ, որոնք նախապէշխտոյեան բնագրի հետքեր են ցոյց տալիս⁵¹: Ի Հարկէ՝ նոխապէշխտոյեան համարուղ այս բնագրերի ինքնութիւնը զեռ հաստատուած չէ, ուստի եւ դժուար է կարծիք յայտնել այն առնչութեան մասին, որ նրանք կարող էին ունենալ յունական վերոյիշեալ խմբագրութիւնների հետ:

Գալոյի երկրորդ թարգմանութեան սկզբնագրի հարցին՝ արդէն նշեցինք, որ մեր թարգմանիչների կողմից կ. Պոլսից բերուած վաւերական օրինակները Բիւզանդական Եկեղեցում ընդունուած պաշտօնական բնագիրն էին: Այժմ աւելացնենք, որ դա նոյնինքն էնսարեան ընտիր բնագիրն էր, որից Կոստանդիանոս Մեծի պատուէրով, Եւսեբիոս Կոսարացին 50 օրինակ պատրաստելով կ. Պոլիս էր ուղարկել 311 թ.: Այս օրինակն է, որ անտարակոյս, Հիմք ծառայեց մեր երկրորդ թարգմանութեանը⁵²:

Բնագրական նորագոյն հետազոտութիւնների արդիւնքն ի նպաստ է այս կարծիքին: Յայտնի է, որ Մակլերի ուսումնասիրութիւնների ցոյց տուած ուղղութիւնը տանում էր գէտի Կեսարեան բնագիրը⁵³: Մարիտերը հակում էր ցոյց տալիս գէտի արդ ուղղութիւնը⁵⁴ և Լիոնէն⁵⁵ ու Կոլուելը⁵⁶ հանդէս էին, ային ամբապնդող փաստերով:

Սակայն բանասիրական հետազոտութիւնները հիմնականում կեսարեան բնագրին յանդելով հանդերձ, ցոյց են տալիս, որ մեր ընկալեալ բնագրում յունարէն սկզբնադրերի հետքերը միատարր չեն: Այս երեւյթը կարելի է բացատրել նրանով, որ կամ մեր թարգմանիչներն իրենց ձեռքի տակ միաժամանակ ունեցել են նաև տարրեր բնագրեր, կամ էլ՝ թարգմանութիւնների վրայ հետազայռմ ուղղումներ են կատարուել տարրեր բնագրերի հետևողութեամբ: Աւելի հաւանական է այս վերջինը:

Դեռ 1715 թուականին Մ. Վ. Լակրուզն առ Կոստանդինոս Բնենդիկտոս Միքայէլ ուղղած իր նամակներից մէկում այն կարծիքն էր յայտնում, որ Հին Կոտակարանի Հայերէն թարգմանութիւնը Աղեքսանդրեան սկզբնագիր է

⁵¹ F. C. Conybeare, "The Growth of the Pechithâ Version of the New Testament: illustrated, from the Old Armenian and Georgian Versions", *The American Journal of Theology*, vol I, 1897, p. 883-912.

⁵² Զայրապետներ Խախարասը, տե՛ս՝ «Ալետուածաշունչ ճառեան» (միհասորեան), Վենետիկ, 1805, էջ 4: Հ. Գ. Զարբէանաւեան, «Մատուեադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց», էջ 97: Ֆ. Կ. Կոնիրիր, «Պամփիւեան օրինակ Առւեր Քրոց», Բագմավէպ, 1895, էջ 200-212, 200-203:

⁵³ F. Macler, "Le texte arménien de l'Evangile d'après Matthieu et Marc".

⁵⁴ Հայ Լիոնէն. անհ' յաջորդ:

⁵⁵ St. Lyonnet, "La Version Arménienne des Evangiles et son modèle grec. L'Evangile selon Saint Matthieu", *Revue Biblique*, Janvier 1934. Տէ՛ս հայեւ այս հեղինակի յիշտակուած նախորդ աշխատաթիւնները:

⁵⁶ E. C. Colwell, "The Caesarean Readings of Armenian Gospel Manuscripts", *Anglican Theological Review*, vol. XVI, 1934, p. 113-132.

⁵⁷ "Thesauri epistolici Lactroianii tomus III", Lipsiae, 1736, p. 201.

⁵⁸ F. Kaulen, "Einleitung in die Heilige Schrift des Alten und Neuen Testamente", Freiburg, 1876.

ունեցել⁵⁷։ Հետազայում այդ կարծիքը բաժանել են կառւլենը⁵⁸ և էրմոնին⁵⁹։ Հ. Ս. Կողեանը Մակարայեցւոց Բ. գրքի բնագրական ուսումնասիրութեան արդիւնքներով կարողացաւ ցոյց տալ, որ Աստուածաշնչի հայկական թարգմանութեան մէջ թէ՛ Աղեքսանդրեան, թէ՛ Վեցիչեան եւ թէ՛ Լուկիանեան բնագրերի հետքեր կան⁶⁰։

Հ. Ն. Ակինեանը հաստատեց եւ ընդհանրացրեց այս եղբակացութիւնը՝ Հիմնուելով էջմիածնի Մատենադարարանի № 193 (= այժմեան Երեւանի Պետ. Մատ. № 193) ձեռագրի մի յիշատակարանի վրայ, որը գրուած է 1299 թուականին։ Այս ձեռագրերը բովանդակում է Սողոմոնի գրքերը եւ փոքր մարդարէները, որոնց վերջում յիշատակագրուած է։ «Ուղղեալ է զաւրինակս զայս յԱղեքսանդրացւոց եւ յԵրուսաղեմացւոց աւրինակէ»։ դարձեալ եւ ի Զորեք կնուոյն Ովրիգենին։ Գրեցաւ Երկուասան մարգարէս ըստ Եւթանասնիցն եւ երկուց թարգմանացն»⁶¹։

Այս յիշատակարանից երեւում է, որ հայկական թարգմանութիւնները ձշումների եւ ուղղումների էին ենթարկուել ոչ միայն Աղեքսանդրեան («Աղեքսանդրացւոց») եւ Որոդինէսի Քառիչեան բնագրերի հիման վրայ, այլև էրիկին անդամ ասուզուել էին Կեսարեան («Երուսաղեմացւոց») բնագրով, ժամանակի ընթացքում տուաջացած այլայլումների վերացման համար։

Հետեւութիւնն այն է, թէ հայկական թարգմանութիւնները պարբերաբար ստուգումների են ենթարկուել։

Այս կազմակցութեամբ ասենք, որ Որոգինէսի Վեցիչեանի եւ Քառիչեանի հետքերը՝ աստղանշերը և, Երեւան նաև, բրդածեւերը երեւում են մեր Հին գրչագրերում։ Ինչպէս նաև լուսանցներում որոշ ընթերցուածներ՝ Ակիւզասի, Սիմաքոսի եւ Թէոդոսիոնի թարգմանութիւններից։ Այսպիսի ձեռագրեր են՝ Երեւանի Պետ. Մատենադարարանի № 178 (1253–55 թթ.), № 4243 (1263 թ.), № 345 (1270 թ.), № 199 (1271 թ.), № 179 (1292 թ.), № 177 (1292 թ.), № 180 (1295 թ.), № 353 (1317 թ.), № 206 (1318 թ.), և այլն։ Այսպիսի մի օրինակ է նաև Վենետիկի Միխթարեան Մատենադարանի № 1 ձեռագրը (1319 թ.), որը Զօհրապեանին հիմնական օրինակ է ծառայել՝ Աստուածաշնչի քննական հրատարակութեան համար⁶²։

Վեցիչեանից եկող պայմանական նշանների (աստղանշեր եւ բրդածեւեր) և լուսանցագրութիւնների հաւաքումը, համագրումը և բազդատական կարգով ուսումնասիրումն անտարակոյս մեծ նպաստ կը բերի հայկական Աստուածաշնչի բնագրական ուսումնասիրութիւններին։ Թէ ի՞նչպէս՝ իրրեւ օրինակ բերենք Բ. Թաղաւորութեանց Գ. զիմի 33 տունը, ուր միհեւոյն նախադասութիւնը կը կնուել է Երկու տարբերակով։

59 Ա. Էրմոնի, «Քննադատական ուսումնասիրութիւն Ա. Գրոց հայկական թարգմանաթեան վրայ», Բազմավեպ, 1900, էջ 406–410։

60 Հ. Կողեան, «Մակարայեցւոց Բ. գրքին հայերէն թարգմանութիւնը», Վեճենա, 1923։ ամ' յատկապէս էջ 53–61։

61 Հ. Ն. Ակինեան, «Ա. Գրքի հայերէն թարգմանութիւնը», էջ 555։

62 Զեռագրի նկարագրութիւնը ամ' ա՛ Հ. Զարքիամալեան, «Մատենադարան հայկական թարգմանութեանց», Վենետիկ, 1889, էջ 129–141։ Հ. Յարսեղ Սարգսիսեան, «Մատ. ցուցակ հայերէն ձեռագրաց ժամանադարանին Միխթարեանց ի Վենետիկ», Հայ. Ա., Վենետիկ, 1914, էջ 1–20։

Միքայել պրվես մեռանիցի անօգամ, մեռաւ Արենինը. եթէ ըստ ժահ-
ւանն Նարազայ մեռաւ Արեններ :

Մէկը միւսից զանազանելու համար ընդդեցինք առաջինը :

Չեսագրերի Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այստեղ միւնոյն
նախադասութիւնն տարրեր ծագում ունեցող երկու թարգմանութիւնների միա-
կրցում է տեղի ունեցել :

Յունական Եօթանանից թարգմանութիւնը, որը ազրիւն է Հայկա-
կան թարգմանութեան, ունի միայն «Եթէ ըստ մահուանն Նարազայ մեռաւ Ա-
րեններ» ընթերցուածը (Sept. I 618), եւ այդպէս է նաև մեր Հնազոյն ձեռադ-
րերում. օրինակ՝ Երեւանի Պետ. Մատ. ձեռ. № 178 (էջ 165ա), № 345 (էջ
206բ) եւ № 177 (էջ 147բ), որոնցից առաջին երկուսը 1253-1270թթ. ընթաց-
քում են բնորինակուել, իսկ Երբորդը՝ աւելի ուշ՝ 1292թ. ընդօրինակութիւն
է: Այս նոյն ձեռագրերում, որոնք Վեցիջնանից եկած լուսանցագրութիւններ
ունեն, լուսանցներում գտնում ենք «Միթէ որպէս մեռանիցի անդգամ, մեռաւ
Արեններ» ընթերցումը, որը Սիմաքոսի յունարէն թարգմանութիւնից է, ինչ-
պէս ցոյց է տալիս «Սիմ» նշումը:

Սակայն տեսնում ենք, որ Հետազայ Ժամանակի մի շարք ձեռադրե-
րում Սիմաքոսի այս ընթերցուածը լուսանցներից անցել է բնագրի մէջ՝ Հա-
մատեղուելով նախկին ընթերցուածի Հետ: Այսպէս՝ Երկու ընթերցուածներն
արդէն Համատեղուած ենք զտնում Երեւանի Պետ. Մատենադարանի № 18)՝
ձեռագրում (էջ 138բ), որը 1295թուականից է, եւ № 353 ձեռագրում (էջ
152ա), որը 1317թուականից է: Այսպէս եւ՝ ուրիշ չափ ձեռագրերում. բաւա-
կան է ասել, որ Աստուածաշնչի Զօհրապեան Հրատարակութեան Համար օգ-
տագործուած 8 ձեռագրերն անխոտիր բոլորն էլ նոյն երկու տարրերակների Հա-
մատեղուած բնթերցումն են ներկայացնում⁶³: Այս երեւոյթի Հետ պիտի յիշել
եւ այն, որ Երեւանի № 206 ձեռագրում Սիմաքոսի ընթերցուածը լուսանցից
անցել է բնագրի մէջ՝ փոխարինելով նախկին ընթերցուածին, իսկ վերջինս
դուրս է բերուել լուսանցի վրայ (էջ 131բ): Հաւանարար կը զտնուեն այսպիսի
ուրիշ ձեռագրեր եւս:

Տարրերակների Համատեղման եւ կամ փոխարինման վերոյիշեալ Երե-
ւոյթը Վեցիջնանի կամ Քառիջնանի ազդեցութեան փաստերից է:

Բայց նմանօրինակ փաստերը, լինեն դրանք ազդեցութիւններ Վեցիջ-
նանից, թէ մի այլ ազրիւրից, իրենց էութեան մէջ մնում են գրչական թիւրի-
մացութիւններ եւ բնագրական զուցէ եւ անմեղ խախտումներ: Միւս կողմից
ընդօրինակողների անուշագրութեան Հետեւանքով առաջ եկած պատահական
ազաւագումներն, իրենց Հերթին, ոչ միայն բնագրի լեզուն են ազճատում, այլ-
և երբեմն նրա մտքերն են այլափոխում: Եւ որ աւելին է՝ կան դէպքեր, Երբ
բնագիրը խախտման է ենթարկւում զիտումնաւոր կերպով եւ որոշ նպատակնե-
րով: Այդ մասին մենք կը բերենք մի ակնառու օրինակ, որի վրայ Ժամանակին
ուշադրութիւն է Հրաւիրել Հ. Գ. Զարրեհանալեանը⁶⁴:

63 Հմմատ. «Աստուածաշնչի մատենե» (Հրատ. Հ. Յովհ. Զօհրապեանի, միհատու-
րակ), Վեհեմիկ, 1805, էջ 194:

Այս Հրաւարակութիւնն այսուհետեւ կը նշենք «Զօհր.» ձեւով:

64 Հ. Գ. Զարրեհանալեան, «Մատենադարան...», էջ 208-211:

Խնդիրը վերաբերում է Ղուկասու Աւետարանի ի՞ն գլխի 43-44 տներին, որոնք, ինչպէս նկատել է Զարքհանալեանը, Աւետարանի որոշ ձեռագրերում վերացուած են :

Այդ տներում պատմւում է, որ Յիսուսը Գեթսեմանի պարտէզում տաղնապահար արիւն էր քրտնում եւ ազօթում, եւ Հրեշտակից քաջայերանք էր ընդունում .

Եւ երեւցաւ նմա հրեշտակ յերկինց եւ զօրացուցաներ զնաւ . եւ էր ի տագնապի, եւ մտադիրութեամբ եւս կայր յազօրս : Եւ հոսէին ի նմանէ քըրտումի իրեւ զիկայլակս արեան ոլոսն ոլոսն հեղեալ յերկիր :

Արդ՝ է զարի վերջերին թէոդորոս Քոթենաւորի մի ճառից տեղեկանում ենք, որ Հայաստանում Մայրագոմեցի աղանդաւորներն առարկելով, որ Քրիստոս «ոչ տեկարութեամբ, այլ կարողութեամբ յաղթեաց մարտի թշնամւոյն», մերժում էին ընդունել վաւերականութիւնը Աւետարանի յիշեալ երկու տների, որոնք «յաղօթակացութեանն զահաքրտնութիւնն պատմեն ամենակարողի Բանին Աստուծոյ» . իսկ Քոթենաւորի աշակերտ Յովհան Օձնեցին յաջորդ դարի սկիզբներին, յանդիմանական խօսք ուղղելով նոյն աղանդաւորներին, առում էր .

«Եւ սակայն լիբր եւ չար լինելով՝ զանպարշտութեանդ ոչ գիտացեր դյագուրդ . . . Յորժամ տեսանես զմարդկալին ինչ ուրուք ճառեալ զՔրիստոսի կրիցն, յանդղնիս աներկիւղաբար ի գրեցելոց անտի՝ որ զայնն քարոզէ, ի բաց չնջել, զրանն» :

Ուրեմն Մայրագոմեցիներն «աներկիւղաբար» յանդղնել էին «ի բաց չնջել» Աւետարանի խօսքերը :

Ահա թէ ինչո՞ւ են վերացուած Ղուկասու Աւետարանի յիշեալ երկու տները որոշ ձեռագրերում :

Յ. Ս. ԱնԱՄԵԼՆ

(Եար. 1)



ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳԻՒԾԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ Վ. ԱՐԵՒԵԼՑՈՒ

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՉ

Յայտնի է, որ ասորական այրուրենը բաղկացած է եղել 22 տառից, սեմական միւս այրուրենների նման եւ ձայնաւորներ չի ունեցել: Խնչպէս տեսանք, այդպիսին է եղել նաև Դանիէլեան այրուրենը: Վարդան Արեւելցու շատ ճիշտ եւ նրամանկատ գիտողութեամբ ասորական ¹ (ալեֆ) տառը հրաշութային արժեքով մեր Ա. տառին լրիւ համապատասխան չէ, այն աւելի կողերդային է, եւ ըստ Պրօֆ. Ա. Շանիձէէի, իրեւ այդպիսին այն նոյնիսկ ճայնաւոր էլ չէ¹⁸: Ուստի, զարձեալ Վարդան Արեւելցին ճիշտ է երբ չի բնդունում, որ մեր ա տառը ասորական ¹ -ի (ալեֆի) «թարգմանութիւնն» է, այս բառի մեր մեր բացատրած իմաստով: Ի հնչոյթի դէպքում եւս վիճակը նոյնն է, ասորական ի՞ն կարծ է եւ ոչ լիահնչիւն: Հետեւարար, նշուած 19 հնչոյթներից 6 ձայնաւորները իրապէս չեն եղել ասորական այրուրենում: Մնացին 13 բաղաձայնները: Համաձայն մեծանուն յեզուարան Հ. Աճառեանի եղբակացութիւնների, դրանցից 10ը իրապէս էլ չեն եղել ասորական հին այրուրենի մէջ¹⁹:

¹⁸ Ա. Շանիձէ, Կովկասեան աղուանների նորայայտ այրուրենը եւ նրա նշանակուրիւնը գիտուրեան համար, Թրիլիսի, 1938, էջ 17 (ուսերէն):

«Ալեֆ»ը ճայնաւոր տառ մը չէ, ինչպէս մեր «Այրը» եւ լատիներէն «Եյ»ը . . . : «Ալեֆ»ը ասորերէնի մէջ կիմացուի «Օլափ»: Ասորերէնի մէջ «ա» ճայնաւորվ սկսող բառ չի կրնար ըլլալ: Բառասկիզբի «ա»ն ընդհանրապէս կը հենչուի «օ», սակայն կարելի է հենչել նաև «ու», «է», «ի», «ը» (Գր. Թորոս Էան, Թուրքի կողին միուած դաշոյնը՝ Արարատ, «Հայրենիք» օրաթերթ, թ. 19712, Նոյեմբեր 27, 1977):

¹⁹ Մանրամասնուրիւններից խուսափելու եւ տեղ ու ժամանակ խնայելու դիտաւորուրեամբ այս առիրու ներկայացնում ենք մեծանուն գիտնականի դիտողուրիւնները իրաքանչիւր հենչոյթի համար առանձին, որովհետեւ դրամբ լիապէս բաւարար են տուեալ հարցում: Ըստ նրա եղբակացուրեան, վերոյիշեալ բաղաձայններից Ժ, Զ, Զ, Զ, Վ, Ց, Ց, Ց, Ց, Ֆ տառենրը բացակայում են ասորական այրուրենից: Այսպէս, օրինակ.

Ժ. Հ. Աճառեանի վկայութեամբ Հայաստանի հարեւան ժողովուրդներից միայն Պարսիկներն ունեն «այս զիրք»:

Զ. «Զ հենչիւնը այս մասին խօսելու գրում է նոյն զիտնականը, կը գտնենք միայն հարեւերէն Ը եւ արաբերէն ։ գրերում մէջ: Մեզի դրացի ուրիշ որեւիցէ այրուրենի մէջ չգտնուելով այս զիրք՝ բնական է, որ Ս. Մեսրոպ իրմէ հնարած ըլլայք»:

Զ. Այս տառի մասին էլ խօսելիս միեւնոյն զիտնականը յայտնում է, որ միայն իրանեաններու մօտ կայ ։ Ճայնը, «բայց ասիկա ալ հայերէնի մէջ տառադարձուած է միշտ ձ»:

Խնչ վերաբերում է Զ զիրքին, նա ասում է, որ «մեր շրջակայ ազգերու այրուրեններուն մէջ երկու տեղ միայն կրնանք զտնել հայերէնի համապատասխան զիրք մը, առաջինն է երովագերէն Ճ՝ ձեւը, որ տեղի հեռաւորու-

Մեր ենթագրութեամբ բացատրութեան կարօտ են մնում թ , զ , ծ եւ շ դրերը : Հայկական աւ եւ ասորական । (ալեֆ) տառերի հնչութային արժէ - քը գնահատելիս , տեսանք , թէ ինչքան բժախնդիր է Վարդան Արեւելցին : Գուշ է եւ այդպիսի նուրբ տարրերութիւն եղել է նաեւ գոնէ Գ եւ Ծ զրերի Հայերէն և ասորերէն արտասանութեան մէջ , իսկ ինչ վերաբերում է Շ տառին , մեր կարծիքով , պէտք է ենթագրել , որ այն ձեռագրերում , թերեւս , չփոթուել է Ղ զրի հետ , ինչպէս այլ դէպքերում շատ է պատահել : Ի զէպ Հ . Աճառեանը յրեայում է , որ «Ժղանք»ի սոյն հատուածը ընդգրկած «...Ալիշանի յիշած երկու ձեռագիրներէն մէջուն մէջ շ դրին տեղ կը գտնենք զ (թերեւս) դ - Փ . Ա.»²⁰ : Այսպէս , որ այս կարդի չփոթ , շատ հնարաւոր է , որ տեղի ունեցած յիշի նաեւ այս դէպքում :

Սակայն , չէ՞ որ Վարդան Արեւելցու վերը նշած բաղաձայններից մի քանիսը առկայ են ասորական այրուենում : Միթէ՞ նա սխալում է : Բայց , դիտենք , որ նա ծանօթ է ասորերէնին եւ չէր կարող այդքան տարրական սխալ թոյլ տալ : Այս Հարցագրման պատասխանը , մեր կարծիքով , կարելի է զանել Հետեւեալ իրողութեան մէջ : Ինչպէս յայտնի է , առ այսօր դեռ որոշակի չճշշտրած ժամանակներից՝ 10-11-րդ , գուցէ եւ աւելի հին դարերում , Հայերը բաղաձայնների արտասանութեան երկու տարրերակ են ունեցել , որոնք , յատկապէս , ձայնեղ եւ չնչեղ խուռ բաղաձայնների դէպքում են արտայայտուել : Այսպէս , օրինակ , նոյնիսկ այսօր , արեւմտահայը թ , զ , դ , շ եւ այլն ձայ-

թեան պատճառով մէկ կողմ կը մնայ , երկրորդն է հայ , որուն հետ Միալիքը կը համեմատէ հայերէն զիրը :

Վ. տառը , մեծահամբաւ զիտնականի կարծիքով , ասորերէն օ եւ պահաւաերէն ։ զիրը չէ , վերջիններս՝ «Մեր զրկէն շատ տարրեր են ... այնայն որ չեն կրնար իբր աղրիւր ծառայած ըլլալ» :

Ց զրի կապակցութեամբ էլ նա հակադրուելով թ . Սարգիսեանին եւ Ն . Տաղաւարեանին , յայտնում է , որ այն ասորական Յ տառի հնչութային միեւնույն արժէքը չունի , տարրեր է նրանից :

Ճ զրին լրիւ համապատասխան հնչոյքով զիր , դարձեալ Հ . Անանի վկայութեամբ «Մեր շրջակայ ազգերէն միայն իրանեաններն են ունեցել» :

Խակ Յ կիսաձայն զրի մասին նա զրում է հետեւեալը . «Մեր դրացի ազգերու այրուենին մէջ առանձին տառով մը նշանակուած չէ այս ձայնը , որ սակայն քէ՛ ասորերէնի , եւ քէ՛ , մանաւանդ , պակաւաերէնի մէջ սովորական էր» : Վերջին Փ տառի մասին մենք արդէն տեսանք , քէ նա իմչ է զրել այս կապակցութեամբ : Տե՛ս Հ . Աճառեան , Հայոց զրերը , էջ 227 , 238 , 251 , 256 , 262 , 266 , 241 : Ի դէպ պէտք է նշել , որ օսար զրերի հետ հայերէն զրերի համեմատութիւնը ամելիս , Հ . Աճառեանը հաւասարապէս նկատի ունի դրանց ե՛ւ հրայութային արժէքը , ե՛ւ ձեւական կողմը : Դրանցից քերուած սոյն եւ յաջորդ խօսքների մէջ նկատի են առնուած տառերի այդ երկու յատկանիշներն էլ միասնարար : Ըստ այդմ էլ պէտք է ընկալել այս առքի այսունդ մէջբերուած նրա խօսքները :

²⁰ Հ . Աճառեան , Հայոց զրերը , էջ 88 :

նեղ բաղաձայնները արտասանելիս դրանց հաղորդում է չնչեղ խուլ բաղաձայնների հնչոյթ, այսինքն արեւմտահայ արտասանութեամբ բոլորովին հակադարձ պատկեր է ստացւում, ձայննեղները խլացւում, չնչեղ խուլերը՝ ձայննեղացւում են, բ-ն իրրեւ հնչոյթ փոխարինում է պ-ին, գ-ն կ-ին, դ-ն տ-ին, ձ-ն ծ-ին, ջ-ն ն-ին եւ այլն : Խոկ յայտնի է, որ Վարդան Արեւելցին եղել է Կիլիկիայում, «Ժղանք»ն էլ զրի է առել այնտեղ : Յայտնի է նաև, որ միջին հայերէնը յատկապէս այնտեղ էր այդ ժամանակներում առելի յայն տարածում գտել, եւ սոյն հնչիւնական Արեւելցինը արդէն դարձել էր օրինաչափութիւն : Ուստի, Վարդան Արեւելցին, որն յաճախ է կիրառել միջին Հայերէնը, յիշեալ սրաժմաններում, բնականարար, հիմք պիտի ընդունէր արտասանութեան վերոնշեամ, ձեւը, այսինքն ձայնեղ բաղաձայնները պիտի դիմէր իրրեւ չնչեղ խուլ բաղաձայններ, և թ ասելով պիտի ընդունէր պ : Ուրեմն, ըստ Վարդան Արեւելցու, ասորական այրուրէնի մէջ պիտի չի ունի ու թէ թ, այլ պ տառը : Ահա թէ ինչ է ասում այդ ժաման ակադեմիկոս Հ. Աճառեանը . «Ա եւ վ զրերու ուղիղ եւ հաստատուն համապատասխանները պէտք է փնտուել միայն յունարէն այրուրէնի մէջ եւ ոչ այլուր»²¹ : Այսպիսով, բացատրելի է դառնում, թէ ինչու նըւած բաղաձայնների մէջ Վարդան Արեւելցին զետեղել է նաև թ տառը :

Ուրեմն Վարդան Արեւելցու կողմից նշուած վերողեալ 13 բաղաձայններից 10-ը, մէծանուն բանասէր ու լեզուարան Հ. Աճառեանի վկայութեամբ, ասորական այրուրենում չունեն իրենց լրիւ համապատասխան հնչոյթով տառերը : Այնպէս որ Վարդան Արեւելցու յայտնած այն փաստը, թէ Մեսրոպ Մաշտոցը հայերէն 36 հնչոյթներից 17-ը դատորոշել է Դանիկեան եւ ասորական այրուրենի, իսկ 19-ը (թէրեւս բացառութեամբ շի) այլ այրուրենների ու սումնափրութեան հիման վրայ, հաւանականութիւնից զուրկ չէ :

Հենց այս էլ, այսինքն Հայերէնի հնչոյթների համակարգի բացայայտումն ու ճշտումը, եղել է այն ամէնը, ինչ արել է Մեսրոպ Մաշտոցը օտար այրուրենները այնքան հանգամանօրէն ուսումնասիրելիս : Ուստի, Վարդան Արեւելցու որոշակի հաղորդումները խօսում են այն ժաման, որ Մեսրոպ Մաշտոցը օտար այրուրեններից եւ ոչ մի զիր չի փոխառել, այլ «թարգմանել» է, այս բառի մէր ըմբռնած ու վերը բացատրած իմաստով : Հետեւարար Մեսրոպ Մաշտոցի գործը՝ հայերէն զիերի համնարեղ զիւտը, Վարդան Արեւելցու վրկայուրեամբ էլ բացառայէս ստեղծագործական է եւ իմբնուրոյն :

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

²¹ Անդ, էջ 227:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻՆ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐ

Մեզ են Հասել շարականակիր Հեղինակների վերաբերեալ Համառոտ ցանկեր : Բայ դրանց միասնական վկայութեան, Վարդան Արեւելցին էլ է շարականներ Հեղինակել : Այսպէս, օրինակ . «Եւ զիր նախիմացն, զի յանսահման ծովին եւ զթարգմանչաց օրհնութիւնն, եւ զուրբ Սարգսի օրհնութիւնն՝ Վարդան վարդապետն»¹ : Ի գեալ, այս ցանկը Գրիգոր Տաթեւացու խմբագրածն է : Ծայոնի է, որ վերջինս ոչ միայն առ Հասարակ մեր մշակոյթի մեծագոյն դէմքերից է, այլև եկեղեցական դիտավեճներով ամենահմուտ գիտնական վարդապետներից մէկը : Նա, անսարակոյս, իր բարգաթիւ սաներին տարիներ շարունակ ուսուցանել է նաև Հայ մատենադրութիւն և երաժշտութիւն : Ուստի Հարուսալիմի է, թէ ինչքա՞ն Հաւասարի են նրա վկայութիւնները, այս դէպքում, Վարդան Արեւելցու յիշեալ շարականների Հեղինակ լինելու մասին :

Բերենք այլ խմբագրութեամբ մեզ հասած նման մի ցանկի համապատասխան Հատուածը, որը վերորեհալի քիչ մանրամասնուած կրկնութիւնն է . «Վարդան վարդապետ Մեծն՝ զիր նախիմացն, զի յանսահման ծովին, զթարգմանչաց օրհնութիւնն՝ զիրք զարդարեցին», եւ զուրբ Սարգսի օրհնութիւնն՝ զիմենասուրբ երրորդութեանն»² : Կայ նաև Առաքել Սիւնեցու չափածոյ խօսքը, որտեղ ասուած է, թէ շարականների Հեղինակ է նաև Վարդան Արեւելցին» :

Առյանց ցանկերը հիմք ընդունելով՝ Ստեփանոս Զիք Զուղայեցին (17-րդ դ.) իր չափածոյ խօսքի մէջ ասել է .

«Զիք նախիմաց եւ սուրբ Սարգսին,
Եւ զթանսահման ծովին վերին,
Եւ զթարգմանչացն զՊրհնութիւնն՝
Վարդան Տէլէտն Հայաստանին»⁴ :

Հարկ է դիտել տալ, որ այսուհետեւ նշուած միայն Ս. Սարգսին նըւիրուած օրհնութիւնը :

Քիչ այլ կերպ է շարադրուած Յակոբ Սուեցու նոյնպէս չափածոյ խօսքը՝ այս կապակցութեամբ .

«Յայց նախիմացն է Վարդանայ
Ի ի յանսահման՝ Ով գերահրաշայ,
Ի Ամենասուրբ սուրբ Սարգսոսայ
Եւ օրհնութիւնը Մեսրոպայ»⁵ :

¹ Յ. Անասեան, Հայկական մատենագիտուրիւն, Ա., Երեւան, 1959, Եերածութիւն, էջ LXVII :

² Նոյն տեղում, էջ LXIX :

³ Նոյն տեղում, էջ LXX :

⁴ Նոյն տեղում, էջ LXXI :

⁵ Նոյն տեղում, էջ LXXXIII :

Ղազար Զահկեցին յիշեալ շարականների շաբքում Ս. Սարգսին նը-
ւիրուած օրհնութեան փոխարէն զետեղում է «զլնթառամ ծաղիկն» շարա-
կանը:

Սակայն նշուած ցանկերի համեմատութեամբ զգալի տարերութիւն
ունի 13-րդ դարի անձնաւորութիւն Սարգս Երէցի կողմից կազմուած համա-
պատասխան ցանկը: Ահա թէ ինչ է ասուած այստեղ. «ԶՅովակիմայ և Անհա-
ին՝ Որ նախիմայ իմաստութեամբն, զշրաշաղեղ ծաղիկ մեծացուցէն, դվեր-
նական բարեաց բաշխման գործ», զԱւադ շարաթին մեծացուցէն, և դՀամ-
բարձմանն, Խաչի թագաւոր մեր Քրիստոս, և զԳիշարդեանն՝ Իոկ դու պար-
ծանքդ պարծ(անաց), զուրբ Սանդիսու նորն, զԱռաքելոցն՝ ի յանահման
ծովէն, զորբոյն Սարգսի Ամենասուրբ Երրորդութեանն ազնիւ ծառայ(ռայ), և
զՀզոր արքաին զաւրեղ զինա(կիր) և այլ բազում՝ սուրբ վարդապետին Վար-
դանա է ասացեալ⁶: Ինչպէս տեսնում ենք, այստեղ կան յաւելումներ, բայց
չեն նշուած «Թարգմանչաց օրհնութիւն»-ը, «Անթառամ ծաղիկ»-ը: Սակայն
ոյս մտուին աւելի մանրամասն կը խօսենք սոսորեւ:

Չեռագրաց ցուցակներում եւս Վարդան Արեւելցուն են վերագրուած
Հիմնականում այն շարականները, որոնք նշուած են Գրիգոր Տաթևացու կազ-
մած ցանկում⁷:

Բանասէրները նոյնպէս գրեթէ միասնական կարծիքի են այս խնդրում
և յիշեալ շարականները յատկացնում են Վարդան Արեւելցուն: Ղազար Զահ-
կեցին համոզուած է, որ նա «Եւ երգեաց զերգս շարականաց՝ զՈր նախիմացն,
և զի յանսահման ծովէն, և զթարգմանչացն, և զԱնթառամ ծաղիկն»⁸: Այս-
պէս է վարուել նաև Մ. Զամշեանը և աւելացրել, որ «Երեւի թէ» «Որ նախի-
մաց» շարականը Վարդան Արեւելցին գրել է կիլիկիայում¹⁰: Գ. Աւետիքեանը
ընդհանրապէս կրկնում է իր նախորդներին, սակայն Ս. Սարգսի օրհնութիւնը
վերագրում է Ներսէս Շնորհալուն¹¹, որ ճիշդ չէ: Դ. Ալիշանը եւս հաստա-
տում է, որ նրա զրչին են պատկանում վերը նշուած չորս շարականներն ել: Սակայն նա Ս. Սարգսի օրհնութեան վերաբերեալ տողատակ տուած իր բա-
ցարութեան մէջ տուարկել է սոյն շարականը Վարդան Արեւելցու Հեղինակա-
յին իրաւասութիւնից հանելու կողմնակիցներին: Նրա գտնում է, որ այդ միեւ-
նոյն շարականի մէջ յիշատակուած Գագ «լիռնարլուր»-ը եւ «իշխան մեր» խօս-
քերը օդնում են այն եւս Վարդան Արեւելցուն յանձնելուն: Նրա կարծիքով «Որ
նախիմաց» շարականի մէջ «զկենդանութիւն մերոյ թագաւորին» եւ «զԳաւա-
զոն իշխանութեան մերոյ հայրապետին» խօսքերը վերաբերում են Հեթում
Ա-ին եւ Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին¹²:

⁶ Նոյն տեղում, էջ XLVI:

⁷ Նոյն տեղում, էջ LXVI:

⁸ Յ. Զամշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց..., Վիեննա, 1891-1895,
էջ 779, որտեղ բերլան է Ս. Զիք Զալպայեցու վերյիշեալ ցանկը: Բ. Սար-
գսւան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց..., Վիեննաիկ, 1924, Բ, էջ 712:

⁹ Յ. Անասեան, Հայկ. մատ., էջ XLVI:

¹⁰ Մ. Զամշեան, Պատմութիւն Հայոց, Գ, Վեննաիկ, 1784, էջ 242:

¹¹ Գ. Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց, Վեննաիկ, 1814,
էջ է, 10, 149, 548:

¹² Այս կապակցութեամբ Գ. Ալիշանը հետեւեալ բացատրութիւնն է
տուել: «Աման ոչ համարին Վարդանայ (Արեւելցոյ - Փ. Ա.) զԱմենասուրբն
Ս. Սարգսի, այլ հաւասար նորա լինել եղանակաւն եւ վերջին տամբք, յորս յի-

Գ. ԶարբՀանալեանը նոր խօսք չունի այս կապակցութեամբ¹³: Սակայն Սահմակ Ամատունին աւելի հանդամանալից քննութիւն է կատարել այս խնդրում և հասելու ուշադրաւ հետեւութիւնների: Նա ի մասնաւորի կանգ է առաել վերանշեալ Սարդիս Երէցի ցանկի վրայ: Մեր կարծիքով, նա իրաւացի է, երբ Ս. Սարդսի օրհնութիւն՝ «Հզօր արքային զօրեղ զինակիր» չարտկանը վարդան Արևելյանը չի համարում: Նա ճիշդ կերպով մատնացոյց է անում, որ այդ չարտկանի վերջին տան մէջ ասուած է: «Ի դաշտ ծաղկածին, զոր յիշէ վարդան» եւ այդ Վարդանը Արեւելցին է, որովհետեւ նրա «Հաւաքումն պատմութեան» մէջ իրօք կան չարտկանի յիշեալ խօսքերը հաստատող փաստեր, ունք նա մէջ է բիրում¹⁴:

Այս միեւնոյն Սարդիս Երէցի նշած չարտկանները, որոնցից մի քանիսը իրբեւ պարականոն չարտկաններ մէջ է բերել Ս. Ամատունին, յատկասով սանասիրութեան տեսանկիւնից արժանի են յատուկ ուշադրութեան: Ս. Ամատունին, բաւարար մանրամասնութեամբ քննութեան առնելով յիշեալ չարտկանների հեղինակային պատկանելու թեան հարցը, եղանակացրել է, որ դրանք պատկանում են ոչ թէ Վարդան Արեւելցու, այլ Վարդան ԲարձրԵրդցու զրուժին: Մեր կարծիքով նա ճիշդ է վարուել, որ այդ չարտկանները չի յատկացրել Վարդան Արեւելցուն, սակայն, միաժամանակ, զանում ենք, թէ «Որ նախիմաց», Ս. Սարդսին նուիրուած՝ «Ամենասուրբ Երրորդութեան» եւ Գեղարդին նուիրուած չարտկանները նա պիտի չդասէր դրանց չարքին: Մենք արդէն զիտենք, որ այս երեք չարտկաններից առաջին Երկուուր պատկանում են Վարդան: Արեւելցու զրուժին: Երկրորդի՝ «Ամենասուրբ Երրորդութեան» չարտկանի վերաբերակ Գ. Աւետիքեանի տուած բացատրութիւնը, բատ որի իրը այն ներսէն Շնորհալունն է եւ որին հաւանութիւն է տուել Ս. Ամատունին, մեր կարծիքով, համոզիչ չէ: Ս. Սարդսին նուիրուած միւս չարտկանի հեղինակը, բատ Ս. Ամատունու եւ Ն. Ակինեանի Վարդան ԲարձրԵրդցին, իր այս միեւնոյն չարտկանի մէջ զրելով «Ի դաշտ ծաղկածին, զոր յիշէ Վարդան»՝ ոչ միայն ակ-

չի ֆազ լիստնարլուր, եւ իշխող կողմանցն, զոր իշխան մեր կոչէ, եւ է Վահրամն յիշեալ ի Պատմութեանն, եւ յայտ է, թէ յայս կողմանս յօրինեաց զերգըն, որպէս եւ զնախիմացն՝ ի կիւլիկիա, մաղրելով ի նմին «զկենդանուրիհն մերոյ բագաւորին»: Հերմոյ եւ «զգաւազան իշխանութեան մերոյ հայրապետին»: Կոստանդնինի: (Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Յառաջարան, էջ Գ, Ս, ծմբ. 1):

13 Գ. ԶարբՀանալեան, Պատմութիւն Հայ դպրութեան, Վենետիկ, 1932, էջ 749:

14 Ս. Ամատունի, Հին եւ նոր պարականու կամ անվաւեր չարտկաններ, Վաղարշապատ, 1911, էջ 10, 58: Ի դէպ, նա այստեղ խօսում է նաև ընդհանրապէս Վարդանների շփորութեան իննորի շուրջ եւ վերտնշեալ չարտկանի բնիստքեամբ ու միջոցով նա միաժամանակ ցոյց է տալիս, որ պատմազիք Վարդանը ԲարձրԵրդցին չէ, այլ՝ Արեւելցին: Ահա թէ ինչ է զրել նա այս անիրով. «... Հարականս զրող Վարդան ԲարձրԵրդցին վկայում է, որ Վարդան Արեւելցին է զրել իր ժամանակի դեպքերի պատմութիւնը, եւ ոչ ինքը, ինչպէս ոմանք համարում են: Եւ այս բանը յայտնում է ինքը չարտկանիս Երկրորդ տաս մէջ... յերեւալս ի Պարս խորին Խորասան... ի մաւս ի քաղաքն, որ կոչի Տամզան, ի դաշտ ծաղկածին, զոր յիշէ Վարդան (ընդգծումը՝ Ս. Ամատունու – Փ. Ա.): ի յամուրի անա Քրդաբան անուան, անդ ուր զՄարտիրոս արկին ի կապան: Տե՛ս նոյն տեղում, էջ 57-58:

նարկում է Վարդան Արեւելցու «Հաւաքումն» պատմութեանց երկը, ինչպէս ճիշդ նկատել են ոմանք, այլեւ «Ամենասուրբ երրորդութեան» վերոյիշեալ շարականը, որտեղ եւս ասուած է. «Հորիմն հարաւոյ ի դաշտ ծաղկածին»: Ինչպէս տեսանք, վերոգրեալ ցանկերում եւս այն Վարդան Արեւելցուն է վերադրուած, Հետեւարար Վարդան Բարձրերդցին դրանով ցոյց է տալիս, որ ոչ միայն «Հաւաքումն» պատմութեան», այլեւ այս երկրորդ շարականի հեղինակին էլ Վարդան Արեւելցին է: Աւստի, ճիշդ չեն նաեւ Գ. Աւետիքեանի և Ս. Ամատունու ենթադրութիւնները այս կապակցութեամբ: Իսկ ինչ վերաբերում է Գեղարդին նուիրուած շարականին, պէտք է ասել, որ դեռ Յ. Շահխամթունեան¹⁵, այնուհետեւ, Ղ. Ալիշանն ու Գ. Յովսէփեանը ժամանակին այն համարել են Վարդան Արեւելցու հեղինակածը¹⁶:

Հ. Առկեանն ընդհանրապէս համաձայն է Ս. Ամատունուն, միայն թէ իրաւամբ վարանում է, որ Ս. Սարդսին նուիրուած «Ամենասուրբ երրորդութեան» շարականը ստուդապէս Վարդան Բարձրերդցունը լինի: «Ապացոյատկար կը թուի», — զրել է նա նաեւ. Ղ. Ալիշանի այն պատճառարանութեան վերաբերեալ, ըստ որի սոյն շարականը իրօք Վարդան Արեւելցունն է¹⁷: Ս. Սարդսին նուիրուած միւս «Հզօր արքային դորիդ դինակիր» շարականը Ն. Ալինեանի կարծիքով եւս Արեւելցունը չէ: Նա զրեթէ նոյնութեամբ կրկնում է Ս. Ամատունու այս առիթով բերուած առարկութիւնները եւ այն յանձնում Վարդան Բարձրերդցուն¹⁸:

Վարդան Արեւելցու մասին իրեւ շարականադրի խօսք է եղել նաեւ «Էռւմայ» եւ «Էռյոյ» պարբերականներում¹⁹: Պէտք է ասել սակայն, որ զրանցում որեւէ նոր խօսք, ըստ Էռյութեան, չի ասուած: Անտանապէս շփոթուած են Վարդան Արեւելցին եւ Վարդան Բարձրերդցին²⁰: Միայն մի անգամ ենթադրութիւն է արուել, որ «Կիրակոսի մօր Յովկիդայի մանկունքը՝ «Վարդա-

¹⁵ Թէեւ նա Վարդան Բարձրերդցու անունն է տալիս, բայց նկատի ունի Վարդան Արեւելցուն, Վարդանների մեզ յայտնի շփոթուրեան հետեւանքով: Տե՛ս Յ. Շահխամթունեան, Ստորագրութիւն կարուղիկէ էջմիածնի, Ա. էջմիածնի, 1842, էջ 481:

¹⁶ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 348, ծնք. թիւ 1: Գ. Յովսէփեանը այս կապակցութեամբ ի միջի այլոց գրել է. «ԺԴ դարում առ (Գեղարդը – Փ. Ա.) ունի իւր յատուկ շարականը Վարդանի (Արեւելցի – Փ. Ա.) կողմից երգուած, ամենայն հաւանականութեամբ հենց Պառշ իշխանի շինած պահարանի (Գեղարդի – Փ. Ա.) առքիւ»: Տե՛ս Գ. Յովսէփեան, Խաղականի կամ Պռոշշանկ Հայոց պատմութեան մէջ, Ա. Վաղարշապատ, 1928, էջ 94:

¹⁷ Հ. Առկեան, Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը, էջ 73–75: Տե՛ս նաև՝ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Յառաջարան, էջ 8:

¹⁸ Ն. Ալինեան, Վարդան Բարձրերդցի, «Հանդէս Ամսօրեայ», 1946, էջ 109:

¹⁹ Դ. Խաչկոնց, Հայոց կրօնական քանասունդուրին, «Էռւմայ», 1901, թիվ 1ից, Ա., էջ 209–240, Բ, էջ 354–356, Յ. Մկրտչեան, Շարականախօսուրին, «Էռյոյ», Կ. Պոլիս, 1905, թիւ 40, էջ 986–991, թիւ 41, էջ 1002–1004, թիւ 44, էջ 1063:

²⁰ Դ. Խաչկոնց, Հայոց կրօնական քանասունդուրին, «Էռւմայ», 1901, Բ, էջ 354:

գոյն վառեալ» Վարդան վարդապետինն է . . . »²¹ : Հեղինակը իր սոյն ենթադրութեան համար հիմնուել է շարականի «ժայրանուան» վրայ, որը «Վարդան պիտի կարդացուի»²² : Ա. Կողեանը Վարդան Արեւելցուն է վերագրում «իջմիածին ի հօրէ» յայտնի շարականը²³ : Բայց նրա ենթադրութիւնը հիմնաւոր տած չէ ընդունելի փաստերով: Մենք եւս ձեռքի տակ չունենք նման փաստեր, ուստի եւ զգուարանում ենք որոշակի խօսք ասել: Կարծում ենք սակայն, որ յիշեալ շարականը գրուած պիտի լինի աւելի վաղ, քան Վարդան Արեւելցու ապրած ժամանակաշրջանը՝ 13-րդ դարը:

Մեղ յայտնի ձևագիր «Շարակնոց»-ները լրացուցիչ կարեւոր որեւէ տուեալ չեն հազորգում, որը կարդանար թոյլ տալ փոփոխութիւն մտցնել վերը յիշատակուած փաստերի եւ քննարկուած կարծիքների մէջ: Մենք հանդամանօրէն ծանօթացել ենք նաեւ բուն շարականներին, նրանց բովանդակութեանը, լեզուու-ոճական առանձնայատկութիւններին: Թիչ վերը մենք մանրամասնօրէն ներկայացրինք բանասէրների բոլոր կարեւոր տեսակէտները այստեղ քննարկուող սոյն հարցի չուրջ եւ մէջընդմէջ տուինք մեր դիտողութիւններն ու կարծիքները: Ուզում ենք աւելացնել, որ կարեւոր հանդամանք է այս դէպքում նաեւ շարականների հղանակի, այսինքն՝ այս կամ այն ձայնեղանակին (ԱԶ, ԱԿ, ԲԶ, ԲԿ եւ այլն) նրանց պատկանելու փաստը: Զէ՞ որ շարականացիր հեղինակները իրենց շարականների նաեւ երաժշտութիւնն են յօրինել: Ուստի, այս կամ այն ձայնեղանակը կարող է օժանդակ վկայութիւն տալ յիշեալ հեղինակների ստեղծագործական ոճի եւ, ըստ այդմ էլ, շարականների հեղինակային պատկանելութեան մասին: Ահա, թէ ինչ է գրել Յ. Մկրտչեանը այս կապակցութեամբ. «Բոլոր այս շարականների վերաբերեալ (զրոց ցանկերում նշուածները – Փ. Ա.), որոնք ԱԿ, ԴԶ եղանակի կաղապարներու վրայ զրուած են, խաղերու, չափի, միօրինակ եւ կանոնաւոր զրութիւն մը ունին եւ նոյնիսկ ժամանակադրական տեսութեամբ յայտնապէս կրնանք Վարդան վարդապետի (իժմ՝ Արեւելցուն – Փ. Ա.) ընծայել . . . »²⁴:

Ի վերջոյ Հայ եկեղեցին հենց այնպէս չէր օրինականացնի Վարդան Արեւելցու հեղինակային իրաւունքը յատկապէս այն չորս շարականների վրայ, որոնք նրա կողմէց շատ վազուց են կանոնականացուած:

Այսպիսով, հիմնուելով վերը բերուած հնագոյն վկայութիւնների, դրանց հաւատափութեան, բանասէրների կարծիքների հանդամանալից տեսութեան եւ բուն շարականների Համակողմանի ուսումնասիրութեան վրայ, զբանում ենք, որ Վարդան Արեւելցու զրչին աներկրայօրէն պատկանող շարականները հետեւեալին են.

1. Կանոն Յովակիմայ եւ Աննայի՝ ծննդաց Սուրբ Աստուածածնին,
Որ նախիմաց իմաստութեամբ
Տնօրինեցեր զիսորհուրդ . . .

2. Շարական Երկուասան Առաքելոցն,
Ի յանսահման ծովիչն հօր զթութեանց
Բրիմունք եւ սուրբ առաքեալք . . .

²¹ Յ. Մկրտչեան, Շարականալիօսութիւն, «Էլոյս», թ. 41, 1905, էջ 1004:

²² Նոյն տեղում, էջ 1004:

²³ Ա. Կողեան, Հայոց եկեղեցին, Պէյրուր, 1961, էջ 288:

²⁴ Յ. Մկրտչեան, նշ. աշխ., «Էլոյս», թիւ 44, 1905, էջ 1063:

3. Կանոն Սրբոց Թարգմանչաց,
Որք զարդարեցին անօրինաբար
Զիմաստ անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի...

4. Շարական Սրբոյն Սարգսի Զօրավարին,
Ամենասուրբ երրորդութեանն
Բնուրեալ ծառայ եւ հաւատարիմ...

5. Շարական Սրբոյ Գեղարդայ,
Իոկ դու պարծանքող պարծանաց,
Գեղարդը սուրբ եւ գերազանց...

6. Անրառամ Ծաղիկ,
Անթառամ ծաղիկ
Անդառապարտ շառաւիղ...

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ



ԵԶՐԻ ԱՆԿԱՆՈՆ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳԻՒՏԵՐ

Ա

Դպիր Եզրի անունին հետ քանի մը անկանոն գիրքեր կապուած են. ամենակարեւորը այն գիրքն է որուն, Հայ թարգմանութեան մէջ, «Եզր Երրորդ» անունը կու տանք: Եզր Երրորդ գրքին սկզբնական բնագիրը Երրայերէն էր. սակայն այս Երրայերէն բնագիրը, ինչպէս նաև առաջին, յունարէն թարգմանութիւնը կորսուած են եւ այսօր կը մնան միայն քանի մը թարգմանութիւններէն մին է Հայերէնը, զոր Հ. Յովհաննէս Զօհրապեան առաջին անգամ տպագրեց 1805-ին Աստուածաշունչին մէջ: Այս Հ. Սարդիս Յովհաննէս վերատպեց նոյն ըր նազիրը Անկանոն Գիրք Հին Կոտակարանաց Հաւաքումբին մէջ¹:

Այս Հարատարակութիւնը երեք ձեռագիրներէ առնուած ընթերցուածներ կը սպառուակի: Այսօր մենք նոր Հարատարակութեան մը մերջին Հանուրանին հասած ենք, որ քսանէ աւելի ձեռագիրներու վրայ Հիմնուած պիտի ըլլայ: Կը յուսանք որ այս նոր գործով կարելի պիտի ըլլայ Եզր Երրորդ Գրքի Հայ թարգմանութեան ամենէն հին ձեւը գտնել²: Ռոպերդ Պէջը այս գրքին վրացերէն թարգմանութիւնը գտաւ եւ Հարատարակեց: Ահ գրեց որ այս թարգմանութիւնը Հայերէն բնագրի մը վրայէն սպատրաստուած է, բայց այս վրացերէն թարգմանութեան Հայերէն օրինակը ամբողջովին տարբեր է մեր ներկայ Հայերէն թարգմանութենէ՞: Պէջը մտածեց որ Էջմիածնի կամ Երուսաղէմի մտահետպարաններուն մէջ կարելի է հանդիպիլ ձեռագիրներու որ այդ երկրորդ Հայ թարգմանութիւնը կը սպառուակեն: Դժբախտաբար այն ձեռագիրներուն մէջ որոնք մենք թէ Երուսաղէմ եւ թէ Երեւան քննեցինք, այդ թարգմանութիւնը չի գտնուիր:

Եզր Երրորդ գիրքը երկրորդ Հայերէն թարգմանութիւն մըն այ ունի, բայց սամիկա այն հին թարգմանութիւնը չի որուն մասին Պէջը գրեց: Այս երկրորդ թարգմանութիւնը Ռոկան Երեւանցի Հարատարակեց 1666-ի առաջին Հայերէն տպագրուած Աստուածաշունչին մէջ, էջ 719-744: Այս թարգման ւթիւնը նոր գործ մըն է. սամիկա կարելի է ստուգել մի քանի սպատճաններով: Առաջին՝ այս թարգմանութիւնը յունարէն բնագրին ուղղակիորէն ծանօթ չի, այս լատիներէն բնագրէն կը ողիսի: Երկրորդ՝ իր լիզուն եւ ոճը նոր են եւ հին Հայերէնէն կը հեռանան, ինչպէս զիւրութեամբ կարելի է տեսնել Հատուածներ կարդալով: Երրորդ՝ այս թարգմանութիւնը մեծ սիալներ եւ պակասութիւններ ունի (ի դէ. 36-103 Համար), ինչպէս բոլոր ուշ յատիններէն ձեռագիրները³: Չորրորդ՝ այս թարգմանութիւնը 17-րդ դարէն առաջ Հայկական մատենագրութեան մէջ ամբողջովին անծանօթ կը մնայ:

¹ Վենետիկ, Միիթարեան Տպարան, 1896, էջ 251-299:

² Եզր Երրորդ գրքի բնագրը երկու ձեռագիրներու համաձայն Հարատարակուցաւ 1971ին. անօ' M. E. Stone, Concordance and Texts of Armenian IV Ezra (Oriental Notes and Studies II; Jerusalem: Israel Oriental Society, 1971): Զեռագիրներն են՝ Երեւան, Մատենագարան թիւ 1500, 1282-83 թ., և Երուսաղէմ, թիւ 1933, 1645 թ.: Առաջինը մասնաւարագէն արժեքաւոր է:

³ R. P. Blake, "The Georgian Version of Fourth Ezra from the Jerusalem Manuscript," HTR 19 (1926), 305-307.

⁴ B. L. Bensly, The Missing Fragment of the Fourth Book of Ezra (Cambridge: University Press, 1875).

Լատիներէն աղբիւրէն քանի մը անսխալ Հետքեր այս թարդանութեան մէջ կ'երեւին : Լատիներէն թարգմանութեան նման, Անկանի չորս զլուխները կը պարունակէ, որոնք բոլոր միւս թարգմանութիւններէն կը պակսին . երկու զլուխներ զբքին սկիզբը եւ երկու՝ վերջաւորութեան : Այս զլուխները աւելի ուշ յաւելում մը կը կազմէն, որովհետեւ լատիներէն թարգմանութիւնը Եւրոպացի դիտնականները ամենէն լու ռատումնասիրած են եւ զլուխները թիւերը ընդհանրապէս ընդունուած են . յաւելուածական լատիներէն զլուխները Ա. և. Բ., ԺԵ ժիւերով կը նշանակենք, թէեւ ասոնք ուշ յաւելումներ են : Գրքին հին հատուածին սկիզբը՝ լատիներէն թարգմանութեան երրորդ զլուխն է, իսկ ԺԴ զլուխ՝ վերջը :

Լատինական հաշումին համաձայն Եզր չորս զիրքեր ունի . Առաջինը եւ երկրորդը երրայերէն Եզրի եւ Նէկմիայի զիրքերն են . լատիներէն Գ Եզրը՝ Եօթանասնից Ա. Եզրն է, որուն երրայերէն չկայ, եւ տարրեր ձեւն է երրայերէն Եզրի եւ Նէկմիայի զիրքերուն (յունարէն Բ Եզրի զիրքը այդ երկու երրայերէն զիրքերը կը կազմէ) : Մեր զիրքը, Եզրի չորրորդը կը համարեն . Հայերէն Աստուածաշունչին մէջ Եզրի զիրքերը տարրեր կերպով կը նշանակենք . Առաջինը՝ երրայերէն Եզրի զիրքն է (Նէկմիայ զիրքը իր անունով կը կոչուի) . Երկրորդը՝ յունարէն Ա. զիրքն է եւ Երրորդը՝ լատիներէն Չորրորդ զիրքն է : Հին Հայերէն ձեռագիրներուն մէջ երկու անուններ կը գտնուին, Եզր Երրորդ ու Եզր Սաղաթէլ⁶ : Ասկանին թարգմանութիւնը ոչ միայն Ա. և. Բ., ԺԵ և ԺԴ զըրուխները կը պարունակէ, այլ նաև իր տիտղոսը Գիրք Եզրասայ Չորրորդ է : Այս պատճառով, եւ նաև իր բնագրին մանրամասնութիւններէն դատելով, պարզ է որ լատիներէն օրինակէ մը կը բղիսի :

Անկարելի է զիտնալ թէ Ասկան Երեւանցի այս թարգմանութիւնը իր Հրատարակութեան առիթով՝ պատրաստեց թէ զայն գտաւ իր աղբիւրներուն մէջ : Լատիներէն Վուլկատայի ազգեցութիւնը ծանօթ է Ասկանի բնագրին մէջ⁷ : Ասկէ զատ, Եզր Երրորդ զիրքը Հեթում թարգաւորին ձեռագրին մէջ չի գտնըւիր, մինչ Ասկան այս ձեռագիրը զործածեց իր Հրատարակութեան համար⁸ : Այս պատճառով կրնանք Ենթագրել որ Ասկան Երեւանցի այս թարգմանութիւնը պատրաստեց :

Ասկայն, նոյն թարգմանութեան նաև ձեռագիրի մը մէջ կը հանդիւրէնք (Երեւանի Մաշտոցի Մատենադարան, թիւ 349) : Զեռազիրը Աստուածաշունչ է, 1686 թուականէն, եւ ընդօրինակողը՝ Նահապետ Կաթողիկոս Եղեացցի⁹ : Հետաքրքրական է նոր թարգմանութիւնը մը գտնել ձեռագիր Աստուածաշունչը մը մէջ միայն քաններկու տարի Ասկանի տպագրութենէն յետոյ : Կարելի է որ Ասկան Երեւանցի եւ Նահապետ Կաթողիկոս Եղեացցի միակ աղբիւրէ մը բնդօրինակեցին : Այս թարգմանութեան առաջին եւ Երրորդ զլուխները հոս կը Հրատարակենք, բնագիրը ձեռագրէն առնելով եւ զլուխներու եւ համարներու թիւերը աւելցնելով :

⁶ Այս զլուխները յունարէն աղբիւրէն կու զան և հատուած մը կայ որ յունարէն բնագրի քանի մը համարներ կը պարունակէ . տես՝ A. S. Hunt, *Oxyrhynchus Papyri*, VII, no. 1010 (London: Egypt Exploration Society, 1910), 11–15:

⁷ 17րդ դարէն քանի մը ձեւագիրներ գրքին անունին կ'աւելցնեն որ է Քուանեկաց Հարրորդը, Ասկայն մէջաւ՝ մաքրութեամբ մաքրութեամբ :

⁸ Տես՝ Յ. Ա. Անասեան, «Աստուածաշունչ Մատենադարական Բնագիրը», Եղիսաբէթ ԿԳ (1960) 83–91 . Ա. Ե. Քուանեկան, «Հեթում Բ.Ի. Աստուածաշունչը և Ասկանի անշը» Հրատարակութիւնը, Խոյն անդ, 120–128 : B. Johnson, *Die armenische Bibelübersetzung als hexaplarischer Zeuge im 1. Samuelbuch* (Coniectanea Biblica, O. T. Series 2; Lund: Gleerup, 1968), 63–68 :

⁹ Տես՝ Քուանեկան, Խոյն անդ, էջ 110 :

¹⁰ «Ցաւցակ Զեթագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի», Ա. Հատուր, Երևան, 1965, էջ 303–34 :

ԳԻՒՐԻ ԵԶՐԱՍԱՅ ԶՈՐՇՈՐԴ

607m

1:1 Գիրք Եզրասայ մարգարէի երկրորդ որդւոյ Սարէի, որդւոյ Աղաբ-
րէի, որդւոյ Հեղիեայ, որդւոյ Սատանիայ, որդւոյ Սալօկայ, որդւոյ Աքիւո-
րայ, 2 որդւոյ Աքիայ, որդւոյ Փենեհեսի, որդւոյ Հեղիայ, որդւոյ Ամերիայ,
որդւոյ Ասիէլայ, որդւոյ Մարիմօմայ, որդւոյ Արնայ, որդւոյ Օզիայ, որդւոյ
Բորիթայ, որդւոյ Արիսէի, որդւոյ Փենեհէսի, որդւոյ Եղեազարու, 3 որդւոյ
Ահարոնի ի ցեղէն Ղեւեայ, որ եղեւ գերեալ ի զաւան միջազետաց ի թագա-
ւորութեանն Արտաչսի արքայի Պարսից: Եւ եղեւ բան Տեառն առ իս ասելով:
4 5 Երթ եւ պատմեայ ժողովրդեան իմոյ զաւարդսխութիւն իւրեանց, եւ որդ-
ւոց նոցա զամոքէնի թիւնս, զորս առ իս առարկին, զի պատմեսցին որդւոց իւր-
եանց: 6 Քանզի մեղք ծնողաց իւրեանց ի նոսսա աճեցին, զի մոռացեալք զիս
դուշեցին աստուծոց օարարտեաց: Աչ ապաքէն ես վերաբերի զնոսա յերկրէն 7
Եղիպատուի ի տանէ ծառայութեան. բայց նոքա զրցուեցին զիս եւ զիսորհուրո
իմ քամահեցին: 8 Իսկ զու զերծ զդէս զիլոյ քի եւ զզեմնես զամենեսեան զշա-
րիս ի վերայ նոցա, քնազի ոչ Հնազանդեցան օրինի իմոյ, զի ժողովուրդ է ան-
խրատ: 9 Մինչեւ ցերք տարայց նոցա որոց այսքան բարերարութիւնն շարտ-
րերի: 10 Զթաղաւորս յոքունս վասն նոցա կործանեցի, զփարաւոն ընդ ման-
կանց իւրոց եւ զամենայն զզօր նորա հարի: 11 Զամենեսեան գհեթանոս յերե-
սաց նոցա կորուսի. եւ յարեւելս զաւառաց երկուց զժողովուրդս Տիւրոսի եւ
Սիրոնի ցրուեցի, եւ զամենեսեան զհակառակորդս նոցա սատակցի: Իսկ զու
խօսեաց առ նոսսա ասելով զայսոսիկ: 12 13 Ասէ Տէր: Այս ինքն ես զձեղ ընդ ծով
անցուցի, եւ զհրապարակս ձեղ ի ընէ պարապեալս ընծայեցի, զառաջնորդ ե-
տու ձեղ զՄուվէս եւ զԱհարոն քահանայ: 14 Զլոյս ձեղ ի ձեռն սեան հրոյ ա-
ռաջի կացուցի եւ զսքանչելիս մեծամեծու արարի ի ձեղ, իսկ զուք մոռացայք
զիս ասէ Տէր: Զայսոսիկ ասէ Տէր ամենակար. 15 Լորամարդ ձեղ ի նշան նդեւ,
բանակաւ ձեղ պաշտամութիւն ետու, եւ անդ արտաջնեցիք: 16 Եւ ոչ հրատա-
րակեցիք զանուն իմ յաղակս կորստեան թշնամիաց ձերոց այլ զեռ մինչև
ցայժմ արտաջնէիք: 17 Ուր են բարերարութիւնք զորս նախ չնորհեցի ձեղ. ոչ
ապաքէն յանապատին յորժամ քաղցեցայք, աղաղակեցիք առ իս: 18 Ասէնով
արդ՝ զի՞նչ զոյ մեղ, յանապատս այս առաջնորդեցիք զմեղ. բարոռք էր մեղ
ծառայէլ Եղիպատուցոցն, քան զմեռանիլ յանապատի աստ: 19 Ես վշտացայ ի
հեծութիւնն ձեր, եւ ետու ձեղ զմանանայ ի կերակուր. զհաց հրեշտակաց կե-
րիք: 20 Ոչ ապաքէն երբ ծառաւեցայք զիէմն հերձի, եւ հեղան ջուրք ի յաղե-
ցումն, վասն տօթոյ տերեւօք ծառոց զմեղ ծածկեցի: 21 Բաժանեցի ձեղ զեր-
կիրս պարարտս. զքանանացին եւ զփերեղացին եւ զփշատացին յերեսաց ձերոց
յետո ընկեցի. զինչ եւս արարից ձեղ. ասէ Տէր: Զայսոսիկ ասէ ամենակարոզ
Տէր: 22 Մինչ եիք յանապատին, ի զետուն Ամօրհացւոց ծարաւեալք, եւ հայ-
նոյեցիք զանուն իմ: 23 Ոչ զհուր ձեղ փիմանակ հայհոյանացն ետու, այլ արկ-
հայ զփայտ ի ջուրն քաղցրացուցի զզեմն: 24 Զինչ քեզ արարից Յակոր. ոչ
կամեցար Հնազանդիլ Յուրաց, արտաբերից զիս առ ազգս այլս եւ տաց զանուն
իմ նոցա զի պահեցնեն զամառուիրանս իմ: 25 Վասն զի թողիք զիս եւ ես զմեղ
թողիք ի ինդրելն ձեր յինէն զողորմութիւն ոչ ողորմեցայց: 26 Յորժամ վերտ-
կոչիցէք զիս, ես ոչ լուայց ձեղ, զի բծաւորեցէք զմեռու ձեր արեամք եւ ոտք
ձեր անյասապացք են առ ի ձգիլ ի մարտասպանութիւն: 27 Ոչ իբրու թէ զիս ի բաց
թողիք այլ զմեղ ինքնին, ասէ Տէր: Այսպէս ասէ Տէր ամենակարօզ. 28 Ոչ
արդեօք ես զմեղ աղակեցի իբրու հայր զորդիս եւ իբրու մայր զդստերս եւ իր-
րու սնուցիչ զմանկունս իւր, 29 Զի եղիջիք ինձ ի ժողովուրդ եւ ես ձեղ յԱստ-

մած, եւ դուք ինձ յորդիս եւ ես ձեզ ի հայր: 30 Այսպէս զձեղ ժողովեցի իր-
րու հաւ զձագս իւր բնդ թեւօք իւր 607թ ուլք: իսկ այժմ զինչ արարից ձեղ, ի
բաց ձզեցից զձեղ յերեսաց իմոց: 31 Զմատուցումն յորժամ ինձ բերիցէք, ի
բաց դարձուցից զերես իմ ի ձէնջ, զի զօրս տօնից ձերոց եւ զամսամուսու եւ
զթյառաւութիւնս ի բաց արարի: 32 Ես առաքեցի զմանկումն իմ զմարգարէս առ
ձեղ, զորս առեալ կոտորեցիք, եւ զենիք զմարմինս նոցա, որոց զարինն խոր-
ուցից, առէ Տէր: 33 Այսպէս առէ Տէր. ամենակարօղ. Տուն ձեր ամայացեալ
է, Հոսից զձեղ որպէս զմզեզ: 34 Ես որդիք զսերականութիւնս մի արացեն,
քանզի զպատութիւնս իմ անդոսնեցին եւ զոր ինչ չար է առաջի իմ արարին: 35
Առ ձեսն տաց զտունս ձեր ժողովրդեան եկողի որք զիս ոչ լուեալք հաւատան,
որոց դնշանս ոչ ցուցի արացեն զորս պատուիրեցի: 36 Զմարզարէս ոչ տեսին
եւ յիշեցին անաւրէնութիւնք նոցա: 37 Վկայեմ ժողովրդեան Հանդերձելոյ
զնորհ, որոյ մանկունք ցնծացեն Հանդերձ խնդութեամբ զիս ոչ տեսեալ աչօք
մարմնաւորօք, ասկայն Հոգուով Հաւատացեն զորս ասացի: 38 Եւ այժմ եղ-
րայր, Հայեաց որպիսիք փառք եւ տես զժողովուրդ զեկեալ ի յարեւելից: 39
Որոց տաց առաջնորդ զԱրքահամ, զիսահակ եւ զՅակոր եւ զՅուէէ, եւ զԱմօս եւ
զՄիքիայ եւզՅովել եւ զԱրդիայ եւ զՅօնան, 40 եւ զԵտում եւ զԱմբակում,
զԱօփօնիայ, զԱնկէէ, Զաքարիայ եւ զՄազաքիայ, որ եւ Հրեշտակ Տեառն կո-
չեցաւ:

Գ Լ Ո Ւ Խ Գ

609թ

1 Յամին երեսներորդի կործանման քաղաքին էի ի Բարիլոն եւ ամրո-
խեցայ, յանկողնոջ իմում բազմեալ, եւ խորհուրդք իմ երանէին ի վեր քան
զսիրտ իմ: 2 քանզի տեսի զամայութիւն Սիօնի եւ զյուութութիւն նոցա որը
բնակէին ի Բարիլոն: 3 Եւ խործանեցաւ Հոգի իմ յոյժ եւ սկսայ խօսիլ առ Բար-
ձրեալն բանս երկիւղալիցու, 4 ես ասացի: Ով Իշխանող Տէր, զու տացեր ի
բնէ, յորժամ տնկեցեր զերկիր, եւ այս միայն, եւ Հրամայեցեր ժողովրդեան,
5 եւ հուուր Աղամայ զմարմին մահացու, այլ եւ նա Հաստուած ձեռաց քոց էր,
եւ ներաշնչեցեր ի նա զհողի կենդանի, եւ եղեւ կենդանի առաջի քո: 6 Եւ նե-
րածեր զնա ի դրախտն զոր տնկեաց աջ քո նախ քան զերկիր առզալն: 7 Եւ ոմին
պատուիրեցեր սիրել զնանապարհս քո, զրուվ եւ էանց, եւ փութով կացուցեր
ի նմա զմահ եւ ներ ծննդոց նորա. եւ ծնան ազդք եւ շեղը եւ ժողովուրդք եւ
տոհմք որոց ոչ ք թիւ: 8 Եւ ընթացաւ իւրաքանչիւր ոք ազգ ըստ կամաց իւ-
րոց եւ Հիւնալիս առնէին առաջի քո և արհամարհէին զպատուիրանս քո: 9 Սա-
կայն զարձեալ ի ժամանակի ներածէր զհեղեղն ի վերայ բնակողաց աշխարհի
եւ կորուսեր զնոսա: 10 Եւ եղեր ներ իւրաքանչիւր ում նոցա, որպէս Աղամայ
մեռանիլ, այսպէս սոցա հեղեղ: 11 Բայց թողէր զմի ի սոցանէ զնոյ Հանդերձ
տամբ իւրով, եւ յայնմանէ արզարոյ զամեննեսեան: 12 Եւ եղեւ իւրեւ սկսան
բարձմանայ ոյք բնակէին ի վերայ երկիր, եւ բազմապատկեցուցին զորդիք եւ
զժողովուրդս եւ զագգս բազումս, եւ սկսան կրկին անզամ զանդթութիւն առ-
նել, առաւել քան զնախնիս: 13 Եւ եղեւ իւրեւ զանիրաւութիւն առնէին առաջի
քո, բնորեցեր քեզ զայր ի սոցանէ որոյ անսունն էր Արքահամ: 14 Եւ սիրեցեր
զնա եւ ցուցեր նմա միայնոյ զկամս քո: 15 Եւ Հանդէս եղեր նմա զմկայու-
թիւն յաւիսենական եւ ասացեր նմա, զի ոչ երբէք թողցես զզաւակ նորա. եւ
հուուր նմա զիսահակ եւ Խօսահակայ հուուր զՅակօր եւ զեսաւ: 16 Եւ ջոկեցեր
քեզ զՅակօր իսկ զեսաւ որոշեցեր, եւ եղեւ Յակօր ի բազմութիւն մեծ: 17 Եւ
եղեւ իւրեւ արտարերեր զդաւակ նորա յԵղիպատուէ, առաջնորդեցեր ի վերայ
յերինն Սինայի: 18 Եւ խօնարհեցուցեր զերկին եւ կացուցեր զերկիր եւ շարժե-

ցեր զատիկներս եւ գողացուցեր զիսորս եւ խոռովցեր զյաւիտեան։ 19 Եւ անցին փառք քո ի 309թ գրունս չորս, հուր եւ երկրաշարժութիւն եւ հողմ եւ սառն, զի տացես զաւակի Յակօրայ զօրէն եւ ցեղին իսրայէլի զսիրելութիւն։ 20 Եւ ոչ ի բաց բարձեր ի նոցանէ զսիրտ չարաբարոյ զի առնէր օրէն քո ի նոսսա զպտուդ։ 21 Զի զսիրտ չարայորդ ի յուս բարձեալ առաջինն Արամ արտանցեալ յաղթեցաւ, այլ եւ ամենեքեան որք ի նմանէ ծնեալը են։ 22 Եւ եղեւ ներմնացեալ հիւանդութիւնն եւ օրէն ըստ սրտի ժողովրդեանն ըստ չարաբարոյութեան արժատոյն եւ էանց որ ինչ բարի է եւ մնաց չարաբարոյութիւնն։ 23 Եւ անցեալք գրնացին ժամանակիք եւ վերջացան ամք եւ յարուցեր քեզ զծառայ անոււամբ Դաւիթ։ 24 Եւ ասացեր նմա չինել զքաղաք անուան քոյ եւ մատուցանել քեզ ներ նոյնում զիսունկ եւ զմատուցմուն։ 25 Եւ եղեւ այս յամս յոլովս եւ զանց արտրին որք բնակին ի քաղաքին։ 26 Ներ ամենենցուն արարեալ որպէս արար Աղամ եւ ամենեքեան ծնունդք նորա, զի վարէին եւ նոքաս սրտի չարաբարոյիւ։ 27 Եւ մատնեցեր զքաղաք քո ի ճեռս թշնամեաց քոց։ 28 Մի թէ զրարեզոյնս արտրին որք բնակին ի Բարիլոն եւ վասն այնորիկ տիրեսցի Սիօն։ 29 Եւ իրեւ եկի տսա եւ տեսի զանազորունութիւնս որոց ոչ գոյ թիւ եւ զյանցաւորս յոլովս ետես անձն իմն այսօն երեսներորդում տարւոչ եւ զարժացաւ սիրա իմ։ 30 Քանզի տեսի թէ զիարդ տեւես մեղանաց նոցա եւ խնայեցեր ամբարչտարար դործացն եւ կորուսեր զժողովուրդ քո եւ պահեցեր զթշնամիս քո, 31 Եւ ոչ նըշանակեցեր Զուշինչ յիշեցի զիարդ արարեր թողանիւ ճանապարհս այս։ Միթէ զրարեզոյնս արար Բարիլօն։ 32 Կայ այլազգին ճանեաւ զքեզ բաց յիսրայէլէ կամ ո՞յք ցեղը հաւատացին կտակարանաց քոց որպէս Յակօր։ 33 Որոց վարձ ոչ երեւեցաւ եւ ոչ վաստակն ատղարերեաց զի արտագնալով արտագնաց առ աղջու եւ տեսի զնոսա ուռնացեալս եւ ոչ յիշատակոզս պատուիրանաց քոց։ 34 Արդ այժմ կշռես ի մէտ զանօրէնութիւնն մերայինս եւ նոցայն որք բնակին յաշխարհի եւ ոչ զտանի անուն քո եթէ ոչ ի մէջ իսրայէլի։ 35 Կամ երբ ոչ մեղան առաջի քո ոյք բնակին յերկրի կամ որ ազգ այնպէս պահեաց զպատուիրանս քոյայինս։ 36 Զոսսա թերեւս զտանիցես յանուանէ պահեալս գոլ զպատուիրանս բուայինս, իսկ զհեթանոսս ոչ զտանիցես։

Բ

Եզր Երրորդ գիրքը աղբիւր եղաւ քանի մը գիրքերու՝ այլեւայլ յեղուներով եւ Եզր Սաղաթիէլ անունին կապուած են գիրքեր յունարէն¹⁰, ասորէն¹¹, եթովպերէն¹², լոտիներէն¹³, և ուրիշ եւրոպական լեզուներու մէջ¹⁴։

¹⁰ Յունարէն երեք գիրքեր կան. առաջինը՝ «Տեսիլ Եզրի», C. von Tischendorf, *Apocalypses Apocryphae* (terp: Hildesheim: Olms, 1966), 24-33. Երկրորդը և երրորդը աստղաշխական գիրքեր են. առաջակա ասորէն, յունարէն¹⁵, ասորէն¹⁶, եթովպերէն¹⁷, լոտիներէն¹⁸, և ուրիշ եւրոպական լեզուներու մէջ¹⁹.

¹¹ Ասորէրէն գիրքը Տեսիլ մըն է, յունարէն Տեսիլէն ասորէր. առաջակա ասորէն, յունարէն գիրքեր են. ասորէն J. B. Chabot, "L'Apocalypse d'Esdras touchant le royaume des Arabes," Rev. Sém. d'Epigr. 2 (1894), 242-250, 333-346.

¹² Եթովպերէն գիրքն ալ Տեսիլ մըն է, ասորը յունարէն և ասորէրէն գիրքերէն. առաջակա ասորէն J. Halevy, *Té'ezaza Sanbat (Commandments du Sabbath)*, Paris: E. Bouillon, 1902, 57-79, 178-195.

¹³ Լատիներէն գիրքը նոյնպէս Տեսիլ Երանելի Եզրի է, յունարէն գրքին նման. առաջակա ասորէն G. Mercati, *Note di letteratura biblica e christiana, Studi e Testi 5*; Rome: Vatican, 1901, 70-73. Այս Երկու Տեսիլները մասնաւորապէս հայկական գրքին նման են։

¹⁴ Mercati, *ibid*, 74-79; M. R. James, "introduction," *The Fourth Book of Ezra*, ed. R. L. Bensly (Texts and Studies III, 2; Cambridge: Cambridge University Press, 1895) lxxviii f.

Բոլոր արդ գիրքերը Եղբ Երրորդ գրքէն բղինելով, այդ գրքին ազդեցութիւնը ցոյց կու տան:

Նաև Հայերէն գիրք մը կայ, որ Եղբի անուան կապուած է. անոր մէկ բնագիրը տպագրեց Հ. Սարգիս Յովսէփիանց Ամկանոն Գիրք Հին Կտակարանց Հաւաքումին մէջ¹⁵: Ան կը կոչուի «Հարցաքննութիւն Եղբի Մարգարէի ընդ Հրեշտակն Տեառն վասն Հոգւոց Մարգկան». Յովսէփիանց զայն զտաւ վենետիկի Մխիթարեան Մատենադարանի ձեռագիրի մը մէջ (Մաշտոց, թի 570, թուական՝ 1208, թղ. 203ա-206բ): «Հարցաքննութիւն Եղբի», երկրորդ բնագիր մը կը զտանուի Յայսմաւուրքին մէջ (չորրորդ տպագրութիւն, կ. Պուլս, 1730, էջ դիմի):

Այս երկրորդ բնագիրը տարբեր է առաջինէն քանի մը տեսակէտներով.

ա. Աւելի համառօտ է, բայց բաղդատարար շատ տարբեր է:

բ. Անոր մէջ կը պահուին բնագրին հասուածները, որոնք վենետիկեան ձեռագրէն կը պակսին:

Ուրիշ տեղ ցոյց տուած էինք որ այս գիրքը բնական մաս մը կը կազմէ Եղբի վերոյիշեալ անկանոն գիրքերուն¹⁶: Ան օրինակ մըն է Հայկական եւ ուրիշ քրիստոնեայ գրականութիւններու միջն յարաբերութեան: Այս պատճառներով կը կարծենք որ այս բնագիրը արժանի է զարձեալ տպագրել: Քանի մը ընթերցուածներ կը դնենք Օքֆորտի Պոլիէեան Մատենադարանի Զեռ. Մարշ 438, թ. Հատոր, թղ. 402ա (17-րդ դ.):

Իսկ միւս Եղբն՝ որ Սաղաթիէլ կոչեցաւ, եւ նու եւս էր ի Բարիլոն՝ եւ սուզ ունէր վասն աւերածոյն Երուսաղէմայ, վասն որոյ Տէր առաքեաց գհրեշտակ իւր եւ միիթարեաց զնա. . .

Սա ետես զհրեշտակն Աստուծոյ եւ եհարց վասն արդարոց եւ մեղաւորաց երբ եւաննեն յաշխարհէս: Ասաց Հրեշտակն. Արդարոցն լոյս է եւ Հանդիսու, կեանք յաւիտենական, իսկ մեղաւորացն¹⁷ տանջանք անվախճանն: Ասէ Եղբ. Եթէ այդ այլպէս իցէ, ապա երանի անասոնց եւ զազանաց երկրի՝ եւ սոզնոց եւ թռչնոց երկնից, որ ոչ մնան յարութեան եւ դատաստանի: Ասէ Հըրեշտակն. Մեղանչես զայդ ասելով, զի ամենայն ինչ վասն մարդոյն է արարեալ Աստուծած, եւ զմարդն վասն Աստուծոյ եւ յորս ուր զտանէ Աստուծն ըդմարդն, այնու զտատէ: Ասէ Եղբ. Յորժամ ամնուս զողիս մարդկան, ո՞ւր տանիս: Ասէ Հրեշտակն. Զարդարոց Հոգին տանիմ յերկրագաղութիւն Աստուծոյ եւ կայացնեմ¹⁸ ի յօդդ վերին, եւ Հոգիք մեղաւորաց ըմբռնին ի գիւաց եւ¹⁹ յօդս են արգելած: Ասէ Եղբ. Եւ Հոգին որ կալցի²⁰ ի Սատանայէ, Ե՞րբ ազատի²¹: Ասէ Հրեշտակն. Եթէ իցէ Հոգւոյն ի յաշխարհիս²² բարի յիշտակ որ աղօթիւք եւ որոդմութեամբ²³ թափէ զնա ի Սատանայէ: Ասէ Եղբ. Որո՞վ իրօք: Ասէ Հրեշտակն. Ալզթիւք²⁴, ողորմութեամբ եւ պատարացօք: Ասէ մարգարէն. Եւս թէ կենայ²⁵ Հոգւոյ մեղաւորին²⁶ բարի յիշտակ որ օժանդակ է նմա, զինչ լինիցի այն Հոգին: Ասէ Հրեշտակն. Մնայ այնպիսին՝ ի ձեռն Սատանայի մինչ ի զայտուս Քրիստոսի, յորժամ հնչէ փողն Գարբիէլի. յայնժամ ազատին Հոգիքն ի ձեռացն Սատանայի, եւ ոլանան յօդիցդ ի վայր եւ զան միանան յիւրաքանչիւք մարմին Հոգացեալ զոր ձայն փողոյն շինէ եւ զարթուցանչէ²⁷ եւ նորագէ²⁸: Եւ ընդ առաջ վերացուցանէ Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ զայ ի զատել²⁹ զեր-

¹⁵ Էջ 300-303:


¹⁶ M. E. Stone, "The Mediaeval Ezra" Studies in the Pseudepigrapha (forthcoming).

կիր, այս է¹⁰ զարդարս եւ զմեղաւորս եւ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց :

Աղեղսահնօք հոգեպատում մարզարէիցն քոց անձառելիթ Աստուած, ողորմեա բոտացողի գրոյս :

ՄԻՔԱՅԼ ՄԹՕՆ

1-1 Հուր եւ խաւար եւ դժոխք յախտենական, ² բնակեցուցանեմ ³ որ
4 ըմպանի ⁵ զեղծանի ⁶⁻⁶ 0քս. չունի ⁷ 0քս. չունի ⁸ չունի ⁹ 0քս. չունի
10-10 0քս. չունի



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԱՄՐՏՈԼՈՒ ՎԱՆՔ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ — Ամրտոլու վանքը — աւելի ճիշդը Ամրտորդուոյ վանքը, որովհետեւ կառուցուած է Սուրբ Յովհաննէս կարապետի անունով — կը դանուի Բաղէջ (Պիթիս) քաղաքին մէջ, շատ գեղեցիկ դիրքի մը վրայ : Անի սիւնազարդ եւ զմբէթաւոր եկեղեցի մը, որ մեծապոյնն է քաղաքին եւ շրջակայ վայրերու եկեղեցիներուն (Հմմտ. Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, Վեհատիկ, 1864, էջ 242) :

ՊԱՏՄԱԿԱՆ — Բաղէջի առաջնորդները Ամրտոլու վանքին մէջ կը նոտէին ժամանակ մը, ետքէն Առաջնորդարանը տեղափոխուեցաւ քաղաքին կարմրակ Ս. Նշան եկեղեցին : Ամրտոլու վանքը եղաւ մին Հայաստանի այն վանքերէն, որոնք բարձրագոյն ուսմանց կեղրոն զարձան եւ պատուեցան «Համալսարան» կոչումով : Այս վանքին մէջ Երեք գար շարունակ ծաղկեցաւ Հայ եկեղեցւոյ վարդապետական գաւազանը, հոչակաւոր վարդապետներու ձեռքին մէջ, որոնք առաւելապէս կենողանի բարբառով Աւետարանի կենուառու պատգամները հնչեցուցին Հայաստանեայց եկեղեցւոյ բեմերէն : Այդ նշանաւոր վարդապետներու յաջորդութիւնը ահաւասարիլ :

1.— Դամիկէ Վ. Ա. Հայնաւոր, որ մին է եռամեծ Գրիգոր Տաթևեացիի (+ 1409) աշակերտներէն եւ կը նկատուի Ամրտորդոյ վանքին վարդապետական գաւազանին դրուխը : Իրեն կը յաջորդէ իր աշակերտը,

2.— Յովհաննէս Վ. Ա. Համշէնցի, կոչուած «Հրեղէն լեզու» (Գաւազագիրք, Լուսարարեան, էջ 88) : Յովհաննէս Վ. Ա. Համշէնցիի աշակերտներէն կը յիշուին Թորոս Վարդապետ, Գրիգոր Վ. Ա. Բանիչեցի, մականուն Չորթան, եւ Մաղաքիա (Արարատ, 1913, էջ 595) : Համշէնցի կը մասնանի 1497-ին : Իրեն կը յաջորդէ,

3.— Գրիգոր Վ. Ա. Արմիշեցի, Չորթան : Առաքել Վ. Ա. Գաւրիմէնցիի Համաձայն Չորթանէն է որ կը սերին ամբողջ արեւելեան վարդապետները (Պատմութիւն, էջ 441) : այսինքն արեւելեան Հայաստանի վարդապետական դաւագանին դրուիր կը կենայ Չորթանի անունը, իսկ արեւմտեան ճիւղը կը դիմաւորէ Թորոս Վ. Ա. Գաւրիմէնցիին : Գրիգոր Արմիշեցին Երուսաղէմ եկած է 1480-ին, եւ Երեք տարի հուն մնալով Վրանիկ բանիկ գառա ըսած է իդնատիս վարդապետի Հուկասի Աւետարանին Մեկնութիւնը — Ցուցակ Զեռ . Երուսալէմի, Բ. Հատոր, 1967, էջ 249 :

Չորթանին կը յաջորդէ իր աշակերտը,

4.— Ներսէս Վ. Ա. Մատող, որմէ գաւազանը կը ստանայ իր համանուն աշակերտը,

5.— Ներսէս Վ. Ա. Բաղիշեցի : Սա 1567 թուին կը յիշուի իրեն առաջնորդ Բաղէջի Խնդրակատար Ս. Աստուածածնի Վանքին, ուր եւ Թաղուած է ըստ Դաւիթ Բաղիշեցիի (Թօփմէնան, Ցուցակ Զեռ . Խաչիկ Վարդապետի, Վաղարշապատ, 1898, էջ 99) : Իր աշակերտներէն ծանօթ են չորս հոգի : Ներսէս Վ. Ա. Ամենայի Բորիկ, Հէրապետ Վարդապետ, Դաւիթ Վարդապետ, եւ

Յովհաննէս Վարդապետ (Թորոս Աղբար, Բ. էջ 257) : Ասոնցմէ իրեն յաջորդած է դարձեալ Համանուն մը,

6.— Ներսէս Վրդ. Ամկեցի, մականուն Բորիկ, կոչուած նաեւ Հետեւակ : Երկու մակղիրներն ալ կ'երեւի թէ կը ծագին ներսէս Ամկեցիի քակելու կերպէն (Հմմտ. Գր. Դարանազեցի, Ժամանակագրութիւն, էջ 371) : Յիշատակաղիր մը զինք կ'որակէ «քանիրուն եւ քաջ րարունապետ» (Թ. Աղբար, Բ. 257) : Այս ալ իրեւ Խնդրակատարի առաջնորդ կը յիշատակուի 1575 թուին, որ իր մահուան տարին եղաւ : Ամկեցիի աշակերտներէն յիշուած են Յովհաննէս Վրդ. Ռատանցի, Ազարիա Շահկերտցի, այն է Զուզայեցի (Առ. Դաւր. էջ 441), Զագ Վրդ. Վանեցի, Յովհաննէս Վրդ. Բաղիշեցի (Յովիկ), Սիմէռն Վրդ. Շընորհալի, եւ Մարտիրոս Վրդ. մականուն Արահու (Գր. Դաւր. էջ 371-373) : Ներսէս Ամկեցիին կը յաջորդէ,

7.— Յովհաննէս Վրդ. Ռատանցի, կոչուած նաեւ, իր ծնած զիւղին անունով, Վառնիշատացի, մականուն Բրդուտ, Բրդութենց կամ Բրդուչենց (Հմմտ. Հ. Ակիննան, Հանդ. Ամս. 1937, էջ 210-215) : Իրեն աշակերտած են Սիմէռն Վրդ. Ապարանցի, Բարոնդ Վրդ. Գաւառցի, եւ ներսէս Վրդ. Բաղիշեցի (+ 1618) : Յովհաննէս Վրդ. Ռատանցի կը վախճանի 1589-ին, եւ իրեն կը յաջորդէ,

8.— Բարսեղ Վրդ. Գաւառցի կամ Բաղիշեցի (1599-մ. 1615), որդի Ներսէս երէցի եւ Մհերշահի : Սա վերաշնեց Ամբողութ Վանքը (1599), եւ վայելացաց հին դասատունը : Բարսեղ Սուրբ Գրոց ուսումնասիրութենէն զատ հետամուռ եղաւ իմաստասիրական ուսմանց ճիւղն ալ մշակելու, եւ ինքաշ-խատութեամբ եւ ազօթքով յաջողեցաւ խելամուտ ըլլալ արտաքին գրոց, այս-ինքն Արքատուտէլի, Պորփիրի, Դաւիթ Անյաղթի, եւայլն երկերուն : Ինքը պատճառ եղաւ որ Սահմանաց Գիրքը, Պորփիրը, Ստորոգութիւնը եւ Պէրի-արքէնիսաը դարձեալ կիրարկութին Հայ վանքերու մէջ իրրեւ զասագիրքեր : Բարսեղի աշակերտներէն Նշանաւոր եղաւ Յովհաննէս Բաղիշեցի՝ Բուժիկ, Ներսէս Մոկացի, մականուն Բեղլու, տոհմանուն Մահուկենց, Յովիկի Մոկա-ցի կամ Ազմեցի, եւ Հայրապետ Մոկացի (Առ. Դաւր. էջ 394) : Իր մասին տեսնել նաեւ Հանդէս Ամսօրիայ, (1951, էջ 207-219) : Իրեն յաջորդեց առաջնորդը,

9.— Յովհաննէս Վրդ. Բաղիշեցի, մականուն Բուժիկ, որուն աշա-կերտեցաւ եւ յաջորդեց,

10.— Խաչատուր Վրդ. Բաղիշեցի, իր աշակերտէն որակուած «ան-յաղթ պուեսուն», եւ միլիսուփոսն Հայոց» (Ե. Լ., Յ. Զեռ. Վասպ. էջ 27) : Սա վախճանեցաւ 1662-ին, իրեն յաջորդ թողլով իր մէծահոչակ աշակերտը,

11.— Վարդան Վրդ. Բաղիշեցի (+ 1704), որդի Եղիայի եւ Ղարի-պի : Վարդան հիմնովին վերաշնեց վանքը եւ եկեղեցին (Կոլոտ, էջ 144-145) : Ան մէծ զարկ տուաւ Ամբողութ Դպրոցցին : Կարգաւորեց Վանքին մատենադա-րանը, յատկապէս հրատիրելով Վանեցի Սահակ Դպիրը, հինցած, մաշած զիր-քերու նորոգումին համար : Վարդան Վարդապետ հասցուց անուանի աշակերտ-ներ, ինչպէս, Գրիգոր Վրդ. Շիրուանցի, ապա պատրիարք Երուսաղէմի, ծա-նօթ Շղթայակիր մակղիրով (+ 1749), Յովհաննէս Վրդ. Ասպա պատրիարք կ. Պոլսոյ, կոչուած Կոլոտ (+ 1741), որուն վրայ պատմագրական եւ բանափ-րական ուսումնասիրութիւն մը զրեց Բարդէն Շ. Վրդ. Կիւլէսէրեան (Վիեննա, 1904, էջ 226), եւ Արքահամ Վրդ. Խոշարեցի, ապա կաթողիկոս Ս. Էջմիածնի (+ 1734) :

Վարդանի մահով դժբախտաբար մահացաւ Ամբողութ զասատունն ալ : Բայց Օրմանեանի յաջորդութիւնը ինդիրներու տեղի տուաւ եւ ներքին զրժ-րութեանց պատճառ եղաւ, որով երկու ընտրելագոյն աշակերտներ, Գրիգոր

և Յովհաննէս, ստիպուեցան իրենց սիրեցեալ համալսարանը թողուց» (Աղջու. էջ 2791)։ Զէ յիշուած թէ ով եղաւ Վարդանի յաջորդը։

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ — Տեսանք արդէն զգրոցական այն փայլուն գործունէութիւնը որ Ամբոսու Վանքին փառքը կը կազմէ։ Կրթական այդպիսի միջավայրի մը մէջ անշուշտ գրչագրական աշխատանքներն այ պիտի քաջակրտւէին։ Այս մասին թէեւ առաստ չէ մեր ունեցած ատաղձը, բայց կը բաւէ ցուցնելու թէ Հայ զրի մշակները հոս ալ տքնած են երկար ժամանակ։ Դիտելի է որ արդ զրիներուն մեծագոյն մասը ապրած են Ժի. զարու Բ. կիսուն, երբ շընորհն Բաղիչեցի Վարդան Վարդապետին, Ամբոսուն կը բոլորէր իր պատմութեան ամէննէն շոշչողուն շրջանը։

Ա. — Պօղոս Արեղայ, Գրիչ, 1495-ին օրինակած է Աւետարան մը։ — Զեռ. Երեւանի, թ. 5751։

Գ. — Ներսէս Արեղայ, Գրիչ, Շաղկող եւ Կազմող, 1568—1607։

1. — Ծաղկաբաղ յԱւետարանաց, 1568-ին օրինակած է. ստացող Կիրակոս։ — Զեռ. Երեւանի, թ. 3630։

2. — 1607-ին ծաղկած եւ կազմած է Բարսեղ Վարդապետի օրինակած Գործոց Մեկութիւնը։ — Զեռ. Ս. Յ. թ. 1165։

Դ. — Եղիա Գրիչ, 1571-ին օրինակած է մէկ Շարակմոց. ստացող Սահակ Էպիսկոպոս։ — Զեռ. Երեւանի, թ. 5102։

Ե. — Ցովհաննէս Արեղայ, Գրիչ, 1574-ին կ'օրինակէ Աւետարան մը, Յովհաննէս Վարդապետի Համար, որ ըստ Հ. Ակինեանի Հաւանօրէն Բրդութենցն է. — Հանդ. Ամս. 1937, էջ 210։

Զ. — Բարսեղ Վրդ. Գաւառցի, 1598—մ. 1615, օրինակած է,

1. — Մեկն. Գործոց Առաքելոց, Գէորգ Ակեւուցիի, 1598-ին. — Հանդ. Ամս. 1937, էջ 212։ 1951, էջ 212։

2. — Մեկնուրիսն Մատրէի, Ներսէս Շնորհալիի, 1604-ին. — Հանդ.

Ամս. 1937, էջ 212։

3. — Մեկն. Գործոց Առաքելոց, Մատթէոս Վարդապետի, 1607-ին. ծաղկող եւ կազմող Ներսէս կուսակրօն քահանայ. ստացող Գրիչը. — Հանդ. Ամս. 1951, էջ 215։ Զեռ. Ս. Յ. թ. 1165։

4. — Եղեկիէլ Գրիչ օրինակած Յ. Որոտնեցւոյ եւ Գր. Տաթեւացւոյ ճառերուն քայլայուած ձեռագիրը նորոգած է «կարկատելով եւ զեղծեալն զրբելով ի վայելուն աշակերտեալ անձանց», 1614-ին. — Կոն. թ. 78։ Հանդ. Ամս. 1951, էջ 215։

Լ. — Վարդան Քահանայ, Գրիչ, 1617-ին օրինակած է Պատմառաց Գիրք մը, զանազան հեղինակներու. — Կար. 1611։

Բ. — Գրիգոր Երեց, Գրիչ, 1644—1659, աշակերտ տէր Սահակի։ Ամիրտուոյ Վանքին մէջ օրինակած է,

1. — Վարք Հարամից, 1644-ին, Բաղիչեցի Մեսրոպ Վարդապետին Համար. — Տաշեան, Յուցակ, թ. 66։

2. — Աստուածաշունչ մը մասամբ գրած եւ վերանորոգած է 1659-ին. — Ե. Լ. Յուցակ Զեռ. Վասու. էջ 26։

Թ. — Սարգիս Սրի. Ամբեցի, Գրիչ եւ Նկարիչ, 1653-ին օրինակած է Խորիրդասեար մը, Բաղիչեցի Վարդան Վարդապետի Համար. — Զեռ. Ս. Յ. թ. 2274։

Ժ. — Յովհաննես Սարկուազ, որդի Խանէսի և Նիտղի. 1656-ին նորոգած է՝ 1283-ին գրուած Հաւաքածոյ մը. — Տաշ. էջ 1039:

Ժ.Ա. — Անդրէաս Դպիր, 1680-ին օրինակած է Ժողովածոյ մը, Բաղիշեցի Վարդան Վարդապետի Համար. — Զեռ. Երեւանի, թ. 5074:

Ժ.Բ. — Վարդան Թիմ. Բալուեցի, Գրիչ, 1685-1691, որդի Խաչատուր սարկաւագի. օրինակած է:

1. — Գանձարան՝ Մաշտոց, 1685-ին, Եղիսարի մի պատուէրով. —

2. — Աւետարան, չ. 1690-ին. — Զեռ. Երեւանի, թ. 10336:

3. — Մաշտոց, 1691-ին, Մարդար քահանային Համար. — Զեռ. Երեւացակ Զեռ. Մշոյ, էջ 179-180:

Ամփ, թ. 3987:

Ժ.Գ. — Վարդան Վլոդ. Բաղիշեցի, +1704:

1. — 1657-ին վերստին կազմած է Միխայէլ Ասորիի Պատմութիւն մը, և դրած է բնդարձակ յիշատակարան մը, ժամանակադրական Համառու տեղեկութիւններով Հանդերձ. — Դիւան, ժ. էջ 1, և 67-81:

2. — 1659-ին նորոգած է հին Աստուածաշունչ մը, «բազմամեայ տաժունմամբ»: — Վասպ. էջ 26:

Ժ.Դ. — Պօլու Երէց Գաւառացի, Գրիչ, 1672-1676, աշակերտ Բաղիշեցի Վարդան Վարդապետի: Իր ուսուցչին Համար օրինակած է,

1. — Ժողովածու Պատմագրաց, 1672-ին. — Ազաթ. Տիգր. Ժ.Դ. 8:

2. — Պատմ. մեծի բարունապետի Թումայի, զոր արարեալ է Կիրակոսի բանասէր Վարդապետի. — Գ. Վ. Յովոկիկեան, թ. Մեծովիկու Կեանըր, 1914, էջ 111: Զեռ. Երեւանի, թ. 1899:

Ժ.Ե. — Սահակ Դպիր Վանիցի, Նադիոդ, որդի Ամիրջանի և Զինորի, աշակերտ Էջմիածնեցի Միմէտն մեծ բարունիին: 1674-ին ծաղկած է մաղաղաթեայ Աւետարան մը, գրուած Յովհաննէս քահանայի մեռքով: Բաղիշեցի Վարդապետի յանձնաբարութեամբ Ամբառու Վանքին մէջ ծաղկած է շատ մը գիրքեր, և նորոգած է Կօթանառուն ութ Հատորներ, Հոն բնակելով մէկ տարի և հինգ ամիս. — Վասպ. էջ 944: Հանդ. Ամս. 1952, էջ 28:

Ժ.Զ. — Յակով Երէց, Գրիչ, 1689-ին օրինակած է

1. — Պատմ. Մատրէոսի Ռուհայեցւոյ,

2. — Պատմ. Թովմայի Արծրունոյ, և

3. — Վիպաշանուրիս Սիմ. Ապարանցւոյ, այժմ Երեքը մէկ կաղմի ոտակ. — Զեռ. Երեւանի, թ. 1896:

Ժ.Ի. — Աքրահամ Դպիր, քեռորդի և աշակերտ Գրիգոր Շղթայակոր, 1696-1698, օրինակած է,

1. — Հարանց Վարք, 1696-ին, Մանուէլ սարկաւագի Համար. — Զեռ. Երեւանի, թ. 5626:

2. — Մեկնուրիս Մատրէոսի, Գր. Տաթեւացոյ, 1697-ին. — Գեղարքունի, էջ 406 (73ր):

3. — Ժողովածոյ (կրօնական), չ. 1697-ին, անացող իր մօրեղբայրը Գր. Վարդապետ, որդի Աւետիքի և Զուհարի. — Զեռ. Ս. Յ. թ. 1464:

4. — Տօնացոյց, 1698-ին, տիրացու Ղազարի փափաքով. — Զեռ. Երեւանի, թ. 5308:

Ժ.Ը. — Գրիգոր Գրիչ, 1703-ին օրինակած է մէկ Տօնապատճառ-Ժողովածոյ. ստացող՝ Վարդան Վարդապետ. — Զեռ. Երեւանի, թ. 2771:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

«ՑՈՒՑԱԿ ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԵՐԻՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵԶ»

— Աւտու Սանժիան : “A CATALOGUE OF MEDIEVAL ARMENIAN MANUSCRIPTS IN THE UNITED STATES.”, By Avedis Sanjian. Published by the University of California Press, 1976, 800 pp.

Մօտ տարի մը առաջ, Ամերիկայի Գալիֆորնիա նահանգի Համալսարանի հրատարակութեամբ լոյս տեսաւ պատկառելի Հատոր մը, որու մասին չանդրագարձաւ արտասահմանի մամուլը, իսկ Հայաստանի Հայադիտական Հանդէսները յիշատակութեամբ մը գոհացան : Այդ Հատորն է ցուցակը Հայերէն ձեռագիրներու, որոնք, հետեւելով մեր ժողովուրդի ճակատագրին, զաղթական ելած են եւ, փոխանակ ըլլալու «առ գոռնս Ս. Յակոբայ» կամ «ընդ հովանեաւ սուրբ Կարապետին եւ Ս. Նշանին», մեր երկրի վանքերու զրադարձներուն մէջ, արժատափակի ցրուած են օտար երկիրներ, այս պարագային, Ամերիկա :

Ամէն անգամ որ ձեռագիրներու ցուցակ մը կը տպուի եւ կը հրատարակուի, կարծէք նոր խումբ մը կը յայտնուի կորսուած զրչագրերու, որոն յանկարծ ի լոյս կ'ընծայուին : Մանօթ էր Հայագէտներուն, որ նիւ նորքի Ս. Գիրքի Ընկերութեան մօտ կամ ՖիլատելՓիոյ Գուէյզըրներու Հաւաքածոյին մէջ ինչպիսի Հայերէն ձեռագիրներ պահուած կային, սակայն Ամերիկայի ու սումնական Հաստատութիւններուն եւ Թանդարաններուն մէջ պահուող Հայ ձեռագիրներու զիտական եւ մանրամատն ցուցակագրութիւնը նոր յայոնութեան մը տպաւորութիւնը կը թղու ընթերցողին վրայ, որ կը թղթատէ 862 էջերէ կազմուած այս Հատորը : Այնքան յման, խղճամիտ եւ ամբողջական է նկարագրութիւնը իրաքանչիւր ձեռագրի :

Երբ կը նայինք կղքին, առաջին ուշագրաւ երևոյթը այն է որ կը բացակայի վերտառութիւն մը, որուն վարժուած էինք վերջին տասնըշհինդ տարիներուն . «Հայկական Մատենաշար Գալուստ Կիւրզէնկեան Հի մնարկութեան» : Կորսուած Հաւաքածոներու ցուցակներ, ինչպէս Ղալաթիոյ, Արմաշի, Մշոյ Առաքելոց վանքի ձեռագիրներու ցուցակները կամ այսօրուան նոր Զուղայի, Զմմատի, Վիեննայի ձեռագրական Հաւաքածոներու ցուցակները, ինչպէս նաեւ Երուաղէմի Ս. Յակոբեանց Զեռագրաց Մայր Ցուցակի ութը Հատորները հրատարակուեցան եւ կը շարունակեն լոյս տեսնել Գալուստ Կիւրզէնկեան Հիւնարկութեան բարեկար օժանդակութեամբ : Կ'ակնկալուէր որ Հաստատուած անգութիւն մը շարունակուէր նաեւ Ամերիկայի ուղղութեամբ, ընդդրկած բրալու Համար Հայ ձեռագիրներու ցուցակագրութիւնը իր ամբողջութեամբ :

Երկրորդ դիտողութիւնը յուսահարութենէ մը կը բխի . որ այս ցուցակին դուրս մնացած են Գալիֆորնիայի իսկ Համալսարանի Հաւաքածոյի ձեռագիրները, որոնք նոյնինքն Հեղինակին ջանքերով եւ ձեռքերով տարուեցան այն Համալսարանը ուր Փրօփ : Աւետիս Սանճեան կը վարէ Հայադիտական Ամպիոնը : Նախարանին մէջ հեղինակը կը խոստանայ առանձին ցուցակով մը հրատարակել «Հարիւր յիսունի Հասնող» ձեռագիրներու նկարագրութիւնը : Յունանք որ պիտի չուշանայ այդ խոստամին իրականացումը :

Գալով անհատական հաւաքածոներուն, որոնցմէ երեքը ծանօթ են (Քիւրտեան, Հազարեան և Գէորգեան), անոնք ալ դուրս մնացած են այս հասորի ցուցակագրութենէն, հասկնալի պատճառներով։ Արդէն մխիթարական է հաստատել որ Յարութիւն Քիւրտեանի դժբախոմանէն ետք, երեք հարթերէ ուղիի իր ձեռագիրները փոխազրուած են Վենետիկի, Մխիթարեան Հայրերուն մօտ, որոնք, վատաշաբար, պիտի հատարակեն անոնց ցուցակը։ Պին. Յարութիւն Հազարեանի հաւաքածոյնէն կարեւոր մաս մը երեւանի Մաշտոցեան Մատենադարանին մէջ յատուկ դարան մը կը լեցնեն արդէն, յաւիտենապէս փրրկուած իրենց պանդիստութենէն։ Նոյնը չէ դժբախտաբար Գէորգեան հաւաքածոն, որմէ խումբ ձեռագիրներ կը վաճառուին միջազգային հրապարակներուն վրայ։

Փրօֆ. Աւետիս Սանձեանի հրատարակած հատորը կը ցուցակագրէ 180 ձեռագրեր, ցրուած տասներեք Ամերիկեան նահանգներու և Գանատայի համալսարաններու, գրադարաններու և թանգարաններու մէջ։ Ասոնցմէ ամենէն հինը կ'իրթայ մինչեւ Ժ. դար (966) եւ Ռւոլթրը Կալյորիի ծանօթ Աւետարանն է։ Եօթանասուն եւ երկու Աւետարանները կը կազմեն կարեւոր մաս մը նկարագրուած մատենաններուն։ Խոկ տասներէն պատառիկներ կան Աւետարաններու, որոնց մանրամասն նկարագրութիւնը եւ պատմականը, բժախնդիր ուշադրութեամբ կատարուած, հատորին կու տան կատարեալ աշխատանքի մը գեղեցիկ նկարագրուած։

Մանրանկարչութեան արուեստի տեսակէտով իրենց ներկայացուցած կարեւորութեան համար, յիշեալ Աւետարաններու կարեւոր մէկ մասին նկարները դնահատուած եւ ներկայացուած էին Օր. Սիրաբի Տէր Ներսէսեանի ուսումնասիրութեամբ։ Ասոնցմէ, օրինակ, Գանձմասարի վանքէն Շիքակոյի համարարան ապաստանած, 1237-էն առաջ գրուած եւ մանրանկարներով ճոխացած ձեռագրիրը, որուն արուեստը, տարրեր նոսովին եւ Կիլիկեան մանրանկարներու բարթամ հարստութենէն, վկան է Հայկական յեռնաշխարհի խստացրոշ զեղեցիկութեան յատուկ զուսպ բայց ուժեղ պարզութեան։ Նկարչական արուեստով Հարուստ Աւետարաններու իր նկարագրութեան մէջ, Հեղինակը կը ցուցակագրէ նաեւ նկարները, մանրամասնորդէն, մէջս յիշելով թէ ո՞ւր հրատարակւած է իւրաքանչիւր մանրանկար, ևթէ Հրատարակուած է։ Միայն պարունակը, այլ մանրանկարչական արուեստի հակիմ բայց խնամուած նկարագրութեան մանրամասնութիւններու նկարագրութեամբ չէ՝ ոռհացած Հեղինաթեամբ ցուցակագրած է իւրաքանչիւր ձեռագիրի նկարագարդուած էջերը, ամրողնական գործ մը կատարած ըլլայու եւ արուեստի գնահատականը ընող մոռնագէտի խղճմուութեամբ։

Աւետարաններէն զատ, Փրօֆ. Ա. Սանձեանի գիրքին մէջ ցուցակացրուած ձեռագիրներուն մէջ կան Շարակնոցներ, Սաղմուններ, Տօնացոյցներ, Ժամագիրքներ, Ճառընտիրներ, Յայամաւուրքներ, Ճաշոց, Տազարան, Քարոզպիրք, Յաճախապատում մը (Ժ. դարէն), մեկնողական, իմաստասիրական և պատմական պարունակութեամբ մի քանի ձեռագիրներ։ Ասոնցմէ իւրաքանչիւրը նկարագրուած է իր բոլոր առանձնայատկութիւններով։ Նիւթը (Թուղթ կամ մազաղաթ), չափը եւ էջերու թիւը։ Կազմը նկարագրուած է առանձին, ընդդժեկով անը ներկայացուցած շահագրգոռութիւնը։ Ձեռագրի պատմութիւնը ընելէ առաջ, նկարագրուած է իւրաքանչիւր ձեռագիրի վիճակը։ Պատմականը, առ հասարակ, գնահատում մըն է յիշատակարանի ներկայացուցած կարեւուր տեղեկութիւններուն։ Պարունակութիւնը ցուցակագրուած է իւրաքանչիւր զրութեան էջաղբութեամբ, ոկիզը եւ վերջ, Հայերէն վերնազրի մէջբերումով

Եւ անոր անդլերէն թարդմանութեամբը, ուր հեղինակը փաստը կռւ տայ իր մասնագիտական լայն ծանօթութեան մեր մատենագրութեան, ընդհանրապէս և ձեռագիրներու պարունակութեան, յատկապէս : Պարունակութեան մանրամասն այս ցուցակագրութեան կը հետեւի ցանկը, նկարագրութիւնը եւ դնահատումը նկարներուն եւ ապա՝ ամբողջութեամբ կը մէջքերուին յիշատակարանները, միայն հայերէն, քանի որ անոնց պարունակած տեղեկութիւնները միտիութեած եւ տրուած էին անդլերէն լեզուով եղած պատմականին մէջ, նրկարագրութեան սկիզբը : Ամէն ձեռագիրի մանրամասն եւ Հանդամանաւոր այս ներկայացումը կ'աւարտի մատենագիտութեամբ մը, ուր կը յիշուին տուեալ ձեռագիրի մասին գրուած յօդուածները կամ անոր յիշատակութիւնը զանազան կիրքերու եւ ցուցակներու մէջ :

Դժուար չէ երեւակայել ծանր եւ համբերող աշխատանքը զոր կ'ենթադրէ նման հատոր մը . երբեմն հազարաւոր մզոններով հեռու տեղեր, ամբողջ աշխարհի մը վրայ ցիրուցան այլապան ձեռագիրներու սպառիչ ուսումնասիրութիւնը, քննութիւնը իւրաքանչիւր էջի ամէն մանրամասնութեան, թարգմանական ճիզը, արուեստի էջերու գնահատումը, այդ ձեռագիրի մասին հրատարակուած գրականութեան մէկտեղումը, յիշատակարաններու հրատարակումը եւ մեկնութիւնը եւ այս բոլորը պակող 80 էջերը ուր կան

ա . ընդհանուր մատենագիտութիւն մը (ազրիւրներ), անդլերէն և հայերէն գրուած հրատարակութիւններու,

բ . ընդհանուր ցանկ յատուկ անուններու, անդլերէն և

գ . նոյնը՝ Հայերէն, այրուենական կարգով :

կը սպասէինք որ Ամերիկայի գլխաւոր համալսարաններուն մէջ Հաստատուած Հայագիտական Ամպիոնները, ուսուցման իրենց զնահատելի առաջելութեան զուգընթաց՝ սկսէին բերել Հայագիտութեան այսպիսի նպաստ մը . մնայուն աշխատանքներ, որոնք յայտնէին գիտական եւ քաղաքակիրթ աշխարհին՝ Հայ միտքի եւ արուեստի ճոխ զանձերը, որոնց զերազոյններն են, անտարակոյս, Հայ ձեռագիրները : Այդ աշխատանքը սկսած է տասնամեակէ մը իվեր : կը մազթինք որ ծագկի եւ բարդաւաճի :

Յրուացանկ «Ազգապատում»ի Յատուկ Անուններու . Պատրաստեց Տիրոյ Մ. Վ.րդ. Տերվիշեան . Հրատարակութիւն Հայկական Բարեգործական Հնդիանուր Միուրիքան Ալիք Մանուկեան Մօակուրային Հիմնադրամի . 377 էջ . Տպ. Լու Աննելիս, 1976:

Խնչ բան հաստրակաց է հնատեալ գրքերուն . - Մարտ՝ Գր. Հ. Գուլուստեան, 1934. Հոյոց Հին Գրումանուրեան Պատմութիւն՝ Ակադեմիկոս Մ. Արեգեան, 1942. Պատմութիւն Անքեպի Հայոց՝ Գէորգ Ա. Սարաֆեան, 1953. Պատմութիւն Հայ Գողրականուրեան՝ Արշակ Արագոյանիան, 1955. Խարբերդ և Անոր Ռակետին Դաւոր՝ վահէ Հայկ, 1959. Հայկական Մատենագիտութիւն, Հատոր Ա.՝ Յ. Ս. Անասեան, 1959. Կանոնագիր Հայոց՝ Վազգէն Յակովեան, 1964:

Հասարակաց է սա իրողութիւնը որ վերայիշեալ պատմագիտական երկերու հեղինակները իրենց բազում ազրիւրներու շարքին նկատի ունեցած են նույն երջանկայիշատակ Մաղաքիա Արքեպիս:

Անցեալ տարի լրացաւ «Ազգապատում»ի Գ. Հատորին յԵրուսաղէմ հրատարակութեան 50 րդ տարեդարձը: Օրմաննեան նախ քան Համաշխարհային Ա. Պատերազմի պայթաւմը բախար ունեցած էր անոնելու հրատարակութիւնը իր ծննդավայր և, Պալսոյ մէջ «Ազգապատում»ի Ա. և Բ. Հատորներուն՝ 1912ին և 1914ին: Անխօնչ պրոլտող այս մեծ հոգեսրական մատենագիրը Հայ ժողովարքի պատմութիւնը փորձած էր կերտել, առօր առանցք համարելով Հայաստանեաց Եկեղեցին, սկսելով անոր հիմնագիր Յիսուս Քրիստոսի ժամանակէն, և Հայ Եկեղեցւոյ կաթողիկոսներու ժամանակագրական կարգով ծրագրած իր պատմութիւնը հասցընելով մէնչև 20 րդ Դարու առաջին առանամենակը: Եռանատոր այս ընդգարձակ դործին մէջ սպրոգած են անխօնափելի սխալներ: Օրմաննեան տեղ յայտնած է կարծիքներ և գտառմանը որոնք չափազանցեալ և մինչեւ անգում առարկելի կը թուին, սակայն իր մօակցումին լրջութիւնը և գործին համապարփակ բավանդակութիւնը գրած են «Ազգապատմում»ը գասական համարուելիք գրքերու կարգին: Թերես հարիւրներով կարելի է հաշուել թիւը մեծ ու պղպակի պատմական ուսումնասիրութեանց, ըլլան անոնք հրատարակուած Հայ Սփիւռքի կամ Խորհրդային Հայաստանի մէջ, որոնք 1927էն ի վեր իրենց օգտագործած աղբիւրներու կարգին գիրձած են «Ազգապատում»ին:

Երբ Ասոււածոււնչի մէջ անուն մը կամ որոշ նիւթ մը որոնէ մարդ, իբր բանալի կը գործածէ Սուրբ Գրոց Համարարրուամը: Պատմականգիտական երկնը անհրաժեշտորին կը կորոտին ոյյուրենական շարքով կազմուած ցանկի մը, որու շնորհիւ պղպասզը կարենայ զի՞նք հհատքրքրութնիւթի վերաբերեալ էջը կամ համառութը անմիջապէս գտնել: Եւ քանի ընդորժակ ըլլայ երկասիրութիւնը, այնքան կը շեշտափ անհրաժեշտութիւնը այդպիսի ցուցակի մը:

Խնչոյէս «Յրուացանկ»ը պատրաստող Տ. Տիրոյ Մ. Վ.րդ. Տէրվիշեան կ'ըսէ իր Յառաջտրանին սկիզբը, «Ազգապատմում»ի Յատուկ Անուններու Յրուացանկը պատրաստելու համար առաջին փորձը ըրած է նոյն ինքն գրքին հեղինակը, լուսահոգի Մաղաքիա Արքեպիսկոպոս

Օրմանեան . . . և սակայն հազիւ քանի մը հարիւր էջ ըրտծ ու անտառաբաթողած էր»:

Տիրայր Մ Վ. Պ. Տէրվիշեանի յայժ հետաքրքրական յառաջարտնը յայտնի կ'ընէ թէ երկասիրողը «Ծրուացանկ»ին մօտ քառասուն տարիներու իր յաճախ ընդհանաեալ սակայն յամա աշխատանքին չնորհիւ է որ կրցած է ամբողջացնել զայն: Թէզ մը չէ այս գործը, սակայն Հայ Եկեղեցին և ապդը ջերմօրէն սիրող նուիրեալ հագեռորդականի մը ինքնարերաբար ստանձնած և աչքի լոյս սպասով ձեռնարկ է: Ինչ խօսք որ զինք ներշնչող կամ քաջալերող եղած հն մեծարժէք գաստիարակներ, ինչպէս Բարդէն Եպիսկոպոս — ապա Կաթողիկոս — Կիւլէսէրեան: Թորգում Պատրիարք Գուշակեան (երկասիրողին հագեռոր ծնողը). Տիրան Արքեպօս Ներսոյեան և Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս: Տ. Տիրան Արքեպօս Ներսոյեանի միջնորդութեամբ և գնահատական վկայութեամբ է որ Ալեքս Մանուկեան Մշակութային Հիմնադրամի Վարչութիւնը ստանձնած է մեկենասութիւնը «Ծրուացանկ»ի սպագբռութեան, «վճարելով ամբողջ ծախքը. Հայ Եկեղեցին ու ազգին օգտակար հանդիսանալու ջերմ փափաքով և գիտակցութեամբ»:

Իր մեծադիր էջերով (քիչ բացառութեամբ՝ երկասիւն), ուշագրունորակերտ տառերով, տոկուն թուղթով և մաքուր տպագրութեամբ, «Ծրուացանկ»ը յիրաւի կը հանդիսանայ արժանաւոր և անհրաժեշտ յաւելուած մը «Ազգապատում»ի մեծածաւալ երեք համարներուն:

«Ծրուացանկ»ը շունի ցանկ նիւթոց մը: Տիրապոսաթերթին կը յաջորդէ սրտաբուխ ձօն մը երկասիրողին առ Տ. Մազաքիա Արքեպիսկոպոսս Օրմանեան: Զօնը, որուն կը հետեի Օրմանեանի է. Պոլիս գանուող մահարձանին դամբանագիրը, կը գրաւէ ամբողջ էջ մը: Ուրիշ էջ մը յատկացուած է զրքին մէջ զործածուած համառօտագրութեանց: «Ծրուացանկ»ը իրարմէ անջատ երեք բաժիններ ունի: — Ա. մասը՝ Անձնանուններ, Բ. մասը՝ Տիկանուններ, Գ. մասը՝ Զանազաններ: Իւրաքանչիւր մաս նախորդող էջերէն անջատուած է թանձր գունաւոր թուղթով մը որ կը ծանուցանէ սկզուղ մասի վերնագիրը: Իւրաքանչիւր մասի վերջաւորութեան աւելցուած է եւրոպական անուններու համառօտ ցանկ մը: Այս բաժիններու մէջ անունները պարզաբէս յդուած են հայկական տառադարձութեան ձևերուն, արուած ըլլալով որ Օրմանեան օտար անունները միշտ Հայերէն և հայկական տառադարձութեամբ յիշած է «Ազգապատում»ին մէջ:

Գրքի վերջաւորութեան ութ էջ յատկացուած է «Ազգապատում»ի առաջին և երկրորդ հատարակութեանց վրիպակներուն: Երկրորդ տպագրութիւնը լոյս աեսու 1959 ին Պէյրութ, Լիբանան: Հուսկ ուրեմն, զրքին վերջին էջը կը հանդիսանայ նոյնինքն «Ծրուացանկ»ի մէջ սպագած տպագրական վրիպակներու ցանկ մը:

* * *

«Ծրուացանկ»ի երեք մասերը նոյն ծաւուը շունին: Յառաջարտնին մէջ հեղինակը Գ. Մասին (որ ութ էջէ կը բազկոնոյ) շուրջ կ'ընէ հետեեալ գիտողութիւնը: «Երբորդ մասը կը կարօտի լրացումի, ընդգրկելու համար ուրիշ ընդհանաւոր նիւթեր և՛ Հայաստանեայց Եկեղեցւոյ վերդապետական, ծիսական, վարչական ու այլ երեսներուն վերաբերեալ: Անձնանուններու և անդանուններու ցրուացանկը անյապազ

հրամարքելուած տեսնելով՝ ցանկութիւնը զգաց յայտնած էն երկարիբարին բարեկամները, պատճառ եղած է որ Հոյք Տիրույր ժամանակ չունենալ ամբողջացնելու Գ. Մասր:

Ա. Մասր՝ Անձնանուններ, որ գրաւած է 270 երկուիւն էջ, մի քանի օրինակներով կրնոյ գաղափար մը տալ հեղինակի սպահի պրապառանին բոլ ժամանակ Առնենք Ալի անունը Եթշուած են 19 Ալիներ, Մուհամմէտի փեսայ և խոլիքա Ալին մինչև Ժ. գրաւած Օսմանեան եղափառոս Ալի փոշան: Ալի Շահնպակի մը կը հանգիստինք այս ցուցակին մէջ, որ Կարապիտ առունին յգուելով կը յայտնաբերէ իսլամացած Շահնպակին կարապեաը որ գրաւած է Ալի Շահնպակ (Ժ. Պար), կոն 42 Գորդիկներ, 135 Գևորգներ, որոնցմէ կ. Պոլսեցի Քէրէստէնեան (Գէսրգ. Գ. Կաթողիկոս) գրաւած է ամբողջ սիւնակ մը, իրեն առնչուած եղելութեանց նիւթերու 17 ենթաբաժանումներով: Նոյնպէս, Գրիգոր Լուսուարիչէն մինչև Գրիգոր Օտեան «Ազգագատառմ»ը յիշուած է 288 Գրիգորներ: «Յրուացանկ»ի հեղինակը լոկ չէ ցանկագրած և «Ազգագատառմ»ի յօդուածներուն յղած այս Գրիգորները: Առնոնցմէ կաթողիկոս, պատրիարք կամ առաւածաբառն հանդիսացող նշանաւոր Գրիգորները յիշուած են իրենց առնչուող եղելութեանց և նիւթերու ստորաբաժանումներով: Այսպէս: Ս. Գրիգոր Լուսուարիչ Պարմե գրաւած է երկու սիւնակ, 36 ենթաբաժանումներով (զոր օրինակ՝ Տիսիլք և Էջմիածնի տաճարը, իր ձեռնադրութիւնն ի կեսարիո և իրանագլուխութիւն Հայ Եկեղեցւոյ, Աջը): Կան տակաւին 22 Կամիկներ, և 115 Կամիրներ, և տառնցմէ Ժ. Պարու սկիզբները իրենց ժաման ի Մայր Աթոռ լուրջ մտահոգութիւն պատճառապ Դանիէլ Սուրբանեցի և Դաւիթ Լուկէթցի կաթողիկոսները սրկուական սիւնակ գրաւած են, իրենց համ կապուած տիսուր եղելութեանց ժաման բազում մտահոգութիւններով: Կարապիտները 129 հատ են: Հայեր, Հայք, Հայութիւն վերնագրին տակ կայ 9 սիւնակ լիցնող զանազան նիւթերու ցանկ մը՝ ինչպէս Հայ Եկեղեցւոյ նուիրապիտութիւն և Աթոռներ – Սիս, Ազթամար, Երուսաղէմ և կ. Պոլիս. Հայ Եկեղեցւոյ և Հայ պետական յարտերութիւններ, Հայեր ի լեհաստան, ևն. Աղքերջառէս կոն 14 Մարտիններ որոնցմէ Օրմանեան իրը 1890 ական թուականներէն մինչև 1908ի Օսմանեան Մահմանագրութիւն կորենոր գիրք և գիր աւնեցող զեկովար մը, գրաւած է ամբողջ սիւնակ մը:

«Յրուացանկ»ի Բ. Մասր՝ Տիգանուններ, կը գրաւէ 90 էջ: Երեւան, որ Օրմանեանի ողջութեան չէր այն մնե և գրաւիչ քաղաքը որ է ներկայիս, այդուհանութերձ կը լիցնէ մէկ սիւնակ վեց ենթաբաժանումներով: Երևասպիմը իր ժաման խօսեցուած է 3 սիւնակ լիցնելու տարիման, 15 ենթաբաժանումներով (զոր օրինակ՝ Գրաւում զանազան իշխանութեանց կողմէ և քաղաքական խնդիրներ, Հայոց վանքի պարտքը, նուիրակները և հաշուական խնդիրներ, Հայոց Պատրիարքութիւններ, ժամանակցութիւնը Հայ Եկեղեցւոյ ու ազգային խնդիրներու, ժաղավանքներու, ևայլն): Եզրիածին լիցնուած է 4 սիւնակ, 21 ենթաբաժանումներով, իսկ կ. Պոլիս՝ 5 սիւնակ: Կ. Պոլսոյ գերը որպէս Բիւզանդական Կայսրութեան մայրաքաղաք, հաւաքավոյր զանազան եկեղեցական ժողովներու, տպա կեդրան Թրքահայոց Պատրիարքութեան և միաժամանակ մայրաքաղաք Օսմանեան թուրքիայ, կը բացարձէ այն ընդարձակ ահղը զար Օրմանեան տաւած է Արևմտահայութեան համար մնե նշանակութիւն ունեցող այս քաղաքին:

Տիրայր Մ. Վ.րդ. Տէրվիշեան «Յրուացանկ»ը կազմելու առթիւ աւելցուցած է 115 լուսանցքի նշումներ, կատարելու համար առնակններու ստուգում, ցոյց առլով ակնյայտնի սխալներ, և անորոշ կէտերու մասին ընելով հարցումներ կամ հնթաղութիւններ որոնք պէտք է հետաքրքրին բանասէրները:

Երանի թէ «Յրուացանկ»ի տպագրութեան առթիւ հեղինակը հոգ տարած ըլլուր իւրաքանչիւր Էջի վերե ակնրատն ձևով զետեղելու անունը որուն կը վերտարերի ձախ կազմի սիւնակին առաջին տաղը: Այս կերպով ուելի գիրքին պիտի ըլլուր գտնել փնտառուող անուն մը: Հեղինակին բժամանգիր և խղճամբար ըլլուրուն անձամբ ծանօթ եղողներ պիտի չզարմանան եթէ Հայր Տիրայր գործնական լուծում մը հրամցնէ այս թերին լրացնելու ուղղութեամբ:

«Յրուացանկ»ը մեծապէս պիտի գիւրացնէ աշխատանքը անոնց՝ որոնք «Ազգապատում»ը կարդացած ըլլուրով, կը մտագրեն ուսումնասիւրութիւն ընել որոշ գէմքի մը, եկեղեցական կեդրոնի մը կամ Հայ ժողովուրդի պատմութեան հետ կապ ունեցող շարժումի մը մասին:

«Յրուացանկ»ը պէտք է խթանէ հայոգիտական պրապառմներ կատարել փափաքողները դիմելու սկզբնական ազբիւրներուն՝ զորս օգտագործած և Օրմանեան «Ազգապատում»ը հեղինակելու ընթացքին: Անշաւշտ սկզբնական նոր ազբիւրներ աւելցած են Օրմանեանի վախճանումէն ի վեր, շնորհիւ մեծաւ մասումը Հայաստանի հմուտ բանասէրներու երկու սերունգներու աշխատանքին, 1918էն ի վեր:

Վերջապէս, «Յրուացանկ»ը պէտք է քաջալերէ ընթերցասէր Հայերը, հոգեսորական թէ աշխարհական, ձևոք անելու «Ազգապատում»ը և զայն ծայրէ ի ծայր կարգութու, եթէ տակաւին չեն ըրած ոյզ:

Կը մնայ հայուխօս Հայորդիներու՝ ի ծայր երկիր Հայաստան և ի սիրելու, երախտապարտ ըլլուր և շնորհակալութիւն յայտնել Տ. Տիրայր Մ. Վ.րդ. Տէրվիշեանին, Հայ մատենագրութեան ընծայած ըլլուրուն այս անհրաժեշտ մատեանը, ի գին իր աշքի լայօին, ի գին զանց ըրած իր բազում արձակուրդներուն:

Վարձքդ կտար և գրիչդ գտլոր, Հայր Տիրայր:

ԱՐՏԻՆ Ա. ՔՀԵՅ. ԱՇՃԵԱՆ



ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԸ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ

Նախորդ տարիներուն նման, այս տարուան Յաւնուար ամսուան վերջին երկու կիրակիներուն միջն ինկող շաբաթը (Յուն. 22-23) նկատուած էր իրար Եկեղեցիներու Միութեան Եօթնեակ, Ութ օրերու ընթացքին տեղի ունեցան 10 հաւաքայթներ, ամէն երեկոյ Ա. Քաղաքին տարբեր յարանուանութեանց պատկանալ եկեղեցիներէն մէկուն մէջ, իսկ զոյգ կիրակիներուն զոյգ հաւաքայթներ:

Կիրակի, 22 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 9ին, Ֆրանչիսկիան-ներու Ա. Փրկիչ Մայր Եկեղեցին մէջ մատուցուած Ա. Պատարագի ընթացքին, Լատին համայնքի սորբնափր Հովի Հոյքը Ճօրծ Ապու-Ապէկն բացումը կատարեց հանդիսութեանց, խօսելով Եկեղեցիներու մերձիցման և համագործակցութեան անհրաժեշտաւթեան մասին մանաւանդ քրիստոնէութեան կեդրոն այս սստանին մէջ, ուր սակայն գմբախտաբար փոքրամասնութիւն մը կը կազմեն քրիստոնեաներ, Բարոզի վերջաւարութեան ըստու — «Աշխարհի բոլոր մասերուն մէջ Եկեղեցիներու Միութեան Եօթնեակի սամանուած օրերն են Յաւնուարի 18-25ը։ Սակայն, որովհետեւ մէր Հոյ եղբայրները Մնանդը Յաւնուարի 19ին կը տօնեն, եօթնեակը կը կատարուի քանի մը օրերու յատազումով»։ Ան բազմանք յայտնեց որ մօտ ապագային քրիստոնեայ համայնքներ համաձայնութեան գան գէթ մէր կրօնքին երկու մնագոյն տօները՝ Ա. Զատիկը և Ա. Մնանդը միասին տօնակատարելու համար։

Նոյն երեկոյ ժամը 4ին, Շմիթ Աղջկանց Դուէճի ընդորձակ օրանը կը յորդէր ամենաոզգի հաւատացեալներու բազմութեամբ։ Ուրիշ տարիներուն նման, կրօնական համերգ մըն էր կատարուածը։

Երկու ժամերու ընթացքին յաջորդաբար հանդէս եկան Յոյներու, Հոյերու, Ֆրանչիսկիան Հայրերու, Լաւահերականներու և Ֆրէրներու Վարժարանի երգչախումբերը, ներկաներուն հրամցնելով կրօնական երաժշտութեան նմուշներ, Հոյերը միակն էին որ կրօնականին (առաւելաբար Ա. Մնանդեան մեղեդիներ՝ երգուած զեկովարութեամբ Ա. Աթոռոյ Դպրագեա Պրն. Սահակ Գալոյանեանի) քովն ի վեր հանդէս եկան աշխարհիկ կառներով։ Ա. Աթոռոյ երկոսո երգչախումբի անդամներէն Պրք. Ալեքս Գալոյանեան և Յավհաննէս Պետրոսեան մնաներգեցին։ Իւրաքանչիւր կառի համար անգլերէն լեզուով հորկ եղած բացատրութիւնները տուած Հոգչ. Տ. Հայկագուն Արդ. Մելգոնեան, Բոլոր ելոյթները, բայց մանաւանդ հայկականները, որժանացան ներկաներու որոտնդոստ ծափահարութիւններուն։

Յաջորդ օր, Երկուշաբեմի, 23 Յունուար, կէսօրէ հաք ժամը 4ին, Ա. Հրեշտակապեաց Եկեղեցին լեցուն էր արգէն զանազան յարանուանութիւններու պատկանալ եկեղեցական թէ աշխարհնեական հաւատացեալներով։ կէս ժամ ակող հաւաքայթի ընթացքին կատարուեցան Հոյց. Եկեղեցւոյ Ճաշու ժամերգութեան տղօթքներ և Ա. Գրական ընթերցոււմ -

ներ, Երեկոյթը բացաւ Անկլիքան Արքեպիսկոպոս Գերշ. Ֆայէք Համատոսա, Տէրունական ազօթքի որածուանութեամբ: Հապէշ վարդապետ մը եթովդերէն լեզուով կարդաց Պօղոս Առաքեալի Թուղթերէն հատուած մը, իսկ Ֆրանչիսկան Հայր Խկնազի Մանչինի՝ Քրանսերէն լեզուով Աւետարանական ընթերցաւած մը: Հայերէն լեզուով ընթերցումները կատարեց Հոգչ. Տ. Ասպետ Արզ. Պալեան: Հաւաքոյթը փակուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպօ. Աձէմհանի օրհնութեամբ:

Երեքաբթի, 24 Յունուար, երեկոյիան ժամը 5 ին, երկոթուղիի կայարանին մօտը գտնուող Սկովական Ա. Անդրէաս եկեղեցիին մէջ էր հաւաքոյթը: Առաջին տարին էր որ յիշեալ եկեղեցիին մէջ կը կատարուէր նման արտորովութիւն մը: Հոն փութացած էին զանազան յարանուունութիւններէ ներկայացուցիչներ, որոնց կարգին Հոգչ. Տ. Հայկազուն Արզ. Մելիքոնեան և Հոգչ. Տ. Բարսեղ Արզ. Գալէմտէրեան: Երայերէն, անգլերէն, արաբերէն և գերմաններէն լեզուներով կատարուած Ա. Գրական ընթերցումներէ ետք. Հունուացի Բողոքական Երէց Տքթ. Բուս Աքօնըզէլտ խօսեցաւ Եկեղեցիներու Միութեան գաղափարին շուրջ: Համայնքի Հոգիւ Վերապատռուելի Թօմ Հաւաթօն ըրու կորճ ազօթք մը, իսկ Լուսերականներու Երէցը՝ Փրօփոթ Հէլմութ կլոթթէ փակեց հաւաքոյթը իր օրհնութեան խօսքով:

Չարեքաբթի, 25 Յունուար, կէսօրէ ետք ժամը 4 ին, Բեթղեհէմի համբուն վրայ գտնուող Թօնթուրի էքսամէնիք կեղրոնի մատուաին մէջ էր հաւաքոյթը: Հակառակ փոթորկոտ օդին և վայրին հեռաւորութեան, հոն փութացած էր կոկիկ բողմութիւն մը ոյլուզն քրիստոնեայ յարանուանութիւններէ: Այդ օր մէր Անուանուկչութեան նախատօնակը ըլլալւն, Հայեր չմտուակցեցան գրեթէ ամբողջութեամբ Ա. Գրական ընթերցումներէ և հոգեար երգերէ բազկացած այդ հաւաքոյթին:

Հինգաբթի, 26 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3.30 ին, Աիսոն լեռան վերջին Ծնթրիքի վերնատան մէջ կայացաւ վեցերորդ հաւաքոյթը Եկեղեցիներու Միութեան: Կատարուեցան ընթերցումներ Հին և Նոր Կտակորաններէն: Յոյն-Լութոլիկ Ակեղեցիի երկուու երգչախումբը հանդէս եկաւ կրօնական երգերով: Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս կատարեց փակումը երեկոյթին:

Ուրբաթ, 27 Յունուար, երեկոյիան ժամը 5 ին, Ֆրանչիսկաններու Մայր Եկեղեցին լիցուն էր հոգեարական և աշխարհական գէմքերով: Մէկ ժամ անող ապաւորիչ հանդիսութեան մը ընթացքին, կարգացաւեցան Ազգմունիք և եղան քանի մը լեզուներով Ա. Գրական ընթերցումներ: Համայնքի Հոգիւ Հայր Ճօրծ խօսք առնելով շեշտեց այն բարիքները՝ զորս քրիստոնեայ համայնքներ պիտի ստանան իբրև պառզը համագործակցութեան ու մերձեցման: Համբաւաւոր երգեհոնահար Օկիւաթին Լուսու ներկաները ոգեառեց իր նուազած հոգեար երաժշտութեան կառներով:

Շաբաթ, 28 Յունուար, կորգը եկած էր Յոյն-Օրթոսոքս համայնքին, որ ամենէն բողմամարդը կը Անկառաւի Ա. Երկրին մէջ: Կէսօրէ ետք ժամը 4 ին, Յունուաց Պատրիարքորանի ճամբուն վրայ գտնըւող Ա. Նիկողայոս Աքանչելազործ Հայքապետի անունը կրող վանքի գողարիկ Ակեղեցին լիցուն էր հաւատացելուներով: Մէկ ժամուն ընթացքին ներկաները ունկնդրեցին Բիւզանդական Եկեղեցիի Կիրակմուտքի ժամերգութեան հոգեզմայլ մեղեդիները և դիտեցին հոցօրհնէքի արա-


բազմութիւնը։ Հայր Մելիքանն անգլերէն լեզուով արտայայտաւեցաւ վերաշին տասնամեակներն ընթացք առած ու ծուալած էքումէնիք շարժումին մասին։

Կիրտկի, 29 Յունուար, ֆակտան օրն էր Եօթնեակին, Կէսօրէ տառջ ժամը 11ին, Ֆրանչիսկեաններու Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Մարոնիթ ծէսով Ա. Պատարագ։ Պատարագեց և քարոզեց Ա. Երկրի Մարոնիթ փաքրաթիւ համայնքի հովիւը։ Հայր Օկիւսթին Հարֆուշ, յորդորելով ոչխարհուկանները սրպէսդի իրենց կարելիութեան սահմանին մէջ զօրոզդիդ կանգնին հոգեսորականներուն՝ Եկեղեցիներու Միութեան բազմալի երազի իրազործման համբուն վրայ։

Փակման հաւաքոյթը կատարաւեցաւ նոյն երեկոյ ժամը 6ին, Անկլիքտաններու Աէյնթ ձօրձ եկեղեցիին մէջ։ Հակոսուկ վայրին հնուառութեան, բազմութիւն մը փութացած էր լեցուէ եկեղեցին։ Մեր Կողմէ ներկայ էին դարձեալ Հոգէ. Տ. Տ. Հայկազուն և Բարսեղ Արեգանները; Անկլիքտան Արքեպոս. Գերէ. Տ. Յոյէք Հաստատ և Արտր-Լուտերականներու Երէց Տոռւա Հաստատ ըրին մասնաւոր ազօթքներ, Եկեղեցիներու Միութեան համար։ Արտազրաւ էր պահը երբ այլազոն համայնքներու պատկանող հաւաքացեալներ ծնրազիր արտասանեցին քրիստոնեայ Եկեղեցիներու «Հաւաքատմք»ը և քիչ ետք Տէրունական Ազօթքը՝ իւրաքանչիւրը իր մայրենի լեզուով։

Դ.





* կիր. 1 Յուն.— Ս. Պատրիարք մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մէր մատուռին մէջ։ Ժամարարն էր Հոգլ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

* Դէ. 4 Յուն.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց չքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ պաշտուած հանդիսաւոր նախատօնակին եւ ապա թափօրով եւ «Օրէնեցէք զԾէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան։

* Եշ. 5 Յուն.— Ս. Դաւիթի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեդրայր առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Արքունոյ Երուսաղէմի)։ Հոստ սովորութեան, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, առաւոտեան ժամերգութեան ընթացքին, շուրջառ եւ ևմիսարոն առնելով բարձրացաւ Տեառնեզրոր Աթոռի պատուանդանին, ուր ժամերգութեան աւարտին ընդունեց Միաբանութեան շնորհաւորութիւններ։ «Քը իսոտոս Աստուած մէր» մաղթանքի ընթացքին, Լուսարարակետ Գեր։ Տ. Հայրիկ Արքեպօս. Ասպանեան մաղթանքներ ըրաւ Ն. Ամենապատութեան արեւշտութեան եւ բարօր ու երկար զահակալութեան համար։ Նոյնը ըրաւ օրուան պատարագէր՝ Գեր։ Տ. Շահէ Արքեպօս. Ամէմեան, որ նաև ուղղակի ըրաւ երկու տօնելի սուրբերու կեանքին, առաջինին քաղաքական, իսկ երկրորդին բարոյական ու Հոգեւոր մարգին մէջ արձանագրած յաջողութիւններուն։ Քարոզէն ետք, Լուսարարակետ Միաբանը նախագահեց Ս. Աթոռի հանդուցեալ Պատրիարքներու Հոգիներուն համար կատարուած մասնաւոր պաշտամունքին։

* Աւր. 6 Յուն.— Ս. Ստեփանոսի հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախադասէց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը։ Տօնին բուրժապահէիր վարդապետներն էին Հոգլ. Տ. Աւեան Վրդ. Դարիսկեան և Հոգլ. Տ. Ասպետ Արդ. Պայեան։

* Շր. 7 Յուն.— Ս. Ստեփանոսի նախավկային։ Առաւոտեան ժամերգութեան ընթացքին, ըստ սովորութեան, կատարուեցաւ սարկաւագներու մասնաւոր հանդէօր, նախադասէութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր։ Անոնք, Յարկաւագներ եւ ուրարակիրներ, մարգարտազարդ սաղմաւրտներով եւ տարակաւակ ու բուրժան ի ձեռին, կատարեցին ժամերգութեան երկրորդ բաժէնը։ Ազա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Ստեփա-

նոսի սեղանին վրայ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Սեւան Վրդ . Ղարիսկեան :

* Կիր . 8 Յուն . — Ա . Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա . Յովհ . Վարտապետի խորանին վրայ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Բարսեղ Արդ . Գալէմ-սէրեան :

— Գլխաւոր առաքելոց՝ Պետրոսի եւ Պօղոսի հանդիսաւոր նախատօնակին ի Ա . Յակոբ նախագահց Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեան :

* Բջ . 9 Յուն . — Ա . Ալաքելյան Պետրոսի եւ Պօղոսի : Ա . Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա . Պետրոսի վերնամատուուին մէջ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Վահան Վրդ . Թօփալեան :

— Որդւոց Որոտման հանդիսաւոր նախատօնակին ի Ա . Յակոբ նախագահց Գերշ . Տ . Շահէ Արքեպոս . Աճէմեան :

* Գջ . 10 Յուն . — Տօն Ա . Որդւոցն Որոտման Յակոբայ առաքելոյն ի Յուլիանու աւետարանին : Օրուան հանդիսաւոր Ա . Պատարազը՝ Մայր Տաճարի Ա . Գլխադրի մատուուին մէջ մատոյց եւ առա , ամպհովանիի ներքեւ եւ կենաց Փատոսի մատունքն ի ձեռին , Մայր Տաճարին մէջ կատարուած երրադարձ մեծահանդէս թափօրին նախագահց Գերշ . Տ . Շահէ Արքեպոս . Աճէմեան :

* Եր . 14 Յուն . — Նոր Տարի (1978) , Կաղանդ , ըստ Հիմ Տումարի եւ Ա . Քարունի հայրապետին : Կէս զիշերին , Մայրավանքի մեծ զանգը ուրախ գանդիւնչութիւնում կատարէ կամաց Տարիին :

Առաւոտուն , Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Ա . Պատարազ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Գէորգ Վրդ . Նազարեան : Ազա , «Ուրախացիք պսակ կուսին» շարականը երգելով Միաբանութիւն եւ ժողովուրդ թափօրութարձրացան Պատրիարքարան , ուր Ն . Ամեն . Ա . Պատրիարք Զօր ուղղուած որոտարուի ուղերձ մը արտասանեց Ա . Թարգմանչաց Վարժարանին փոքրիկ մը , ծաղկեցիւնչ ի ձեռին : Ն . Ամենապատուութիւնը խօսք առնելով մաղթեց որ ծագող տարին խաղաղութիւնը երբէ խոռվայրյա այս աշխարհին , եւ իրականացրնէ այն լոյսերը՝ որոնք խաղաղութեան արշալոյս մը աւետել փորձեցին : Յետոյ , ըստ սովորութեան , մէկական նարինջ բաժնեց բոլորին :

* Կիր . 15 Յուն . — Ա . Պատարազը մատուցուեցաւ Ա . Յարութիւն , Վերնատան մեր մատուուին մէջ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Առուրէն Վրդ . Յուգակիմեան : Ա . Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը Ա . Հաղորդութիւնը ըստացաւ :

* Գջ . 18 Յուն . — Ճրագալոյց Ա . Նենիկեան : Առաւոտեան Ժամը 10ին , Ամեն . Պատրիարք Ա . Զօր զիխաւորութեամբ , Միաբանութիւնը ինքնաշարժներու շարժնով մը ճամբայ ելաւ Մայրավանքի դռնէն զէպի Ա . Նենիկեան քաղաքը՝ Բէթղեհէմ : Ճամբու կէսին , Յունաց Ա . Եղիա վանքին զիմաց թափօրը կանդաւ , ուր զիմաւորութեան եկած էին Բէթղեհէմի եւ շրջակայքի քաղաքական կարգ դադարէ մը եւ պատուասիրութենէ ետք , հեծելագօրաց առաջնորդութեամբ , թափօրը շարունակեց իր ճամբան եւ Ժամը 11ին հասաւ Ա . Մընդեան հրապարակը որ լեցուն էր ժողովուրդի բազմութեամբ : Արիներու եւ արենոյներու խումբեր , հայ թէ օտարազգի , արդէն իսկ կը առզանցէին հրաւարակին յայնքին եւ երկայնքին : Ժառանգաւոր սաներ եւ զպիրներ «Խորհուրդ» մեծացի երգեցողութեամբ առաջնորդեցին ն . Ամենապատուութիւնն ու Միաբանութեան անդամները մեր վանքը , որու Տեսչարանին մէջ օտար հիւրերը պատուասիրուեցան :

— Կէսօրէ ետք ժամը 2·30ին , Ամեն . Պատրիարք Ա . Զօր զիխաւորութեամբ , կատարուեցաւ «Հրաչափառք» հանդիսաւոր մուտք Ա . Մննդեան Տաճար : Ա . Այրի ուխտէն ետք , Տաճարի հայկական բաժնին մէջ կատարուեցան ձաշու եւ

երեկոյեան ժամերգութիւններ : Ծննդոց եւ Մարգարէութիւններու Գիրքերու ընթերցումներէն ետք, ձրագալոյցի Ս . Պատարազ մատուցուեցաւ Ս . Ալրին մէջ : Ժամերարն էր Հողէ . Տ . Ասպետ Արդ . Պալեան : Ապա , Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեանի գլխաւորութեամբ կատարուեցաւ Ս . Ծննդեան նախատօնակ , որմէ ետք Միաբանութիւն եւ զպիրներ «Խորհուրդ մէծ» երգելով եւ անցնելով Տաճարի սիւնազարդ զաւիթէն՝ բարձրացան Ս . Ծննդեան Հայավանաբարձր , որու բակին մէջ կատարուած Ս . Աւետարանի ընթերցումէն եւ «Փառք ի բարձրնոսիք երգեցողութենէն ետք բոլորն ալ նստան ընթրիքի :

— Գիշերուան ժամը 10ին , Ս . Ծննդեան Տաճարի Հայկական զանդերու խորհուրդ զօղանիքը ուրքի Հանած է արդէն բոլորը եւ կէս ժամ ետք ընթացք կ'առնեն դիշերային եւ առաւօտեան պաշտամունքները Տաճարի Հայկական բաժնին մէջ :

* Եշ . 19 Յուն . — ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՑԱՑՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՄԻՆ ՄԵՐՈՅՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ : Կէս գիշերին , Ամեն . Պատրիարք Ս . Հօր Վըլիաւորութեամբ , Միաբանութիւնը իջաւ Ս . Ծննդեան Այրը , ուր կատարուած արարողութիւնները , մէկ ժամուան տեսողութեամբ , ճայնասփռուեցան իսրայէլեան ուստիոկայանէն : Այդ միջոցին Ն Ամեն . Պատրիարք Ս . Հայրը տուաւ Համայն Հայութեան ուղղուած Ս . Ծննդեան իր պատզամը , որ կ'երեւի Ախուսի ներկայ թիւին մէջ : Սոյն արարողութեան ներկայ գտնուեցան Երուսաղէմի եւ Բեթղեհէմի վահմ . Քաղաքապետները , Բեթղեհէմի Զին . Կառավարիչը , Գերսանական Դեսպանը եւ այլ բարձրաստիճան հիւրեր , որոնք ապա չնորհաւորեցին . Ամենապատուութիւնը եւ մեկնեցան : Ասկէ անդին մատուցուեցան զոյզ պատարազներ , առաջինը Տաճարի Հայկական բաժնին մէջ , Հողէ . Տ . Հայկապուն . Արդ . Մելգոննեանէ , իսկ երկրորդը Ս . Ծննդեան Այրին մէջ՝ Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեանէ , որ եւ նախազահեց զոյզ պատարազներու միջեւ կատարուած «Քրօրհնէք» Հանդիսաւոր արարողութեան : Առաւօտեան դէմ , արարողութեանց աւարտին , Միաբանութիւն եւ զպիրներ , երէկուան նման , «Խորհուրդ մէծ» շարականի երգեցողութեամբ սիւնազարդ զաւիթէն անցնելով բարձրացան Ս . Ծննդեան Հայավանքը , ուր Ս . Աւետարանի ընթերցումէն ետք բոլորն ալ նստան նախաճաշի :

Ինչպէս երէկուան ձրագալոյցին , այսօրուան պատարազներուն ալ իր մասնակցութիւնը բերաւ Ս . Յակոբեանց Երգչախոսումը , ղեկավարութեամբ Ս . Աթոռափ Դպրամետ Պր . Աւհակ Գալայճեանի :

— Կարճ զաղարէ մը ետք , Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեանի գլխաւորութեամբ , Միաբանութիւնը ճամբար երաւ դէպի Երուսաղէմ , ուր Հասաւ ժամը 8-ին եւ «Խորհուրդ մէծ» շարականը երգեցողութեամբ բարձրացաւ . Պատրիարքարան :

— Իսկ Երուսալիմի մէջ , ձրագալոյցի արարողութիւնը կատարուեցաւ Ս . Յարութեան Տաճարին մէջ , Քրիստոսի Ս . Գերեզմանին առջեւ : Իսկ Ս . Պատարազը Ս . Գերեզմանին վրայ ժամուց Հողէ . Տ . Ասկի Արդ . Որդիքեան : Ս . Ծննդեան նախատօնակին նախազահեց Տաճարին Տեսուչը՝ Հողէ . Տ . Վաղարչ Վրդ . Խաչատուրեան :

— Իսկ Ս . Ծննդեան առաւօտուն , ժամը 5ին , Մայր Տաճարին մէջ պաշտուեցան զիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ : Ս . Պատարազը Աւագ Սեպանին վրայ ժամուց , ըստ սովորութեան , Ս . Հրեշտակապետաց վանքի Տեսուչը՝ Հողէ . Տ . Աւեան Վրդ . Պարիպեան : Լուսաբարապետ Գերշ . Տ . Հայրիկ Արքապու . Ասլաննեան նախազահեց «Քրօրհնէք»ի սրտապրաւ արարողութեան :

— Կէսօրէ ետք , Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատօնակին նախազահեց Գերշ . Տ . Շահէ Արքեպս . Աճէմեան :

* Արք. 20 Յուն.— Յիշատսկմեռելոց: Բառ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարզմանի՛ Հոդը. Տ. Վահան Վրդ. Թօփայեան: Յետու: Կատարուեցաւ Հոգեհանդասութեան պաշտամունք՝ նախագահութեամբ Լուսարաբագետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի:

* Շր. 21 Յուն.— Գ. օր Նենդեան: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Գլխագորի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոդը. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան:

* Կիր. 22 Յուն.— Դ. օր Նենդեան: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոդը. Տ. Վահան Վրդ. Թօփայեան:

* Դ. 25 Յուն.— Նախատօնակին ի Ա. Յակոր նախագահց Գերշ. Տ. Շահէ Արքական. Աձէմեան:

* Եշ. 26 Յուն.— Տօն Ամուանակոչութեան Տեան: Առաւոտեան ժամը 8.30-ին, Գերշ. Տ. Շահէ Արքեանս. Աձէմեանի զիխաւորութեամբ, Միարանութիւնը «Հրաշակառապով մուտք զործեց Ա. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Հանդիսապետ Սրբազնը մատոյց օրուան Հանգիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ և Ա. Հաղորդութիւնտուաւ Ժառանգաւոր սաներուն: Վահագի վերադարձին, Հայոց թաղի մուտքն, «Լոյս ի լուսոյք շարականի երդեցողութեամբ, Միարանութիւնը յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարանի դահնիճը, ուր Ամեն. Պատրիարք Ա. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տրնօրհնէքը»ի արարողութիւն: Օրհնուեցան Ա. Աթոռի բարիքները և երդուեցան Մինդեան և Մկրտութեան շարականներ: Յետոյ, Ժամօրհնող Հոդը. Տ. Յովուի Վրդ. Մամուրի զիխաւորութեամբ, թափօրը մեկնեցաւ վանքի սեղանատուն ու խոհանոցը, ուր ևս կրկնուեցաւ նոյն արարողութիւնը և ի միջի այլոց օրհնուեցաւ օրուան յատուկ հերիսայի աւանդական ճաշը:

* Արք. 27 Յուն.— Յովիշ. Կարապետի ծննդեան Հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լուսարաբագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեան. Ասլանեանի:

* Շր. 28 Յուն.— Տօն Նենդեան Սրբոյն Յովիհաննու Կարապետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին աջակողմբ զանուող Ա. Յովիշ. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոդը. Տ. Գեղարդ Արդ. Տաւուալյարեան:

* Կիր. 29 Յուն.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոդը. Տ. Բարսեղ Արդ. Գալէմաէրեան:

* Կիր. 4 Փետր.— Ա. Հայրապետացն՝ Արամասի և Կիւրդի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխագիր: Ժամարարն էր Հոդը. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 5 Փետր.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոդը. Տ. Վահան Վրդ. Թօփայեան:

* Շր. 11 Փետր.— Ա. Գրիգորի Աստուածարանին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխագիր: Ժամարարն էր Հոդը. Տ. Աթուրէն Վրդ. Յովիակիմեան:

* Կիր. 12 Փետր.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոդը. Տ. Ասպետ Արդ. Պալւան:

* Շր. 18 Փետր.— Ա. Որդուց և Թոռանց Ա. Գր. Լուսաւորչին մերոյ: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխագիր: Ժամարարն էր Հոդը. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան:

* Կիր. 19 Փետր.— Բարեկենման Առաջաւորի պահոց : Ա . Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ : Ժամարարն էր Հոգէ . Տ . Հայկազուն Արդ . Մելքոնեան :

— Եսոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ եւս մատուցուեցաւ Ա . Պատարագ : Ժամարարն էր Հոգէ . Տ . Մանուէլ Արդ . Երկաթեան :

* Ուր. 24 Փետր.— Ծիշասոկ Յովինանու մարգարէին : Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Ա . Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Յովինանու մարգարէութեան զրքին ընթերցումը :

— Ա . Մարգսի նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ : Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ . Տ . Հայրիկ Արդ . Ասլանեան :

* Շր. 25 Փետր.— Ա . Մարգսի օրավարին : Ա . Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա . Մարգիսի մատուռին մէջ, որ Հնագոյն մասը կը նկատուի Մայր Տաճարին : Ժամարարն էր Հոգէ . Տ . Յովսէփ Վրդ . Մամուր : Ա . Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան Համաձայն, կատարուեցաւ Հոգէ Հանդսատեան պաշտօն՝ ազգային մեծ եւ Հանդուցեալ բարերար Գայուսու Կիւր պէնկեանի հօր՝ Մարգիսի Հոգւոյն Համար : Հանդիսարաբետն էր Հոգէ . Տ . Վահան Վրդ . Թօվիալեան :

* Կիր. 26 Փետր.— Ա . Պատարագը մատուցուեցաւ Ա . Յարութեան Տաճարի մերնատան մէր մատուռին մէջ : Ժամարարն էր Հոգէ . Տ . Սեւան Վրդ . Դարիկեան :

— Տեսանընդառաջի մեծահանդէս նախատօնակին եւ անոր յաջորդող առաջին «Անդաստան»ին ի Ա . Յակոր նախագահէց Լուսարարապետ Գերշ . Տ . Հայրիկ Արքեպիսկոպոս Ասլանեան :

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցէ»ի եւ Հնկման Ա . Մարարութիւններուն նախագահէց Գերշ . Տ . Կիւրեղ Եսոս . Գարիկեան : Հըսկումն էումէն ետք, Ժառանգաւորաց հին վարժարանի մարգադաշտին վրայ կը վտուէր Տեսոննդառաջի աւանդական կրակը :

* Բշ. 27 Փետր.— Տեսոննդառաջ : Օրուան Հանդիսաւոր Ա . Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Գերշ . Տ . Կիւրեղ Եսոս . Գարիկեան, անդրադառնալով մեր զարաւոր արիւնոտ պատմութեան թացքին Հայ մայրերուն կատարած նախախմամական դերին եւ կոչ ողողեց մեր օրիերու Հայ մայրերուն հետեւելու անոնց օրինակին, ազգային առողջ դիտակցութեամբ նոր սերունդներ հասցնելու Համար :

ՏԵՍՈՆ ԱՆՁԱՐԱԿ

ԱՆՁԱՐԱԿ ԱՐԱՐ

ԱՆՁԱՐԱԿ ԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅ ԱՆՁԱՐԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հօր ԾԱՇԵՐԵԱՆ Պատգամը	2
Ծնորհաւրագիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա.	
Ամենայն Հայոց Կաթողիկոսի Խորհրդական բառապահը և առաջնորդը Առաջնորդական Հայոց Կաթողիկոսի Խորհրդական բառապահը և առաջնորդը	4
Ծնորհաւրագիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Եւ Գարեգին Բ Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսի պատվավոր Առաջնորդական Հայոց Կաթողիկոսի պատվավոր	5
Ծնորհաւրագիր ՔԵՆԹԱՐԱՐՈՒԹԻՒՆ Արքային-Հայոց Հայոց Կոպոսին	6
Ծնորհաւրագիր Վանմ. Տիար Աւեք Մանուկյան միավորական հակածություն Արքային-Հայոց Կոպոսին	7
Կրօնից Խախարարին ուղերձը՝ քրիստոնեայի համայնքներու պետերուն	8
Սրբատառ Կոնդակ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա	
Ամենայն Հայոց Կաթողիկոսի	10
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
Յովհաննես Կոլոտ	14
Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կերպ. Կարչութեան նամակը՝ ղոկուած բոլոր Եկեղեցիներուն	15
Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելութիւնը Փրանսա	
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
Մովսէս ՔԻԾ. Արծկեցի	26
Աստուածաշոնչ Մատեանի Հայկական Բնագիրը	
Հայ Գրերի Գիտի Վերաբերեալ Վ. Արեւելցու մի քանի Հաստատումների Ծովք	28
Վարդան Արեւելցին Շարականագիր Եզրի Անկանոն Գիրքի մասին Երկու նոր գիտեր	45
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՎԱՆՔԵՐ	
Ամրտոլու Վանք	48
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
«Յուցակ Միջնադարեան Հայերէն Զեռագիր- ներու Ամերիկայի մէջ» (Աւետիս Սանճեան)	54
«Յրուացանկ Ազգապատումի յատուկ անուց- ներու» (Տիրայր Ծ. Կրդ. Տէրվիշեան)	61
Եկեղեցիներու Միութեան Եօթնեակը Երուաղեմի մէջ	65
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ	
Եկեղեցականց - Բեմականց	68
Բովանդակութիւն	72
	75
	80